


Family life  
here of 1842 and the  
here of 1842 and the  
up. "

657

7-19



ԱՆԳՐԿՈՎԿԱՍՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՑԵՎ  
Հ Ա Շ Վ Ա Յ Ի Ն  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
Հ Ե Ռ Ա Կ Ա  
Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ

ՅԱ. Մ. ԳԱԼՊԵՐԻՆ  
OCT 2010

ՀԱՇՎԵԿՉՈՒԱՅԻՆ  
ՀԱՇՎՈՒՔԻ  
ՀԻՍՔԵՐԸ

Պ Ր Ա Կ 11

Handwritten text on a torn piece of paper, possibly a library stamp or note.

ՀՐԱՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԱՆԳՐԵՆՖԻՆԱՆՍՏԻՏՈՒՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 2

13 MAR 2013

01 OCT 2010

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՑԵՎ  
Հ Ա Շ Վ Ա Յ Ի Ն  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
Հ Ե Ռ Ա Կ Ա  
Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ

ՅԱ. Մ. ԳԱԼՊԵՐԻՆ

657 <sup>սվ</sup>  
9-19

ՀԱՇՎԵԿՇՈՒԱՅԻՆ  
ՀԱՇՎՈՒՔԻ  
ՀԻՄՔԵՐԸ

100F  
30131

Պ Ր Ա Կ II

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆ  
ԱՆԴՐԶԵՌՖԻՆԱՆՍԻՏՈՒՏԻ



1932

ՊԵՏՅՐԱՅԻ ՅՊԱՐԱՆ  
ԳԼԱՎԼԻՏ 7173 (Բ)  
ՊԱՏՎԵՐ 590  
ՅԻՐԱԺ 700

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Գալպերիճի «բալանային հաշվառման հիմունքներ» ձեռնարկի նոր հրատարակության ուշանալու պատճառով, մենք հարկադրված ենք առլ հնուակա դասընթացների ունկնդիրներին այդ գրքի առաջին հրատարակության ոուսերեն հրատարակությունը:

Առաջին հրատարակության մեջ Գալպերիճը մի շարք մեթոդոլոգիական և քաղաքական սխալներ է թուլլ աղել: Հեղինակը, իր հայտարարություններ, նախապատրաստում է այդ աշխատության 2-րդ վերամշակված հրատարակությունը: Պիտի ասել, վոր շնարած մի շարք մեթոդոլոգիական և քաղաքական սխալները, Գալպերիճի գիրքը այնուամենայնիվ, շատ աղելի հաջող, քան գոյություն ունեցող մյուս դասադրքերը, լուսաբանում է բալանային հաշվառման հիմնական հարցերը:

Ունկնդիրների համար դեպի Գալպերիճի «բալանային հաշվառման հիմունքներ»—քննադատական վերաքերմունք ունենալը հեշտացնելու նպատակով, ցածու. մենք դեանդում ենք հեղինակի «սոցիալական հաշվառման» ամսագրի (№ 1 1932 թ.) խմբագրությանը ուղղած նամակը, վորի մեջ նա իր սխալների քննադատական գնահատականն է տալիս: Ինքնատին

Սրբագրեցին՝ Գար. Հակոբյան ՈՈ. Դասարոյան

քլան հասկանալի յե, վոր այդ նամակում հեղինակը չի տալիս իր բոլոր սխալ դրուլթները ծավալուն քըն-նադատությունը, բայց և այնպես նա շատ բան է տնում այդ ուղղությամբ:

Միասնական սոցիալիստական հաշվառման Մարքս — Լենինյան տեսության համը ալաջբարը ամենասկի-տուալ, առաջնակարգ խնդիրն է, ուստի և մենք պիտի ամենասուր կերպով դրսեվորենք և հարվածենք այն բոլոր սպորտունիստական խեղաթյուրումները: Վորոնք թափանցում են միասնական սոցիալիստական հաշ-վառման խնդիրների տեսական լուսաբանության մեջ, և արգելում ժահվան դատապարտված գասակարգե-րի դիմադրությունը՝ իդիոլոգիական ֆրոնտում:

Գալպերինն ակտիվ պալքարել և պալքարում է հաշվառման գործի շուրջը լեղած բուրժուական տեսու-թյունների և, մասնավորապես, պալանդանովչինալի դեմ: Սակայն այդ հանգամանքն ամենեվին չի հա-վաստիացնում հեղինակի պատասխանատվությունն այն սխալների համար, վոր նա թուլ է տվել իր աշ-խատության մեջ:

Գանի վոր «բալանսային հաշվառման» մասին ուսումնական հիմնարկի կարիքը շատ մեծ է, ուստի ինստիտուտը վորոշել է չսպասել յերկրորդ վերամը-շակված հրատարակությանը, այլ ուղարկել հոռակալին-ներին առաջին հրատարակության թարգմանությունը:

Հեղինակի ցածում բերված նամակը, վորի մեջ նա լերեսն է հանում իր թուլը տված սխալները, պեսք է վորպես հիմք ընդունվի ուսումնական նյութի քննա-դատական մշակման ժամանակ:

Այդ խնդրի մշակումը, վոր կապված է միաս-

նական սոցիալիստական հաշվառման տեսության հետ, Մարքս Լենինյան աշխարհայեցողությամբ պին-ված տեսաբանների կոլեկտիվ աշխատանքն է պահան-ջում: Մարքս-Ենգելս-Լենին-Ստալինյան ուսումնքի հիման վրա պետք է մշակվեն դիալեկտիկական պրո-ցեսների հետ կապված այն բոլոր հարցերը, վորոնց մենք հանդիպում ենք հաղթահարող սոցիալիստական շինարարության պայմաններում: Ընկ. Գալպերինի աշխատությանը մենք ենք այդ տեսակետից ել պիտի մոտենանք և վերցնենք նրանից այն ամենը, ինչ կհեշտացնի մեզ համար սոցիալիստական հաշվառման անխիկալի նվաճման գործը:

Այս նախաբանը անխիկական պայմաններով հնարավոր չեղավ տալ Գալպերինի գրքի առաջին մա-սը լույս ընծայելիս, ուստի այն տալիս ենք լերկորդ մասում:

Անդրկովկասյան Ֆիմանսական —  
Տնտեսական յեվ Հաշվային Գիտու-  
բյունների Հեռակա Ինստիտուտ

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Ընկ. Ստալինի «Գրուխտարսկայա ռեվոլուցիա» ամսաթերթի խմբագրությանն ուղղած պատմական նամակը, մորիլիմացիայի յե լենթարկում կուսակցու-թյանն ու բանվոր դասակարգին իդիոլոգիապես թըը-նամի ամեն տեսակի սխալ ֆալսիֆիկատորների և մաքսանենդերի դեմ, նեխած լիբերալիզմի դեմ լենի-նիզմի թշնամի այն հոսանքների նկատմամբ, վորոնք սպառնում են «բալլըվիդմի կենսական շահերին»,

Նեխած լիբերալիզմի, վոր սահմանակցվում է վոն-  
բադործութեան, դավաճանութեան՝ բանվոր դասակարգի  
հանդեպ: Այդ նամակը բացառիկ կարևոր նշանակու-  
թյուն ունի մեր տեսական աշխատանքի բոլոր ճյու-  
ղերի համար, վորպես իսկական բայլընկիցան մեթոդո-  
լոգիայի մի փայլուն նմուշ:

Նա պիտի ապահովի մեր վողջ աշխատանքի վե-  
րակատարումը Լենինյան սկզբունքայնութեամբ և տն-  
հաշտութեամբ դեպի ամեն տեսակի թեքումները կու-  
սակցութեան գլխավոր գծից, դասակարգային թշնա-  
մու և նրա ազենատուրայի դեմ տարվելիք պայքարում,  
մարտնչող կուսակցութեան համար՝ գիտութեան մեջ,  
աջ ոպորտունիզմի, վորպես ավյալ ետապի գլխավոր  
վտանգի և «ձախ» ոպորտունիզմի ու հաշտվողականու-  
թյան դեմ մղվող պայքարի համար կուսակցութեան գըլ-  
խավոր գծի հստակութեան համար:

Ընկ. Ստալինի նամակում դրված խնդիրների  
տեսանկյունից հարց ե առաջանում հաշվառման տեսու-  
թյան բնագավառում լեզամ ձեռնարկներ մտնրա-  
զնին վերանայման կարևորութեան մասին, վորպեսզի  
դրանով առավելագույն չափով ապահովված լինեն դասա-  
կարգային աշալընթութունն ու մարտնչող կուսակցու-  
թյան սկզբունքը հաշվառման գործի մեջ:

Ասհրատեշտ ե սիստեմատիկորեն և մաքսիմալ  
կոնկրետ ձևով մերկացնել և գրսեվորել հակահեղափո-  
խական տրոցկիզմի, հակահեղափոխական բուրժուա-  
զիայի այդ առաջավոր շոկատի դասակարգային թշնա-  
մական եյություն, անհրատեշտ ե անողոքաբար մերկաց-  
նել և լերևան հանել իրիտլոգիայես թշնամի կոնարա-  
բանգան հաշվառման հարցերում, վճռականապես պայ-

քարելով նեխած լիբերալիզմի ամեն տեսակ արտա-  
հայտությունների դեմ՝ սոցիալիստական շինարարու-  
թյանը թշնամի տեսությունների դեմ: Ընկ, Ստալինի  
նամակն այս տեսակետից պիտի զինի հաշվառման  
բնագավառում աշխատողներին միասնական սոցիա-  
լիստական հաշվառման կարևորագույն խնդիրների ա-  
վելի խորացված, բայլընկիցան ուխերի վրա դրված,  
գիտական ուսումնասիրութեան, բուրժուական և տրոց-  
կիստական մենշելիցյան տեսություններն արմատախիլ  
տնելու և հաշվառման տեսութեան հարցերը սկզբուն-  
քային քաղաքական ավելի բարձր աստիճանի վրա  
դնելու համար:

Աշխատելով մի շարք տարիների ընթացքում  
հաշվառման հասարակայնութեան շարքերում և պայ-  
քարելով բայլընկիցան Լենինյան տեսութեանը թշնամի  
բոլոր տեսակի արտահայտությունների դեմ՝ լես իմ  
պարտքն եմ համարում ջննադատական վերաբերմունք  
ունենալ և դեպի իմ աշխատությունները, վերանայել  
նրանց՝ նոր խնդիրների և աշխատանքի նոր պայման-  
ների տեսանկյունից:

Յեա արդեն մանրամասն կանգ չեմ առնի ավելի  
սկզբնական, ուստի և ավելի չհասունացած իմ այն  
աշխատությունների վրա, վորոնք վերաբերում են  
1924-1926 թվերին:

Կուսակցութեան և միջազգային պրոլետարիատի  
առաջնորդ ընկ. Ստալինի պատմական նամակը հար-  
կադրում ե ինձ վերանայել իմ թուլ տղամ սխալներն  
ու արմատախիլ անել սխալ գրույթները: Մի շարք  
վող ճիշտ և կոպիտ սխալ գրույթներ կան ВЗІНО-ի  
հրատարակութեամբ լույս տեսած իմ «Բայանսային

հաշվառման հիմունքները վերջին աշխատութեան մեջ:  
Յես պարտք եմ համարում կանգ առնել այդ սխալնե-  
րից կարևորագույնների վրա:

1. Բալանսային հաշվառման տեսութեան առար-  
կան և սահմանները վորոշելիս յես տվել եմ մեթոդո-  
լոգիայի սխալ և դիալեկտիկական մեթոդին հակա-  
սող դրույթ հաշվառման տեսութեան հիմնավորման  
նկատմամբ, վորը չի պարզում գիտութեան և մեթոդի  
միջև յեղած փոխհարաբերութեանը և շեշտը դնում է  
վորոշ «տեսակետի» վրա, յերևույթների որոշելով հա-  
կութեանները նյութի շարժման հատուկ ձևերը դիտե-  
լու փոխադրելու Իս ուղղակի հակասում է Լենինի այն  
ցուցմունքին, վոր «բանը նրանում չե, թե ո՞վ է եղի-  
տում», ում համար է «հետաքրքիր», այլ նրանում է,  
թե ինչն է մարդկային գիտակցութեանից անկախ»:

2. Բալանսի նկատմամբ արված է ըստ ելույթյան  
վոր քաղաքական բնորոշում, վորը քոզարկում է նրա  
պատմականութեան հարցը և խոշոր չափով տանում  
դեպի բալանսի արտարակա բացատրութեան դիրքերը:  
Բացի այդ, մի շարք չշտկված ձևավորումներ առիթ են  
տալիս հետեցնելու, վոր միայն դրամական արժեքա-  
վորումն է հանդես գալիս բալանսի մեջ վորպես պատ-  
մական կատեգորիա, իսկ դրանից դուրս բալանսը մի  
տրամաբանական կատեգորիա չէ, ինչ վոր հիմքում  
սխալ է:

3. Կոպիտ սխալ է յեղել և այն, վոր յես տեխ-  
նիկոցիայի յեմ յենթարկել բալանսի հատկութեան  
պորբլիմները, բացառապես հաշվառման տեսանկյունից,  
բալանսի և հաշվետվութեան, վորպես համայնացված  
սեկտորի ձևաձևարկութեանների կառավարելու գործին

աշխատավոր մասուաններին մասնակից տնելու նախա-  
դայաններից մեկին. հատկութեանն ու մատչելիու-  
թեանը լուսաբանելու փոխարեն: Նմանապես սխալ է  
լուսաբանված և պլանավորումը, վորն իբր թե հատուկ  
է մարդկային աշխատանքին ընդանրապես, այնինչ  
տվյալ դեպքում խոսք կարող է լինել միայն այդ աշ-  
խատանքի նպատակահարմարութեան մասին: Քաղա-  
քականապես սխալ և վնասակար է մի տեղ գործած-  
ված խոսքը, վորքան վոր խոսքը մեր պլանների  
մասին է, ձևակերպումը բանվորների ազատագրութեան  
մասին, ինչ վոր կարող է սխալ կարծիք առաջացնել  
այն մասին, վոր մեղ մոտ բանվորները դեռ վերջնա-  
նապես չեն ազատագրված:

4. Կոպիտ սխալ եմ համարում և այն, վոր առա-  
ջին յերկու պրակներում չեն տրված ուշադրութեանը  
անսեսական հաշվառքի, ուղղով ստուգելու և հաշվա-  
ռումն այդ խնդիրներին յենթարկելու հարցերը: Այդ  
հարցերի, այլև խորհրդային առևտրի մասին հարցի  
լուսաբանման սահմանափակումը, առանց դրսևորելու  
թույլ տված սխալները և յերրորդ պրակում, յես հա-  
մարում եմ քաղաքական սխալ:

Վորոշակի սխալ եմ համարում և մի շարք տեղե-  
րում գործածված ու ձևակերպված խորհրդային եկոնոմի-  
կայի պլաններում կապիտալիստական տնտեսութեան  
տրանսֆորմացիայի, կապիտալիստական հաշվառման  
չքանալու մասին: Նման ձևակերպումները՝ «չքանալու»  
«տրանսֆորմացիայի», «չապիտալը ձգելու» մասին հա-  
մարում եմ վորոշակի սխալ քանի վոր մեղ մոտ խո-  
քը վոր թե հին կատեգորիաների ձևավորման և հին  
որինակավորութեանների տրանսֆորմացիայի մասին է,

այլ այդ կատեգորիաների և որինաչափություններին որ սկզբնավորութեան մասին, կառուցվող սոցիալիզմի եկոնոմիկայի պայմաններում:

6. Ամենակոպիտ քաղաքական սխալ եմ համարում այն, վոր աշխատութեան մեջ բացակայում է բուրժուական տեսութիւնների ծավալուն քննադատութիւնը, կապիտալի հաշվառման հասկացողութեան հակադրութեանը՝ նրա տնտեսական ըմբռնողութեան, այլ և վոր քննադատական վերաբերմունք ունենալու մեջ բերված քաղվածքներ՝ Մարքսիզմի ունեգատներին, սոցիալ-ֆաշիստներին և այլ գրքերից:

Այս սխալների թվարկումով, իհարկէ, յես լրիվ չեմ սպառում այն բոլոր սխալ դրուլթները, վոր կան անցյալ և վերջին իմ աշխատութիւնների մեջ: Նախապատրաստելով տպագրութեան համար իմ «Բալանսային հաշվառման հիմունքներ»-ի յերկրորդ հրատարակութիւնը, յես հիմնականորեն վերամշակում եմ իմ վերջին աշխատութիւնը՝ ծավալուն քննադատութեան յենթարկելով իմ գործած բոլոր սխալները՝ ըստ գլուխների: Այդ նյութի մասին ևս կտամ նաև մի շարք զեկուցումներ և կունենամ յելուլթներ:

Ձայներ են լսվում նաև այն մասին, վոր իբր թէ իմ աշխատութիւնների քննադատութիւնը կարող է ինձ դրդել հրաժարվելու հետագա աշխատանքից:

Մասնավորապես այսպես էլին արտահայտվում իմ նկատմամբ հաշվառման ուսուցիչների Մոսկվայի առաջին շրջանային կոնֆերանսում: Յես իմ պարտքն եմ համարում վճարահանորան սահմանազատվել նման ոպորտունիտետական - քաղքեմիական կարծիքներից: Ընդհակառակը, իմ թույլ տված սխալների բոլորակ-

կյան քննադատութեան և հետագա ստեղծագործման ընթացքում այդ սխալները հաղթահարելու ուղղութեամբ ինձ ցույց տրված ոգնութեան պայմանով է, վոր յես հնարավոր եմ համարում իմ աշխատանքը: Դրսևորելով իմ սխալներն, ուշադրութեամբ հետևելով իմ աշխատութիւնների քննադատութեանը, յես կաշխատեմ հետագայում միասնական սոցիալիստական հաշվառման մեթոդողիա կոփել, հետագայում յես անողոք պայքար կմղեմ ամեն տեսակի թշնամի — զաղափարական կոնտրարանդի և ֆալսիֆիկացիայի դեմ, ամեն տեսակի թշնամի յելուլթների դեմ՝ հաշվառման տեսութեան բնագավառում, թինչ ձևով էլ նրանք արտահայտվեն և վորտեղից էլ նրանք առաջ գան, քանի վոր հիայն պայքարելով բուրժուական նախապաշարունակների դեմ՝ տեսութեան մեջ կարելի չէ ամրացնել Մարքս-Լենինյան դիրքերը» (ՍՏԱԼԻՆ):

Պատասխանատվութիւն և խոշոր խնդիրներ են ծառանում մեր առջև առանձնապէս այժմ, ծավալուն սոցիալիստական շինարարութեան և դասակարգային սրման պայմաններում մեր յերկրում:

Մենք պիտի շարունակենք բոլոր ֆրոնտներում, ավելի շատ թափանցենք ուսուցումը կուսակցականութեան, սովորենք ղեկավարել նոր ձևով, կարողանանք յուրաքանչյուր տեսական թեզում գտնել նրա կիրառումը որվա սուր և հրատապ խնդիրների լուծման համար, հասկանալ «հակադրութիւնների միասնականութիւնն իրականութեան մեջ», իսկ հակադրութիւնների միասնականութիւնն իրականութեան մեջ» հասկանալը նշանակում է չվախենալ դժվարութիւններից: Դա նշանակում է չվախենալ կյանքի

այն հակասութիւններից, վարոնք ծագում են մեր հասարակին, ալ հազթահարել զրանց բայլիկիյան յեռանդով (ԿԱԿԱՆՈՎԻԶ)։

Զվարենալով զժվարութիւններից, դրսեվորելով հակաբայլիկիյան կոնարարանդը և ֆալսիֆիկացիան հաշվառման գործում, հազթահարելով սեփական սխալները, յես սրանից հետո ել կաշխատեմ հաշվառման հասարակայնութիւն շարքերում խորհրդային հաշվառման տեսութիւն ընազավտում, վորդեազի ավելի ևս բարձրացած լինի Մարգարեանի և Ստալինյան դրոշակն այդ ֆրոնտում։

ՅԱ. ԳԱԼՊԵՐԻՆ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՀԱՇՎԵԿՆՈՒ ՄԵՋ

Փոփոխութիւններ տեսութիւն կազմի մեջ

Հաշվեկշիռը մենք սահմանեցինք վորպես տնտեսութիւն և տնտեսական գործառնութիւն արտահայտիչ։ Հասկանալի չե, վոր հաշվեկշիռի այդ սահմանումը լինթադրում ե և համապատասխան հաշվետու ավալների չոյութիւն։ Սակայն տնտեսութիւնը հանգիստ վիճակի մեջ չե։ Նա ապրում, գործում, գործանում ե։ Տնտեսական զանազան գործառնութիւնների ազդեցութիւն տակ փոխոյւլում են տնտեսութիւն կազմի ու կառուցվածքը։ Ի՞նչպես ենք կարողանում ըմբռնել այդ փոփոխութիւնները։ Ի՞նչպես ենք ծանոթանում տնտեսութիւն նոր մոմենտի դրութիւնը։

Տնտեսութիւն և տնտեսական գործառնութիւնների մեր դիտութիւն մեջ գործադրվող մեթոդի ուսումնասիրութիւն՝ առանձնաճատեկութիւնն այն ե, վոր մեր ամբողջ հետազոտութիւնը հիմնվում ե հաշվեկշիռի վրա։ Տնտեսութիւնը մենք հետազոտում և տնտեսական գործառնութիւնները դրսևորում ենք նրանց հաշվեկշիռային բեկման մեջ։ Տնտեսութիւն կառուցվածքը և նրա մեջ առաջացած բոլոր փոփոխութիւնները մենք ուսումնասիրում ենք հաշվեկշիռի հիման վրա։ Բայց չե՞ վոր տնտեսութիւն տիպաբը վերջին հաշվով բնորոշվում ե

արատազրական հարաբերութիւններով: Ուրեմն՝ հաշվեկշռի կառուցվածքն եւ նախորոշվում է տնտեսական վորոշ նախադրյալներով: Նշանակում է՝ ինքը՝ հաշվեկշռն եւ լցվում է վորոշ տնտեսական բովանդակութեամբ:

Սորհրդային տնտեսութիւնը, ամենից առաջ, պլանային տնտեսութիւնն է, ուստի ամեն մի տնտեսական գործառնութիւնն անքակտելի կերպով կապված է տնտեսական գործունեյութեան պլանի հետ: Ավելին՝ տնտեսական լուրաքանչուր գործառնութիւնն մի մասն է կազմում ընդհանուր տնտեսական աշխատանքի նախագծված պլանի կատարման:

Պլանի այդ կատարումը տնտեսութեան կազմի մեջ փոփոխութիւններն է առաջացնում պլանի նախագծած ուղղութեամբ: Իրենց հերթին, տնտեսութեան կազմի մեջ կատարված փոփոխութիւնները իրենց անդրադարձումն են գտնում հաշվեկշռի կազմութեան մեջ, քանի վոր հաշվեկշռը տնտեսութեան արտահայտիչն է: Հետեաբար, տնտեսական գործառնութիւնները բեկվում են հաշվեկշռի մեջ: Ինկվելուով հաշվեկշռի մեջ՝ նրանք փոփոխում են նրա կազմութիւնը և նրա առանձին մասերը:

Այդ դեպքում ինչ են ներկայացնում հաշվեկշռային փոփոխութիւնները:

Հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ յեղած փոփոխութիւնները, պարզ է, վոր այլ ինչ են, լեթե վոր հասարակ հետեանքներն այն փոփոխութիւնների, վոր ընդ առաջանում են տնտեսութեան բաղկացուցիչ մասերի մեջ՝ կապված տնտեսութեան նախագծված պլանի կատարման գործունեյութեան հետ: Վորպեսզի ծանոթանանք այն փոփոխութիւններին, վորոնք առա-

ջացել են տնտեսութեան կազմութեան մեջ՝ այս կամ այն գործառնութեան հետեանքով, մենք, նախ՝ ծանոթանում ենք այն փոփոխութիւններին, վորոնք այդ գործառնութիւնների հետեանքով կատարվել են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ. մենք անշեղ կերպով և հետեողականորեն ուսումնասիրում ենք տնտեսութիւնը և տնտեսական գործունեյութիւնը՝ նրանց հաշվեկշռային բեկման մեջ:

Տնտեսական առանձին գործառնութիւնները անքակտելի կերպով կապված են միմյանց հետ, վորպես ընդհանուր տնտեսական պլանի կատարման զանազան մասեր: Հետեաբար, չի կարելի տնտեսական գործառնութիւնները դիտել միմյանցից չեզոքացրած և անջատ: Նրանք պիտի միմյանց հետ կապկցված և համակարգված լինեն: Բաց, տնտեսական գործառնութիւնները նույնպես չի կարելի դիտել պլանից չեզոքացրած և անջատած: Նրանք պիտի կապկցված և համակարգված լինեն պլանի հետ: Տնտեսական գործառնութիւնների միջև՝ պլանի կատարման հետ կապված տնտեսական գործունեյութեան այդ փոխադարձ կախումն իր արտացոլումն է գտնում հաշվեկշռի մեջ, վորպես փոխադարձ կախումն հաշվեկշռի առանձին բաղկացուցիչ մասերի միջև: Պլանայինորեն կատարվող տնտեսական գործառնութիւնների միջև յեղած համակարգումն իր հաշվեկշռային բեկումն է գտնում, վորպես հաշվեկշռի առանձին հաշվիների միջև յեղած համակարգութիւն: տնտեսական գործառնութիւնների համակարգումը բերում է մեզ հաշվեկշռային հաշիվներէ համակարգմանը, հաշվեկշռի առանձին հաշիվներէ միջև յեղած փոխհարաբերութեան վորոշմանը՝ պլանի կա-

տարման հետ կապված տնտեսական գործունեության հիման վրա:

Այսպիսով՝ հաշվեկշիռը, նախ՝ ներկայացնում է տնտեսության հիմնական հատուկների յուրատեսակ պլան: Յերկրորդ՝ հաշվեկշիռը արտացոլում է պլանի կատարման հիման վրա տնտեսության գործունեության հիմնական գծերը, վորպես հաշիվների մեջ յեղած փոխհարաբերություն: Յերրորդ՝ հաշվեկշիռը յերեվան է հանում տնտեսական պլանի փաստական կատարումը և հենց դրանով հսկիչ է ծառայում պլանի տնտեսական գործունեության կատարման վրա:

**ԱհՏԻՎԻ ՅԵՎ ՊԱՍՍԻՎԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հաշվեկշիռի հիման վրա կատարված՝ տնտեսության և տնտեսական գործառնությունների հետազոտության հիմնական, ամեն ինչի մեջ թափանցող և վճռական մոմենտն այն է, վոր տնտեսությունը յերկուստեք է բեկանվում հաշվեկշիռի մեջ: Տնտեսությունը հաշվեկշիռում բեկանվում է յերկյակ լուծումով. ա) տնտեսական ռեսուրսների ղետեղման գծով և բ) նույն այդ ռեսուրսների աղբյուրների ծագման գծով:

Հաշվարկյալ ամբողջ տնտեսության տարրալուծման առաջին շարքը՝ ախտիֆը է: Սա բնորոշում է տնտեսական ռեսուրսների ղետեղումը, այդ ռեսուրսների մոբիլիզացիան՝ տնտեսական գործունեությունը զարգացնելու և պլանը կատարելու համար, սա դրսեվորում է այս կամ այն միջոցների գոյությունը արտադրության շրջանում կամ շրջանառության մեջ:

Հաշվարկյալ ամբողջ տնտեսության տարրալուծման յերկրորդ շարքը պասսիֆը է: Սա բնութագրում է հաշվեկշիռը տնտեսական բոլոր ռեսուրսների ծագման տեսանկյունից, արտադրության և շրջանառության միջոցների գոյացման աղբյուրների տեսանկյունից: Պասսիվը ցույց է տալիս, թե տնտեսությունը ինչ աղբյուրների հաշվին է գործում՝ առանձնացման յենթակա, թե՛ վոչ յենթակա: Պասսիվը ցույց է տալիս, թե այդ աղբյուրները ինչպիսի սոցիալական բնույթ են կրում և վորքան տեղական են:

Կասկածից դուրս է, վոր այս մոմենտները մեծ դեր են կատարում ստացված ռեսուրսներն այս կամ այն հատկանշի համաձայն տեղավորելու գործում՝ վորոշ տնտեսական ֆունկցիաներ կատարելու համար:

1007  
30/31

Այսպիսով, ախտիֆը ու պասսիֆը ըստ էության վոչ այլ ինչ են, քան տնտեսության միենույն հավաքական մեծության յերկյակ քարտուղումը, ըստ յերկու հատկանիշների. 1) ըստ տնտեսական ռեսուրսների ղետեղման հատկանշի (ախտիվ), 2) ըստ նույն տնտեսական ռեսուրսների ծագման հատկանշի (պասսիվ): Ահնավասիկ տնտեսությունը հաշվեկշիռային մեթոդով հետազոտելու հիմանց հիմունքը: Ահնավասիկ տնտեսությունը և տնտեսական գործունեությունը հաշվեկշիռի հիման վրա դրսեվորելու առանձնահատկությունը: Սակայն տնտեսության հավաքական մեծության այդպիսի յերկյակ և զուգահեռ արտացոլումը հաշվեկշիռի մեջ՝ ախտիվի և պասսիվի կերպարանքով՝ բերում է ախտիվի և պասսիվի նույնացման: Հաշվեկշիռի ախտիֆը ու պասսիվն անզավաճանորեն և անքսիտիլորեն կապված են միմյանց հետ: Ըստ այդմ ախտիվի մեծությունը



միշտ հավասար և պասսիվի մեծութեան: Հենց սրանումն է կայանում այսպես կոչված «ակտիվի և պասսիվի հավասարակշռականութեան սկզբունքը»

Այսպես ուրեմն, հաշվեկշիռը տվյալ տնտեսութեան արտադրութեան և շրջանառութեան բոլոր միջոցների միատեսակ միավորով հաշվարկելու պարզ թվական արտահայտիչը չի միայն: Տնտեսութեան հաշվեկշռային արտահայտութեան յուրահատկությունը կայանում է նրանում ևս, վոր տնտեսությունը հաշվեկշռի մեջ բեկանվում է ակտիվի և պասսիվի կերպարանքով: Հաշվեկշիռը վաչ միայն դրսևորում է տնտեսական ռեսուրսների հավաքական մեծությունը՝ հաշվարկման միատեսակ միավորով արտահայտած, այլ և դրսևորում է նույն տնտեսական ռեսուրսների աղբյուրների, այն է՝ արտադրութեան և շրջանառութեան միջոցների աղբյուրների, հավաքական ամբողջությունը՝ նույն միավորով արտահայտած: Հենց սա էլ կազմում է տնտեսությունը հաշվեկշռային մեթոդով արտահայտելու բնորոշ դիժը:

Սակայն ինչպես են արտացոլում բալանսի մեջ տնտեսական գործառնությունները:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՊՏՈՒՏՎԸ**

Քննության առնե՞ք տնտեսական միջոցների շարժման ընթացքի հիմնական սխեման այդ ընթացքի հաշվեկշռում արտացոլելու տեսակետից:

Ինչպիսի՞ լն տնտեսական միջոցների շարժման այդ պրոցեսի սխեման:

Առանձին տնտեսություն համար իր միջոցների շրջանապտուկը կարող է արտահայտվել Մարքսի հետևյալ հարտնի սխեմայով:

Դ—Ա...Ս...Ա՛—Դ՛

Շրջանառության այս ֆորմուլան կիրառենք խորհրդային եկոնոմիկայի պայմաններում գործող տնտեսության համայնացրած սեկտորի նկատմամբ: Սակայն այս դեպքում աչքի առաջ ունենանք այն, վոր այս ձևի տակ թագնված բովանդակությունը խորհրդային եկոնոմիկայի պայմաններում հասկանալի և արմատապես փոխվում է:

Նախ՝ արտադրության միջոցները, համայնացրած են. նրանք այժմ պատկանում են կազմակերպչորեն իշխանության գլուխ անցած բանվոր դասակարգին: Շրջանառության պրոցեսի կարգավորիչը այլևս արժեքը չէ: Արտադրության միջոցները հանդես չեն գալիս կապիտալի ձևով, իսկ աշխատանքը՝ վարձու աշխատանքի ձևով:

Բանվորական պետության պլանն է այժմ վորոշում արտադրության և վերաարտադրության չափը: Պլանային սկզբունքը տիրում է այժմ վոչ միայն արտադրության բնագավառում, այլև ավելի ու ավելի թափանցում է նաև շրջանառության բնագավառը, կերպարանափոխելով շուկային ապրանքափոխությունը սոցիալիստական մթերափոխառանձան, ուղղակի բաշխման, հասարակական արտադրանքի պլանայնորեն կազմակերպված շարժման: Սա պայմանավորվում է նաև նրանով, վոր նեպի այս վերջին ետապը հանդիսանում է նաև սոցիալիզմի առաջին ետապը:

«Մեր յերկիրը, վորտեղ սոցիալիստական սեկտորը ժողովրդական տնտեսության մեջ բացարձակորեն գերակշռող դեր է ստանձնել, թևակոխել է սոցիալիստ-

տական համատարած հարձակման շրջանը, սոցիալիզմի շրջանը: Վրա հասնող 1931 թիվը նոր նվաճումների, սոցիալիզմի խոշորագույն հաջողությունների տարի չէ լինելու. սոցիալիզմի համար՝ կապիտալիզմի դեմ նրա մղած պայքարի մեջ: Կոլեկտիվացման բնագավառում պլանի կատարումը բացարձակ գերակշռություն է տալու սոցիալիստական տարրերին անհատական սեկտորի հանդեպ՝ գյուղում, ամբապնդելու չէ կապը բանվոր դասակարգի և գյուղացիական աշխատավոր մասսաների միջև և ավարտելու չէ ԽՍՀՄ-ի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Սա համաշխարհային—պատմական նշանակություն ունեցող մի հաղթանակ է լինելու: (ՀԱՄԿ (բ) Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի 1930 թվի դեկտեմբերյան պլենումի բանաձևից):

Փորձենք տնտեսական միջոցների շրջանապտույտի հաշվեկշռային բեկման սխեման տալ: Այստեղ հիշենք, վոր հաշվեկշիռն արտացոլում է վոչ միայն իրերի հավաքականությունը: Հաշվեկշիռն անդրադարձնում է վոչ միայն տնտեսական միջոցների շարժման նյութական—տեխնիկական պրոցեսը, նա անդրադարձնում է նաև այդ պրոցեսի տնտեսական բնությունը: Հաշվեկշիռն, այս իմաստով, լցվում է վորոշ սոցիալ-տրնտեսական բովանդակությամբ: Այսուհետև մեր հետազոտություն մեջ մենք լեյակետ կընդունենք այն, վոր մեր առջև դրված է համայնացրած սեկտորի խորհրդային պլանային տնտեսությունը, վոր պլանային տնտեսական գործառնություններ է կատարում և վորը մի բլիթ է սոցիալիստական տնտեսական օրգանիզմի:

### ա) Հաշվեկշիռն առաման մոմենտն

Պատկերենք տվյալ տնտեսության գրուխունը հաշվեկշռային անդրադարձմամբ՝ գործառնության սկզբին:

Ընդունենք, վոր վերը հիշված շրջանապտույտի համաձայն, տնտեսական գործառնությունների համար դրամական միջոցների ավանսատրումը յեյակետային մոմենտն է: Յենթադրենք, վոր ավանսատրված գումարը՝ Դ—ն թվական արտահայտությունը հավասար է 10.000-ի:

Բայց, տնտեսական գրուխունը բեկանվում է մեր հաշվեկշռի պրիզմայում վորպես ախտիվ և պասիվ: Հետևաբար, բավական չէ հաշվեկշռում ցույց տալ միայն միջոցների գետեղման ուղղությունները, տվյալ դեպքում՝ դրամի ձևով: Անհրաժեշտ է նաև տնտեսության գրուխունը բնութագրել միջոցների նույն դանդվածի ծագման տեսակետից:

Հարց է ծագում՝ ի՞նչպես կանդրադառնա տնտեսության գրուխունը հաշվեկշռի մեջ առաջման մոմենտին, այսինքն այն մոմենտին, յերբ դրամական վորոշ գումար կանխատրվում է տնտեսության պրոցեսին մասնակցելու համար: Ակնհայտ է, վոր ախտիվի մասին հարցը վճռվում է հասարակ կերպով: 'Ախտիվում' մենք ցույց կտանք, վոր տնտեսության մեջ լեյած միջոցների զանգվածը, գումարով՝ 10.000, տվյալ դեպքում մարմնանում է դրամի կերպարանքով: Հետևաբար, ախտիվում հանդես կգա միայն մի հողված, այն է՝ դրամական միջոցներ—10.000, իսկ թոչ կգետեղենք պասսիվում: Ի՞նչ աղբյուրներից է ծագել կանխատրված դրամական գումարը:

Մենք արդեն ասացինք, վոր յելակետ ենք ընդունում սոցիալիստական սեկտորի առանձին խորհրդային տնտեսութեան պլանային գործառնութիւնները: Ուրեմն, այստեղ կապիտալիստական հարաբերութիւններ չկան: Միջոցների շրջանառութեան պրոցեսը կատարվում է վոչ թե շահ դուրս բերելու նպատակով (սա չի մեր նպատակը), այլ սոցիալիստական շինարարութեան հողի վրա արտադրողական ուժերը զարգացնելու, հասարակական կարիքները բավարարելու, խորհրդային յերկրի տնտեսական դեմքը վերափոխելու և մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակն ապահովելու համար: Դատողութիւններն ավելի պարզ ներկայացնելու համար, ասենք թե վերոհիշյալ բոլոր միջոցները պետութեան կողմից կանխատրվել են և հաստատվել վորպես գործառնական Փոնդ՝ տվյալ տնտեսական ժամկտի համար: Պարզ է, վոր այս դեպքում տնտեսական բոլոր ռեսուրսների աղբյուրը պետական սկզբնական Փոնդն է:

Պատկերենք տնտեսական դրութիւնն ակտիվի և պասսիվի միջոցով: Կստանանք հետեյալ հաշվեկշիռը.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դրամական միջոցներ	10000	Սկզբնական Փոնդ
	10000	10000

Այսպես է տնտեսութեան դրութեան հաշվեկշիռային արտացոլումը՝ առաքման մոմենտին:

բ) Պրոցեսի առաջին ստադիայի (ասիմանի) արտացոլումը հասկանալի մեջ.

Շարունակենք մեր դատողութիւնները: Տեսնենք՝ ինչպես է անդրադառնում հաշվեկշիռի մեջ հենց միջոցների շրջապտույտը:

Հայտնի չէ, վոր կապիտալիզմի պայմաններում տնտեսական միջոցների շարժման պրոցեսի առաջին ստադիան, համաձայն վերը բերած սխեմայի, փողի ապրանք դառնալն է: Հաշվեկշիռում այդ անդրադառնում է այն մտքով, վոր դրամական միջոցներն ակտիվում փոխարինվում են ապրանքով:

Ինչ պետք է հասկանանք այդ ապրանքի տակ, յեթե յելենք դրան հաջորդող, արտադրութեան, պրոցեսից: Ապրանքի տակ տվյալ դեպքում հասկացվում են արտադրութեան միջոցները և բանվորական ուժը, վոր նույնպես հանդես է գալիս վորպես ապրանք կապիտալիստական շուկայում: Բանվորական ուժի և արտադրութեան ուժերի համադրումն է, վոր նախադրյալ է ծառայում արտադրական պրոցեսի իրականացման:

Անհրաժեշտ է նորից հիշատակել, վոր դարձյալ պիտի յելենք խորհրդային եկանոմիկայի պայմաններից: Խոսելով արտադրութեան միջոցների և բանվորական ուժի մասին, աչքի առաջ ունենանք սոցիալիստական արտադրութեան պայմանները: Բայց այս դեպքում կարելի չէ արդյոք, արտադրութեան պրոցեսի ընդ որում ժամանակ, յելնել բանվորական ուժի և արտադրութեան միջոցների ներկայութիւնից: Տիպիկական չէն արդյոք այդ տարրերը միայն արտադրութեան կապիտալիստական յեղանակի համար: Վնչ, արտադրութեան միջոցները և բանվորական ուժն անհրաժեշտ են արտադրութեան պրոցեսի համար՝ բոլոր արտեսական կառուցվածքների

Բայց նրանց սոցիալական բովանդակութիւնն արմատապես փոխվում է այժմ:

Մարքան ասում է, «ինչպես բանվորական ուժը, նույնպես և արտադրութեան միջոցներն իրեն կապիտալ չեն հանդիսանում: Նրանք այդ սպիցիֆիկ հասարակական բնույթն ստանում են միայն վերջը, պատճառահանորեն զարգացող պայմաններում» («Կապիտալ» հատոր II էջ 10):

Տեսնենք, թե ինչպես կանդրադառնա հաշվեկշռի մեջ շրջանառութեան մեր քննութեան լենթակա ստադիան՝ Դ—Ա.

Հաշվեկշռում, դրամական միջոցների փոխարեն ակտիվում լեռնան են գալիս բանվորական ուժը և արտադրութեան միջոցները: Դիցուք, արտադրութեան ըստ ծախքերը կազմում են՝ դրամական հաշվով 10.000. այս գումարի մեջ են մտնում՝ բանվորական ուժի վրա ծախսվածը, նյութեղենը և հիմնական միջոցների այն մասը, վոր մաշվում է արտադրութեան պրոցեսում: Այսպիսով, տնտեսութունն այժմ իր ունեցած դրամական բոլոր միջոցները ներդնում է արտադրութեան պրոցեսի մեջ: Հաշվեկշռն այդ գործառնությունից հետո կարելի չէ ներկայացնել այս ձևով.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Արտադրություն	10.000	Սկզբնական ֆոնդ 10.000
	10.000	10.000

Յեթե մինչ այժմ պասսիվում ցույց տրված արժեք տնտեսության սկզբնական ֆոնդն իր ակտիվ մարմնացումն եր գտնում դրամական միջոցների մեջ, ապա նոր հաշվեկշռի մեջ տնտեսության սկզբնական ֆոնդը մարմնանում է ակտիվում արտադրութեան ծախքերի

մեջ: Սկզբնական կամ կանխաարված ֆոնդն այժմ ակտիվ կերպով մասնակցում է արտադրութեան պրոցեսում:

Ինչ վերաբերում է հաշվեկշռին, ապա նրանում առաջվա պես պահպանվում է ակտիվի և պասսիվի հավասարակշռականությունը: Այդ հավասարակշռականությունը բխում է նրանից, վոր ակտիվը գեպքում ևս պասսիվը ցույց է տալիս պետական ֆոնդի հաշվարկչալ չափը, իսկ ակտիվը դրսևորում է, թե այդ ֆոնդը տնտեսական գործունեություն զարգացման պրոցեսի մեջ ինչ կոնկրետ դեր է կատարում:

Գ) ՊՐՈՑԵՍԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՍՏԱԴԻԱՅԻ

ԱՆԴՐԱՆԱԲԱՐՁՈՒՄԸ ՀԱՇՎԵԿՇՈՒԻ ՄԵՋ

Անցնենք տնտեսական միջոցների շարժման պրոցեսի լերկրորդ ստադիայի քննութեան: Ի՞նչ է ներկայացնում այդ ստադիան:

Այս ստադիան ներկայացնում է արտադրութեան պրոցեսի ավարտումը և պատգաստի արդյունքի ստացումը: Արտադրութունն ավարտված է. արտադրութեան հետևանքում արտադրանք է ստացված: Ի՞նչ մեծությունն ունի արտադրութեան այդ արդյունքը:

Արտադրութեան արդյունքի մեծությունը չի ներփակվում միմիայն այն գումարների պարզ հաշվումով, վորոնք արտադրութեան հաշվարկչալ ծախքերն են կազմում: Այլ խուցով՝ արտադրած պրոդուկտի մեծությունը հավասար չէ միայն Ա-ի: Արտադրութեան պրոդուկտի մեծությունն ինքը ներկայացնում է Ա.

Կապիտալիստական հասարակութեան պայմաններում այդ աճումը (приращение) արտախայում է ար-

տաղրութեան պրոցեսում՝ բանվորները շահագործման միջոցով կապիտալիստի դուրս քամած և լուրացրած հավելյալ արժեքը: Խորհրդային եկոնոմիկայի պայմաններում, արտադրութեան միջոցների համայնացման, պրոլետարիատի դիկտատուրայի և դասակարգերի մահացման պայմաններում սոցիալիստական սեկտորի շրջանակում հավելյալ արժեք չկա:

«Ամենատարբեր հասարակական-տնտեսական ձևերի մեջ,—ասում է Մարքսը,—տեղի յե ունենում վոչ միայն հասարակ վերաբրտադրութուն, այլև վերաբրտադրութուն ընդարձակ ծավալով, թեև վերջինս կատարվում է վոչ միտեսակ մաշստաբով: Ժամանակի ընթացքում ավելի ու ավելի չե արտադրվում և ավելի սպառվում, հետևաբար՝ ավելի շատ մթերք արտադրութեան միջոց է դառնում» («Капитал» т. 1 с. 472)

Մեր պայմաններում պրոցեսի տնտեսական հիմունքն արմատապես փոխվում է: Արտաքին ձևի տակ թափնված է պրոցեսի նոր դասակարգային ելու թյունը. մենք այժմ ունենք ընդարձակած սոցիալիստական վերաբրտադրութուն:

Այժմ այլ բովանդակութեամբ է այդ՝ ենդելսի խոսքերով տրտահայտած՝ «աշխատանքի արդյունքի ավելցուկը, վորը գոյանում է աշխատանքի պահպանութեան ծախքերից հետո, և, վորպես դրա հետևանք, հասարակական արտադրական և պահեստի ֆոնդի գոյացումն ու ծավալումը» («Анти-Дюринг» с. 180, изд. 1929):

Արդյունքի այդ ավելցուկն այժմ չի կապիտալացվում: Նա չի լուրացվում պրոլետարիատին թշնամի դասակարգի՝ կապիտալիստների կողմից: Խորհրդային պլանային տնտեսութեան պայմաններում այդ ավել-

ցուկը մտնում է սոցիալիզմ կառուցող ամբողջ բանվոր դասակարգի հասարակական ֆոնդը: Հետևաբար, նա այժմ հավելյալ արժեք չի դառնում: Նա թափանցած է այլ սոցիալական առանցքով. նրա հիմքում ընկած են այլ հասարակական հարաբերություններ: Խորհրդային եկոնոմիկայի պայմաններում բանվոր դասակարգը բանվորական ուժի սեփականատերն է հանդիսանում. բայց և նա՝ հաղթական խորհրդային բանվոր դասակարգը, հանդիսանում է նաև արտադրութեան միջոցների սեփականատեր: Կապիտալիստ դասակարգի և բանվոր դասակարգի միջև չեղած հարաբերությունների փոխարեն սոցիալիստական սեկտորի մթնոլորտում հանդես են դալիս առանձին բանվորների և ամբողջ բանվոր դասակարգի՝ վորպես ամբողջութեան՝ փոխհարաբերությունները. հարաբերություններ՝ արտադրական աշխատավոր կոլեկտիվի և նրա բաղկացուցիչ մասերի միջև:

Պրոլետարիատի արեալետութեան որով վերացվում է հակասութունը «արտադրութեան հասարակական բնույթի և լուրացման մասնավոր բնույթի միջև»: Աշխատանքի արդյունքի այն ավելցուկը, վոր ստացվում է աշխատանքի ծախքերը դուրս գալուց հետո, այժմ, Վ. Ի. Լենինի խոսքով արտահայտած՝ «գնում է վոչ թե հոգուտ սեփականատերերի դասակարգի, այլ՝ բոլոր աշխատավորների և միայն նրանց»:

Այժմ տեսնենք, թե հաշվեկշռի մեջ ինչպես է անդրադառնում պրոցեսի չեբրորդ ստադիան, կամ սխեմայի համաձայն՝

Պ . . . Ա

Յենթադրենք, վոր «աշխատանքի արդյունքի ավելցուկը, վոր ստացվում է աշխատանքի պահպանու-

թիւն ծախսը ծածկելուց հետո՝ հաշվային արտահայտութիւնը կազմում է 2000: Ուրեմն, պատրաստի արդյունքը (պրոդուկցիան) արժամատի արտահայտվեր 12000 գումարով: Բայց մենք կենտեմէնք հաշվառքի մեջ ընդունված ալանդական կադապտրված ձևին:

Այսպիսով, տնտեսութեան նոր վիճակի հաշվեկշռային անդրադարձումը՝ պատրաստի արտադրանք ստանալու մոմենտին՝ գործնականում ընդունված լեղանակով կարող է արտահայտվել հետևյալ ձևով.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Պատրաստի արտադրանք	10.000	Սկզբնական ֆոնդ . . .
	10.000	10.000
		10.000

Այս կադապտրված ձևը մենք յուրացրել ենք կապիտալիստական հաշվառքի գործնականից:

Այստեղ անհրաժեշտ է նկատել, վոր կապիտալիստական հասարակութեան պայմաններում մեր քննութեան լենթեկա՝ պատրաստի մթերքի արտադրութիւնից դուրս գալու պրոցեսի անդրադարձումը հենց այդպիսի անդրադարձումն էր ստանում հաշվեկշիռում: Կապիտալիստական հաշվառքը չէր դրսևորում արտադրութեան պրոցեսով, կապիտալիստական շահագործման հիման վրա առաջացած հավելյալ արժեքի չափը՝ արտադրութիւնից պատրաստի արտադրանքն ստացվելու մոմենտին:

Կապիտալիստական տնտեսութեան հաշվեկշիռում ապրանքը հաշվարկվում էր մի մեծութեամբ, վոր հավասար էր արտադրութեան ծախսերին: Իսկ ինչ վերաբերում է հավելյալին, ապա այդ դուրս եր բեր-

վում կապիտալիստական հաշվառքով, վորպես շրջանառութեան պրոցեսի, այն է՝ ապրանքն իրացնելու հետեւում: Սրանով էլ կապիտալիստական հաշվառքը ջրազարկում էր ձեռնարկուական շահի իսկական բնույթը, վոր, վերջին հաշիւով, հիմնված է բանվորներին շահագործելու վրա. սրանով էլ կապիտալիստական հաշվառքը պահպանում էր կապիտալիստական հավելյալ արժեքի՝ ապրանքները ծախելու պրոցեսում առաջանալու պատրանքը: Մինչդեռ, ինչպես հայտնի յե, հավելման աղբյուրը վոչ թե պատրաստի մթերքի իրացումն է, այլ նրա արտադրութիւնը: Հավելումը ծագում է վոչ թե շրջանառութեան պրոցեսում, այլ արտադրութեան պրոցեսում:

Մեզ մոտ ամբողջական պրոդուկտի մի մասը ներկայացնում է բանվորի անհատական բաժինը պրոդուկտի մեջ (այսպես կոչված՝ «աշխատավարձը»), իսկ մյուս մասը՝ հասարակական բաժինը (հասարակական ֆոնդը):

Մեր պայմաններում կառուկման ֆոնդը պատկանում է ժողովրդ բանվոր դասակարգին. նա հասարակականացվում է, նա հասարակական է դառնում:

Յեկ իսկապես: «Սոցիալական հեղափոխութիւնը — գրում էր իր ժամանակին Ենգելսը, — առաջին անգամ այդ հասարակական արտադրական և պահեստային ֆոնդը, այսինքն՝ նում նյութերի, արտադրութեան գործիքները և կենսական միջոցները հավաքական ամբողջութիւնը, իսկապես վոր հասարակական կղարձնի, վերցնելով այն արտոնյալ դասակարգի տիրապետութիւնից և ապով ամբողջ հասարակութեանը, վորպես ընդհանուր դուրս» («Анти-Дюринг» с. 180):

Աշխատանքի արդյունքի հասարակական մասի քանակը հաշվելը մեր պայմաններում տեխնիկական դժվարություններ չի ներկայացնում: Յեղնելով նրանից, վոր մեր տնտեսությունը պլանային տնտեսությունն է, լեյնելով այն բանից, վոր նրա բոլոր գործառնությունները պլանային գործառնություններ են, կարելի չե գալ հետևյալ յեղրակացություն:

Հասարակական արդյունքի, սոցիալիստական կուտակման չափը կարգավորվում է մեզ մոտ համապատասխան պլանային առաջադրություններով: Նրանք պայմանավորված են խորհրդային ամբողջական տնտեսության շահերով:

Այսպիսի դրությունք մեր եկոնոմիկայի պայմաններում ապահովում է խորհրդային հաշվեկշռի մեջ ամբողջ պրոդուկտի կուտակման պլանային ֆոնդի մեծությունը դրսևորումը՝ այն մոմենտին, լերք պատրաստի պրոդուկցիան ստացվում է արտադրությունից: Այսպես է հարցի տեսական դրվածքը:

Սակայն, մեր հաշվառքի գործնականում, մի շարք նկատառումների հետևանքով, կիրառվում է մի փոքր այլ մեթոդ: Արտադրանքը մեզ մոտ հաշվառվում է, այսպես կոչված՝ պլանային արտադրական գնահատություններով, վորոնք զուգադրվում են արտադրության ծախքերի գումարի գնահատումներին և վաճառման համար նշանակված գնահատումներին: Սակայն այդ մասին հետո կխոսենք:

**ԳՐՈՑԵՍԻ ԵՆՐՐՈՐԴ ՄՏԱԴԻԱՅԻ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ  
ՀՍՇՎԵԿՇՈՒ ՄԵՋ**

Անցնենք, վերջապես, շրջանառության լերրորդ ստադիային: Տնտեսական միջոցների շարժողություն

պրոցեսի վերջին ստադիան պատրաստի մթերքը դրամ դառնալն է: Շրջանապտույտի վերջին ռելսը պատրաստի արտադրանքն իրացնելն է: Մեր պայմաններում, մեր խորհրդային տնտեսական պայմաններում պրոցեսի այդ ստադիան ելապես ներկայացնում է վաչայնճան փոխանակության ստադիա, ինչպես այդ տեղի յեր ունենում կապիտալիստական տնտեսության անիշխանության պայմաններում, վորքան նա մոտենում է հասարակական արտադրանքի պլանայնորեն կազմակերպված շարժմանը:

Պատրաստի արտադրանքի իրացման մոմենտը նոր փոփոխության մոմենտ է հանդիսանում հաշվեկշռուի ակտիվի բաղկացուցիչ մասերի մեջ: Պատրաստի արտադրանքը իրացվելով, նորից հաշվեկշռի ակտիվի մեջ փոխարինվում է դրամական միջոցներով: Պատրաստի արտադրանքը դրամի յե վերածվում: Պատրաստի արտադրանքն իրացվում է, դրամական միջոցների նոր գումարն այժմ հավաքար և վոչ թե փ-ի, այլ՝ փ՝ ի: Ըստ վորում փ՝ ը հավաքար է՝ փ+փ: «փ» մեծությունը ավյալ դեպքում ծառայում է վորպես կուտակման քանակի հաշվարկում: Բայց այդ, ինչպես տեսանք, ամենևին չի նշանակում, թե հավելման աղբյուրը պատրաստի արտադրանքի իրացումն է: Հավելումն ստեղծվում է վոչ թե սպառման պրոցեսում, այլ՝ արտադրություն:

Մարքսն այդ տոթիվ առում է: «Դ»-ն միայն նրանից է = Դ+դ ին, վոր Ա-ն Ա+ա եր... Դ՝ ը լոկ հետևանքն է Ա՝ ի իրացման («Капитал» т. II с. 18): Ինչ վերաբերում է սպառման պրոցեսին, ապա այստեղ իրականացվում է միայն ամբողջ հավաքա-

կան պրոդուկտի սեպարացիան՝ իրացումը, ներառյալ նաև այդ պրոդուկտի հանարակահանուցրած մասը: Այս մեր խորհրդային տնտեսական կազմակերպությունների յեկամուտներն են: Կարիք չկա ասելու, վոր մեր խորհրդային տնտեսական կազմակերպությունների կուտակումներն եյապես տարբերվում են այն կուտակումներից, վորոնք դոյանում են կապիտալիստական հասարակութան պայմաններում, վորտեղ այդ կուտակումները կապիտալացվում են և դարձվում շահ, վորտեղ աշխատանքի արդյունքից ոգտվում են վոչ թե բանվորները, այլ կապիտալիստները:

«Մեր պայմաններում, — ասում է Ի. Վ. Ստալինը, — արդյունաբերությունից ստացված յեկամուտները գնում են վոչ թե առանձին մարդկանց հարստացնելու, այլ՝ արդյունաբերությունն էլ ավելի ընդարձակելու, բանվոր դասակարգի նյութական և կուլտուրական դրությունը բարելավելու, ինչպես բանվորների, այնպես և դուրգացիների համար տնտեսական արդյունաբերական ապրանքների գներն ետանացնելու, այսինք՝ դարձյալ բանվորական մասսաների նյութական դրությունը բարելավելու համար: Կապիտալիստը չի կարող իր յեկամուտը ծառայեցնել բանվոր դասակարգի բարորությունը բարձրացնելու ոգտին: Նա ապրում է շահի համար: Սյապես նա կապիտալիստ չեր լինի»: («Вопросы ленинизма» стр. 343)

Սա հատուկ նշանակութուն է ստանում ներկա մոմենտին, յերբ մեր շինարարության հաջողությունների հիման վրա, սոցիալիստական ինդուստրիան ավելի ու ավելի սեղմ է մտանում սոցիալիստական հողագործութան հետ, և մեր շինարարության բուռն

տեմպերը՝ աշխատանքի նոր սոցիալիստական ձևերի հիման վրա՝ ապահովում են հասարակական տնտեսավարության նոր մեթոդների ծագումը:

Վերադառնանք մեր հետադրոտության թեմային: Տեսնենք, թե ինչպես է անդրադառնում հաշվեկշռի մեջ տնտեսական միջոցների շարժման պրոցեսի վերջին ստադիան վոր արտահայտված է սխեմայով այսպես.

Ա — Դ՝

Մեր բերած որինակի մեջ հասարակականացրած սեկտորի պրոդուկտի մեծութունը կազմում է 2000. Ասենք, թե պատաստի արտադրանքը սեկտորում է 12.000-ով: Այս դեպքում տնտեսության դրությունը ինչպես կրեկանվի հաշվեկշռում:

Ակներև է, վոր ակտիվը կպարունակի այժմ դրամական միջոցներ՝ 12000 ո. գումարի: Պասսիվի մեջ կլինեն՝ սկզբնական ֆոնդը՝ 10000, կուտակման ֆոնդը՝ 2000: Բայց այժմ ֆոնդերն ակտիվային մարմնացումն են ստանում վոչ թե պատաստի արտադրանքի մեջ, այլ՝ դրամի (մենք տեսականորեն մի կողմ ենք թողնուլ այն ծախսերը, վորոնք կապված են արտադրանքի շարժողության հետ):

Տնտեսության նոր դրության հաշվեկշռային անդրադարձումը, պատաստի արտադրանքի իրացումից հետո, կարելի յե ներկայացնել այսպես.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դրամական միջոցներ	12000	Սկզբնական ֆոնդ
	12000	Կուտակման ֆոնդ
		10000
		2000
		12000

Այժմ 2000 ը ներկայացնում ե կուտակման իրաց-  
րած ֆոնդը: Հաշվ կշռի մեջ մենք առաջվա նմանու-  
նենք ակտիվի և պասսիվի հավասարությունը: Բայց այդ  
հավասարությունն այժմ, ինչպես և նախորդ զեպքում,  
իրականացվում ե նոր հիմունքով: Իրամակոն՝ հաշ-  
վարկմամբ՝ գործառնության վերջը մենք ունենում ենք  
այդ հավասարության հետևյալ վարիանտը

$$P = T + R.$$

Մարքսի սխեմային հետևելով՝ մենք պրոցեսն  
սկսեցինք դրամի կանխատրումով: Ինչ վերաբերում ե  
մեր տնտեսական կազմակերպություններին, ապա  
նրանց զարգացման յեղակետային մոմենտ ընդունե-  
ցինք վոչ թե դրամը, այլ այն հիմնական միջոցները,  
վորոնք հատկացրած են նրանց՝ պետական ընդհանուր  
ֆոնդից:

Նկատենք, վոր, վարկային ռեֆորմի հետևանքով,  
պրոցեսի այս վերջին ստադիան իրեն հետևանք կու-  
նենա վոչ թե դրամական միջոցների հաշիվը, այլ Պետ-  
քանկի հաշիվը: Աորհրդային պետական պայմաններում  
կուտակման ֆոնդերը տվյալ տնտեսության սեփակա-  
նությունը չեն կազմում: Նրանք կարող են վերցվել  
պետության կողմից և վերաբաշխվել խորհրդային ա-  
ռանձին տնտեսությունների միջև՝ համաձայն խորհրդ-  
դային ամբողջ տնտեսական շահերի և ընդհանուր ժո-  
ղովրդատնտեսական պլանի: Սովորաբար, մեր պայ-  
մաններում կուտակման ֆոնդերը մասամբ վերցվում  
են տվյալ տնտեսությունից, մասամբ թողնվում են  
նրան և բաշխվում են այս կամ այն հատուկ պլանային  
նշանակման համաձայն: Ահա թե ինչու խորհրդային

տնտեսությունների հաշվեկշռում անհրաժեշտ ե տար-  
բերել ընդհանուր նշանակության ֆոնդերը և հատուկ  
նշանակության ֆոնդերը: Այս մասին մանրամասն  
կխոսենք հետագայում:

Այսպիսի յե տնտեսական միջոցների, ամբողջու-  
թյամբ վերցրած, յրջանառության պրոցեսը՝ հաշվեկշռ-  
ապին բեկման մեջ: Մենք տեսանք, վոր հաշվեկշռը  
տալիս ե արտադրության և հասարակական արտա-  
դրանքի շարժողության այդ պրոցեսի անդրդարձումը,  
վորպե՝ մի ամբողջականություն: Հաշվեկշռն անդրա-  
դարձնում ե այդ պրոցեսը տվյալ տնտեսության պլանի  
համաձայն՝ կապված ընդհանուր ժողտնտեսական պլանի  
հետ: Հաշվեկշռային մեթոդի՝ տնտեսության և տնտե-  
սական պրոցեսների դրության ամբողջ յուրհատկու-  
թյունն այն ե, վոր այդ բոլորն այստեղ բեկան-  
վում են ակտիվի և պասսիվի կերպարանքով, ըստ վո-  
րում ակտիվն ու պասսիվն իրենց մեծությամբ միշտ  
հավասար են: Աակտիվի և պասսիվի այդ անընդհատակա-  
նությունն ե հենց, վոր կազմում ե, այսպես կոչված՝  
ակտիվի և պասսիվի հավասարակշռության սկզբունքը:  
Ինչ վերաբերում ե հաշվեկշռի առանձին տարրերին,  
ապա սրանք, գործառնությունների ադդեցության  
տակ շարունակ փոփոխվում են, շարժման մեջ են. քա-  
նի վոր «կա, — ինչպես Ենգելսն ե ասում, — բացար-  
ձակ հանգիստ, անպայման հավասարակշռություն: Ա-  
ռանձին շարժո մը ձգտում ե հավասարակշռության,  
բայց շարժումն ամբողջությամբ՝ նորից վոչնչացնում ե  
այդ հավասարակշռությունը» («Анти-Дюринг», стр 58):

Յեզբափակելով միջանի փոքր նկատողություններ  
կա անենք: Գննության առնելով տնտեսական միջոցների

ըրջանառութիւնը՝ հաշվի կ'ընի մեջ նրա անդրադարձման տեսակետից, մենք, կարծես թե, տնտեսական միջոցների շարժողութեան պրոցեսը հատեցինք առանձին տարրերի: Սակայն, իրապես, այդ պրոցեսը միասնական է և անընդհատական: Տնտեսական միջոցները այս կամ այն մոմենտին շին գտնվում միայն վորոշ վորևե ձևում, այլ միաժամանակ լինում են բոլոր ձևերում, այս է վոր կազմում է նրանց լուրատեսակ հետևողականութիւնը տարածութեան մեջ: Այս պարագայում տնտեսական միջոցները բաժանվում են իրենց բաղկացուցիչ մասերին, համաձայն տվյալ տնտեսութեան ընդհանուր գործնելութեան և ըստ նախազգծված պլանի: Հետևաբար, տնտեսական միջոցների առանձին ձևերը հաշտրդում են մեկը մյուսին: Ընդդէմ այդպէս՝ տնտեսական միջոցները առանձին ձևերը գտնվում են մեկը մյուսի կողքին:

Այս պարագայում տնտեսական միջոցների մի մասը մնում է փողի ձևով, մյուս մասը գտնվում է արտադրական պրոցեսում, լերրորդ մասը՝ վորպես պատրաստի արտադրանք: Մեր վերլուծած որինակում մենք ամեն անգամ վերցնում եյինք միայն մեկը տնտեսական միջոցների ամբողջ բարդ շրջանառութիւնը հորձանքից: Իրապես, շրջանառութիւնը կատարվում է միաժամանակ միջանի գուղահեռ հասանքներով: Որինակ՝ լերբ միջոցների մի մասը դրամից վորև-վում է բանվորական ուժի և արտադրութեան միջոցների՝ արտադրական պրոցեսում մասնակցելու համար. միջոցների մյուս մասը թողնում է արտադրական պրոցեսը և հանդես է գալիս վորպես պատրաստի արտադրանք, իսկ յերբորդ մասը պատրաստի արտադրանքի

վիճակից լինում է և վերածվում դրամի: Ուստի և հաշվեկշիռի ապտիվն իրապես պարունակում է վոր թե վորևե մեկը այդ տարրերից առանձին վերցրած, ինչպէս, որինակ՝ դրամը, արտադրութիւնը, պատրաստի արտադրանքը, այլ բոլոր այդ տարրերը ամբողջականութիւնը:

Ընդդէմ այդպէս էլ պատսիվը վոր միայն պարունակում է պետական սկզբնական ֆոնդը և կուտակման ֆոնդը, կանխատրված գումարը կարող է ստացվի վոր միայն պետութեանից վորպես տնտեսական ֆոնդ, վոր տեականորեն ամբացվում է տվյալ տնտեսութեանը և կազմում նրա հետագա տնտեսական գործունեութեան դարգացման հիմնական ֆունդամենտը:

Տնտեսութեան գործունեութեան զարգացման համար անհրաժեշտ միջոցների վորոշ մասը կարող է կանխատրվել, որինակ՝ Պետական բանկի կողմից պլանային ֆինանսավորման կարգով: Կանխատրված գումարի կարելի է վերածել նույնպէս և անցյալ ժամանակաշրջանների այն կուտակո մները, վորոնք մնացել են տվյալ տնտեսութեան մեջ և նախորդված են հետագործելու, համաձայն վորոշ պլանային նախակումներին:

Քանի վոր հաշվեկշիռը հաշվարկվում է միատեսակ դրամական չափանիշով, ապա ապտիվի և պատսիվի հավասարութիւնը եյապես ներկայացնում է հավասարութեան մի թվական արտահայտութիւնը, վոր ըղխում է Մարքսի սխեմայից, այն է՝

$$P = T + Q.$$

Այս հավասարութեան ձախակողմյան մասը ներկայացնում է դրամական չափանիշով հաշվարկված հա-

վաքականությունը տնտեսական բոլոր ռեսուրսների,— սա յե ակտիվ: Հավասարութեան աջկողմյան մասը ներկայացնում է դրամական չափանիշով արտահայտված հավաքական ամբողջութունն այդ աւելուրների. վորոնցից ցրդիւի են այդ միջոցները,— սա յե պասսիվը: Այս եպրում ամբողջ հաշվեկշիռն ամոնարնդանուը ձևով կարելի յե ներկայացնել հետևյալ կերպ:

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Ակտիվը զանազան հաշիվներ . . . 7'		Կանխատր. դումարներ 7
		կուտակման ֆոնդ . 7
		7 + 7

Հենց  $7' = 7 + 7$  — հավասարութեան վրա յե հիմնված տնտեսութեան՝ հաշվեկշռային անդրադարձման այն առանձնահատկութունը, վոր նախենթադրում է ակտիվի և պասսիվի հավասարակշռականութունը ժամանակի ամեն մի մոմենտին:

Մենք առայժմ սահմանափակվեցինք տնտեսական միջոցների շրջանառութեամբ և նրա հաշվեկշռային անդրադարձմամբ՝ ամենարնդհանուը ձևով: Իսկապես՝ այդ շրջանապտուլտը յենթադրում է և ալ մոմենտների, մասնավորապես հաշվեհարդարային գործառնութուններ: Քննութեան առննքը հնարավոր տնտեսական գործառնութունների միջանի որինակ այն փոփոխութունների տեսակետից, վոր առաջ են բերում նրանք հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի՝ ակտիվի և պասսիվի մեջ:

**ՓՈՓՈՒՄԻՑՈՒՆՆԵՐ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՄԱՍԵՐՈՒՄ**

Քննելով հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ առաջացած փոփոխութունները, կարելի յե գալ այն

անվիճելի յեզրակացութեան, վոր հաշվեկշռային բոլոր փոփոխութունները, ներկայացնում են մի պարզ յեզրակացութուն, վոր ստացվում է տնտեսական իրական գործառնութուններից: Այս մտքով՝ հաշվեկշիռը անգրադարնում է ամբողջ տնտեսական դրութունն ու աշխատանքը, իսկ խորհրդալին եկոնոմիկայի պայմաններում՝ նաև տնտեսական աշխատանքների պլանի իրագործումը: Յուրաքանչյուր գործառնութունից նետո մեծք ունենում ենք տնտեսութեան նոր վիճակ, իսկ այդ նոր վիճակը իր արտացոլումն է գտնում դարձյալ հաշվեկշիռի մեջ. ըստ վորում հաշվեկշիռն անփոփոխ կերպով արտահայտում է տնտեսութունը յերկու հատուածներով, այն է՝ ըստ միջոցների գետեղման և ըստ այդ միջոցների աղբյուրների ծագման: Այս է, կրկնում ենք, տնտեսութեան և տնտեսական գործունիութեան հետագոտման հաշվեկշռային՝ մեթոդի առանձնահատկութիւնը:

Վերցնենք մի փոքրիկ թվական որինակ և դիտենք՝ ինչպես են բեկանվում հաշվեկշիռի մեջ տնտեսական գործառնութունները, ինչպիսի կոնկրետ փոփոխութուններ են տեղի ունենում հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ՝ տնտեսական գործառնութունների ազդեցութեան տակ:

Ասենք թե մենք ունենք ինչ վոր տնտեսութեան հետևյալ հաշվեկշիռը՝ գործառնութունների սկզբին.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դրամական միջոցներ . . .	1.000	տնտեսական ֆոնդ 65 000
արտադրութեան միջոցներ	60.000	Պետքանկ . . . . . 1.000
պատրաստի արտադրանք . . .	19 000	կրեդիտորներ . . . 3.000
	80.000	80.000

Ակներև ե, վոր գործառնութունների սկզբին մենք ունենք աւտիվի և պասսիվի հավասարութիւն: Յեթե աւտիվը նշանակենք Ա. առով, իսկ պասիվը՝ Պ տառով, ապա կատանանք.

$$Ա = Պ.$$

Դիցուք տվյալ տնտեսութեան մեջ, ժամանակի վորոշ հատվածում հետևյալ գործառնութիւններն են կատարվել (այս վարժութիւնները տեսական բնույթ են կրում):

Գործառնութիւն 1. իրացված ե պատրաստի արտադրանք՝ 1000 ուղբու, իր գնահատականի համաձայն: Գումարն ստացված ե կանխիկ:

Այս գործառնութիւնը փոխադարձ կապ ե առաջացնում պատրաստի արտադրանքի հաշվի և դրամական միջոցների հաշվի միջև: Պատրաստի արտադրանքի հաշվի մեջ կատարված փոփոխութիւնը զուգորդված ե դրամական միջոցների հաշվի փոփոխութեան հետ:

Քանի վոր մենք արտադրութեան արդյունքն իրացնում ենք, ապա, աւներև ե, մեր տնտեսութեան մեջ պատրաստի արտադրանքի պաշարի չափը պակասում ե: Հետևաբար, աւտիվի մի մասը, այն ե՝ պատրաստի արտադրանքինը, պակասում ե 1000-ով: Այսպես ե տեսական մտավորումը:

Այս գործառնութեամբ իրացված արտադրանքի համար մենք դրամ ենք ստանում: Ակներև ե՝ մեր տնտեսութեան մեջ կանխիկ միջոցների քանակը մեծանում ե: Հետևաբար, աւտիվի մյուս մասը՝ դրամա-

կան միջոցները՝ աւելանում ե 1000 ով: Փոփոխութիւնները սամանափակված են աւտիվի շ շասակում: Աւտիվի ընդհանուր գումարը չի փոփոխվում:

Հաշվեկշռային աղյուսակը, վոր դրաֆիկ ձևով արտահայտում ե տնտեսութեան վիճակն այդ գործառնութիւնից հետո, կարելի յե ներկայացնել հետևյալ կերպարանքով:

Աւտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դրամական միջոցներ . . . . .	2,000	Տնտեսական ֆոնդ 65,000
արտադրութեան միջոցներ 60,000		պետրանկ . . . . . 12,000
պատրաստի արտադրանք 18,000		կրեդիտորներ . . . . . 3,000
	80,000	80,000

Մաթեմատիկորեն այս գործառնութեան ֆորմուլան, հաշվեկշռի մեջ նրա արտաբոլման, հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ նրա առաջացրած փոփոխութիւնների տեսակետից, կարելի յե ներկայացնել այսպես:

$$Ա + 1000 - 1000 = Պ$$

$$Ա = Պ$$

Այսպիսով՝ աւտիվի և պասսիվի հավասարակշռութիւնը չի խախտվում:

Գործառնութիւն 2. Վճարման հանձնարարութիւնն ենք տալիս բանկին՝ կրեդիտորներին վճարելու 2000:

Այս գործառնութիւնը փոխադարձ կապ ե առաջացնում կրեդիտորների հաշվի և պետրանկի հաշվի միջև: Կրեդիտորների հաշվի փոփոխութիւնը զուգորդ-

վում ե պետրանկի հաշվի փոփոխութեան հետ: Վորովհետև կրեդիտորները հետ 2000 ի հաշվետեսութունն ե կատարվում, ապա այդ գումարի չափով տնտեսութեան պարտքը կրեդիտորներին պակաս մ ե: Հետեւաբար, պասիվի մի մասը, այն ե՝ կրեդիտորները հաշիվը փոքրանում ե 2000-ով:

Ի այց այդ գործառութեան հաշվեհարդարը կատարվում ե՝ մեր հանձնարարութեամբ՝ պետրանկի միջոցով: Մինչև այդ գործառութունը կատարվելու մոմենտը. պետրանկն արդեն ֆինասավորել եր մեր տնտեսութունը 12000-ով: Այժմ պետրանկի կողմից մեր տնտեսութեան ֆինասավորումը մեծանում ե նա 2000. ով: Հետևաբար, այս գործառութեամբ պասսիվի մյուս մասը, այն ե՝ պետրանկի հաշիվը, մեծանում ե 2000 ով Փոփոխութունը ներկայացնում ե միայն պասսիվի շրջանակներում Պ սսսիվի ընդհանուր գումարը չի փոփոխվում:

Հաշվեկշռային աղյուսակը, վոր գրաֆիկ ձևով արտահայտում ե տնտեսութեան վիճակն այդ գործառութունից հետո, կարելի յե պատկերացնել այսպես:

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ	
Դրամական միջոցներ	2000	տնտեսական ֆոնդ	65.000
արտադրութեան միջոցներ	60.000	Պետրանկ	11.000
պատրաստի արտադրանք	18.000	կրեդիտորներ	1.000
	80.000		80.000

Մաթեմատիկորեն տվյալ գործառութեան ֆորմուլան, նրա հաշվեկշռային անդրադարձման, այսինքն՝ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ նրա առաջացրած

փոփոխութունները տեսակետից, կարելի յե ներկայացնել այսպես,

$$Ա = Պ + 2000 - 2000.$$

$$Ա = Պ$$

Ակտիվի և պասսիվի հավասարակշռութունն այս գործառութունից հետո չի խախտվում

Գործառութուն 3. Ձեռք են բերված արտադրութեան միջոցներ՝ 4000 ո. գումարի: Հաշիվը մատակարարողի հետ տեսնվում ե պետրանկի միջոցով՝ անկանխիկ ձ ով:

Այս գործառութունը փոխադարձ կապ ե առաջ բերում արտադրութեան միջոցների հաշիվի և պետանկի հաշիվի միջև: Քանի վոր մենք արտադրութեան միջոցներ ենք ձեռք բերում, ուստի ակնրև Լ՝ արտադրութեան միջոց երև ընդհանուր գումարը մեր տնտեսութեան մեջ մեծանում ե: Ակտիվի մի մասը, այն ե՝ արտադրութեան միջոցները, մեծանում ե 4000-ով: Հետևաբար, ակտիվի բաղկացուցիչ մասերի մեջ փոփոխութունն ե առաջանում մեծանալու ուղղութեամբ:

Միաժամանակ, մեր գործառութունը փոփոխութունն ե առաջ բերում պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ: Գործառութեան պայմանի համաձայն, մատակարարողի հետ հաշիվ ե տեսնվում պետրանկի միջոցով անկանխիկ ձևով: Ակներև ե, վոր այդ գործառութեան հետևանքով բանկը լրացուցիչ կերպով ֆինասավորում ե մեր տնտեսութունը 4000 ով: Հետևաբար, Պետրանկի հաշիվը պասսիվում ավելանում ե այդ գումարով: Փոփոխութունն ե առաջանում պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ՝ մեծանալու ուղղութեամբ:

Ֆորժառնութիւնն ամբողջութեամբ վերցրած առաջ ե բերում փոփոխութիւնն և՛ ակտիվի բաղկացուցիչ մասերի մեջ և՛ պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ, ըստ վորում՝ ակտիվի հավաքական մեծութեան ավելանալը կապվում է պասսիվի հավաքական մեծութեան նույնաքանակ ավելացման հետ:

Հաշվեկշռային աղյուսակը, վոր գրաֆիկ ձևով արտահայտում է տնտեսութեան վիճակն այս գործառնութիւններից հետո, կարելի յե ներկայացնել այսպես.

Ակտիվ	Հաշվեկշիւ	Պասսիվ
Դրամական միջոցներ	2000	տնտեսական ֆոնդ 65000
արտադրութեան միջոցներ	64000	պետրանկ
պատրաստի արտադրանք	18000	կրիզիտորներ
	84000	84000

Մաթեմատիկորեն տվյալ գործառնութեան ֆորմուլան, նրա հաշվեկշռային անդրադարձման, այսինքն՝ բալանսի բաղկացուցիչ մասերի մեջ նրա առաջացրած փոփոխութիւնների տեսակետից, կարելի յե ներկայացնել այսպես.

$$U + 4000 = \mathcal{Q} + 4000$$

$$U = \mathcal{Q}$$

Բալանսի գումարը մեծացավ: Ակտիվի և պասսիվի հավասարակշռականութիւնը չխախտվեց:

Գործառնութիւն 4. Պետրանկն և մուծված կանխիկ՝ 1 500

Այս գործառնութիւնը փոխադարձ կապ է առաջ

բերում դրամական միջոցների հաշվի և Պետրանկի հաշվի միջև: Դրամական միջոցների հաշվի մեջ կատարված փոփոխութիւնը գուզորդվում է Պետրանկի հաշվի փոփոխութեան հետ: Քանի վոր մենք Պետրանկն ենք մտնում կանխիկ դրամով. ապա, ակներև է՝ մեր տնտեսութեան մեջ կանխիկ միջոցների քանակը փոքրանում է Ակտիվի մի մասը, այն է՝ դրամական միջոցները, փոքրանում է 1.500 ով: Հետևաբար, փոփոխութիւնն է կատարվում ակտիվի բաղկացուցիչ մասերի մեջ՝ փոքրանալու ուղղութեամբ:

Միաժամանակ այս գործառնութիւնը փոփոխութիւնն է առաջացնում և պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ: Քանի վոր դրամը մենք մուծում ենք Պետրանկ, ապա՝ դրա հետևանքով, Պետրանկի կողմից մեր տնտեսութեան ֆինասավորման քանակն այդ մոմենտից նվազում է 1.500-ով: Ուրեմն, պասսիվի մի մասը այն է՝ Պետրանկի հաշիվը, այդ գումարի չափով փոքրանում է: Փոփոխութիւնն է առաջանում պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ՝ փոքրանալու ուղղութեամբ:

Գործառնութիւնը, ամբողջութեամբ վերցրած, փոփոխութիւնն է առաջացնում ակտիվի և պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ ըստ վորում ակտիվի հավաքական մեծութեան փոքրանալը գուզորդվում է պասսիվի մեծութեան նույնաչափ փոքրանալու հետ:

Հաշվեկշռային աղյուսակը, վոր գրաֆիկ ձևով արտահայտում է տնտեսութեան վիճակն այս գործառնութիւնից հետո, կարելի յե ներկայացնել հետևյալ կերպ:

Ակտիվ	Հաշվեկշիւ	Պասսիվ
Դրամական միջոցներ . . .	500	տնտեսական ֆոնդ 65.700
արտադրութեան միջոցներ 64.000		Պետրանկ . . . 16.500
պատրաստի արտադրանք 18 000		կրիզիտորներ . . . 1.000
	82.500	82.500

Մաթիմատիկոսներն, տվյալ գործառնությունն ֆորմուլան, նրա բաղաձայնին անդրադարձման, այսինքն՝ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ նրա առաջացրած փոփոխությունները տեսակետից, կարելի յե ներկայացնել այսպես.

$$U - 1.500 = \eta - 1.500$$

$$U = \eta$$

Հաշվեկշռի գումարը փոքրացավ: Ակտիվի և պասսիվի հավասարակշռությունը չխախտվեց:

Մենք դարձյալ գալիս ենք այն յեղրակացություն, վոր ակտիվի և պասսիվի հավասարակշռակա՞նությունն անընդհատ ե:

### ԲԱԼԱՆՍԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ

Մենք տեսանք վոր յուրաքանչյուր տնտեսական գործառնություն փոփոխություններ ե առաջ բերում հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ.

Հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ յեղած փոփոխություններն, այս իմաստով, հետևանք են հանդիսանում այն գործառնությունների, վորոնք տեղի յեն ունենում տնտեսության մեջ պլանի կատարման հիման վրա: Յեթե խմբավորենք այն բոլոր փոփոխությունները, վորոնք կատարվուս են տնտեսական գործառնությունների ազդեցության տակ՝ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում, ապա կգանք հետևյալ յեզրակացություն:

Միջանի պրոցեսներ փոփոխություններ են առաջացնում միայն տնտեսական ուսուրսները բաղկա-

ցուցիչ մասերում՝ նրանց տեղավորման տեսակետից: Այլ պրոցեսներ փոփոխություններ են առաջացնում տնտեսական ուսուրսների աղբյուրների կապի մեջ: Վերջապես, կարող են լինել գործառնություններ, վորոնք միտժամանակ փոփոխություններ են առաջ բերում պասիվի և պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ: Յեկնելով սրանից, տնտեսական գործառնությունների ազդեցությունները առաջացած բոլոր հաշվեկշռային փոփոխությունները հաշվեկշռի տեսակետից կարելի յե բաժանել հետևյալ չորս տիպերի.

- 1) փոփոխություններ ակտիվի բաղկացուցիչ մասերի մեջ:
- 2) փոփոխություններ պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ.
- 3) փոփոխություններ ակտիվի և պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ՝ մեծանալու ուղղությամբ.
- 4) փոփոխություններ ակտիվի և պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ՝ փոքրանալու ուղղությամբ:

Գիտենք փոփոխությունների այդ տիպերը՝

ա) Հաշվեկշռային փոփոխությունների առաջին տիպ:

Հաշվեկշռային փոփոխությունների առաջին տիպը տեղի յե ունենում այն դեպքում, յերբ տնտեսական գործառնությունները փոփոխություններ են առաջ բերում միայն ակտիվի բաղկացուցիչ մասերում: Այս դեպքում, տնտեսական գործառնությունների ազդեցության տակ, ակտիվի մի մասը մեծանում ե վորոշ քանակով, իսկ նույն ակտիվի մյուս մասը փոքրանում ե նույնքան: Հաշվեկշռային բեկման մեջ գործառնու-

Թյունը սահմանափակվում է միայն ակտիվի շրջանակներում: Սա ակտիվային փոփոխութունն է:

Այդպիսի գործառությունները կարող են հանդես գալ կամ վորպես տեղափոխումն արտադրության միջոցների կազմի մեջ, կամ՝ շրջանառության միջոցների կազմի մեջ, կամ վորպես միջոցների անցումն արտադրության շրջանակից շրջանառության շրջանակը, կամ ընդհակառակը:

Գործառություններին այս տիպը հաշվեկշռի մեջ անդրադառնում է այսպես.

Ակտիվ	հաշվեկշիռ	պասսիվ
Ավելացում (+) . . . . .		Ձի փոփոխում . . . . .
պակասում (-) . . . . .		

Եթե ակտիվի մեծութունը նշանակենք Ա տառով, իսկ պասսիվը՝ Պ տառով, գործառություններին գումարը՝ Գ տառով, այն ժամանակ այս տիպի գործառություններին ֆորմուլան հաշվեկշռային բեկման մեջ կարելի յե արտահայտել այսպես:

$$A + P - P = Q.$$

Որինակ՝ զանազան նյութերի ձեռք բերելը՝ կանխիկ հաշվով:

բ) Հաշվեկշռային փոփոխությունների յերկրորդ տիպը:

Հաշվեկշռային փոփոխությունների յերկրորդ տիպ տեղի յե ունենում այն դեպքում, յերբ տնտեսական գործառությունները փոփոխություններ են առաջացնում միայն պասսիվի բաղկացուցիչ մասերում: Այս դեպքում տնտեսական գործառությունների ազդե-

ցության տակ պասսիվի մի մասը մեծանում է վորոշ չափով, իսկ մյուս մասը փոքրանում է նույնչափ: Հաշվեկշռային բեկման մեջ գործառությունը սահմանափակվում է միայն պասսիվում: Սա պասսիվային փոփոխությունն է:

Այսպիսի գործառությունները լինում են սովորաբար վերախմբավորումներ՝ տնտեսական ռեսուրսների ծագման աղբյուրների բաղկացուցիչ մասերում:

Տնտեսական ռեսուրսների ծագման աղբյուրների կազմի մեջ առաջ յեկած այս վերախմբավորումն առաջ է բերում հասարակ տեղափոխումն պասսիվի բաղկացուցիչ մասերի, այն է՝ տեղափոխութուն անձեռնմխելի աղբյուրների կազմում, կամ ձեռնմխելի աղբյուրների կազմում, կամ անցումն աղբյուրների խմբի մեկից մյուսը:

Գործառությունների այս տիպը հաշվեկշռի մեջ անդրադառնում է հետևյալ ձևով:

Ակտիվ	հաշվեկշիռ	պասսիվ
-------	-----------	--------

Անփոփոխ . . . . .	ավելացում (+) . . . . .
	պակասում (-) . . . . .

Հաշվեկշռային բեկման մեջ գործառությունների այս տիպի մաթեմատիկական ֆորմուլան կարելի յե արտահայտել այսպես.

$$A = Q + P - P$$

Որինակ՝ Պետրանկը վճարում է կրեդիտորներին մեր տնտեսության պարտքը:

զ) Հաւելեկոռային փոփոխութիւններ յերրորդ տիպը:

Հաշվեկշռային փոփոխութիւններ յերրորդ տիպը տեղի չե ունենում այն դեպքում, յերբ տնտեսական փոփոխութիւնները առաջ են բերում փոփոխութիւններ ակտիվի և պասսիվի մեջ՝ ավելացման ուղղութիւնով: Այս դեպքում տնտեսական գործառնութիւնների ազդեցութեան տակ ակտիվի մի սասը մեծանում է վորոշ չափով և նույն չափով մեծանում է պասսիվի մի մասը: Հաշվեկշռային բեկման մեջ այս գործառնութիւնն ըրդրկում է ակտիվը և պասսիվը, ըստ վորում ակտիվի մեծացումն ուղեկցվում է պասսիվի հավասարաչափ մեծացումով: Սա ակտիվ-պասսիվային փոփոխութիւնն է՝ մեծացման ուղղութիւնով:

Այս գործառնութիւնը վկայում է, վոր տնտեսութեան մեջ արտադրութեան կամ շրջանառութեան նոր միջոցներ են հանդես յեկել, վորոնց ծագման աղբյուրները միաժամանակ գրանորվում են պասսիվի մեջ:

Գործառնութիւնների այս տիպը հաշվեկշռի մեջ արտահայտվում է այսպես.

Ակտիվ                      Հաշվեկշիռ                      Պասսիվ

ավելցումն (+) . . . . . |    ավելցումն (+) . . . . .

Գործառնութիւնների այս տիպի հաշվեկշռային բեկման մաթեմատիկական ֆորմուլան կարելի չե արտահայտել այսպես.

$$Ա + Գ = Պ + Գ$$

Որինակ՝ այս կամ այն միջոցների ստացումը՝ անկանխիկ հաշվետեսութեամբ՝ Պետրանի միջոցով:

դ) Հաւելեկոռային փոփոխութիւնների չորրորդ տիպը:

Հաշվեկշռային փոփոխութիւնների չորրորդ տիպը տեղի չե ունենում այն դեպքում, յերբ տնտեսական գործառնութիւնները փոփոխութիւններ են առաջ բերում ակտիվի և պասսիվի բաղկացուցիչ մասերի մեջ՝ պակասման ուղղութիւնով: Այս դեպքում, տնտեսական գործառնութիւնների ազդեցութեան տակ, ակտիվի մի մասը փոքրանում է այս կամ այն մեծութեամբ, և միաժամանակ նույն մ ծութեամբ փոքրանում է պասսիվի վորնե մաս: Հաշվեկշռային բեկման մեջ այս տնտեսական գործառնութիւնն ընդգրկում է ակտիվը և պասսիվը, ըստ վորում ակտիվի պակասումը բալանսում փոխատուցվում է պասսիվի հավասարաչափ պակասումով: Սա ակտիվ-պասսիվային փոփոխութիւնն է՝ պակասման ուղղութիւնով:

Այս գործառնութիւնը վկայում է, վոր տնտեսութիւնից արտադրութեան կամ շրջանառութեան միջոցների վորոշ գումար դուրս է գնացել, և միաժամանակ նույն գումարով պակասել է ծագման աղբյուրների գումարը:

Գործառնութիւնների այս տիպը հաշվեկշռի մեջ արտահայտվում է հետևյալ ձևով.

Ակտիվ                      Հաշվեկշիռ                      Պասսիվ

պակասումն (—)                      |                      պակասումն (—)

Հաշվեկշռային բեկման մեջ գործառնութիւնների այս տիպի մաթեմատիկական ֆորմուլան կարելի չե արտահայտել այսպես.

$$Ա - Գ = Պ - Գ$$

Որինակ՝ մեր մուծումները Պետրանի նրա ֆինասավորումը հազցնելու համար:

Տեսնենք այժմ, թե հաշվեկշռային փոփոխությունները մեր քննարկած տիպի համար ինչն է հանդիսանում բնորոշ: Ըստ վորում, նախ՝ քննենք փոփոխությունների առաջին յերկու տիպերը, ապա՝ յերկրորդները:

Ի՞նչն է բնորոշ առաջին յերկու տիպի համար:

ա) Փոփոխությունների առաջին յերկու տիպի համար բնորոշն այն է, վոր այդ փոփոխությունները պարափակվում են՝ կամ միայն ակտիվի մեջ (այս ակտիվային փոփոխություններն են), կամ միայն պասսիվի մեջ (այս պասսիվային փոփոխություններն են):

բ) հաշվեկշռային փոփոխությունների առաջին յերկու տիպերի համար բնորոշ է նաև այն, վոր ակտիվի կամ պասսիվի մի հաշվի մեջ կատարված ավելացումը առաջ է բերում միաժամանակ պակասումն համապատասխան ակտիվի և պասսիվի մյուս հաշվի մեջ:

գ) հաշվեկշռային փոփոխությունների առաջին յերկու տիպերի համար բնորոշն այն է նույնպես, վոր այդ փոփոխությունները հասարակ տեղափոխություններ են՝ կամ ակտիվի բաղկացուցիչ մասերում — ակտիվային փոփոխման դեպքում, կամ՝ պասսիվի բաղկացուցիչ մասերում — պասսիվային փոփոխման դեպքում: Ուրիշ խոսքով՝ սա մի հասարակ վերախմբավորումն է տնտեսական ռեսուրսների տեղավորման գծով կամ սըրանց ծագման գծով:

Ոտարերկրյա հեղինակների տերմինաբանությամբ՝ ակտիվային և պասսիվային փոփոխություններ կոչվում են տեղափոխման գործառնություններ կամ պերմուտացիաներ:

Ի՞նչն է բնորոշ հաշվեկշռային փոփոխություն-

ների յերկրորդ յերկու տիպերի փոփոխությունների համար:

ա) հաշվեկշռային փոփոխությունների յերրորդ և չորրորդ տիպի համար բնորոշ է այն, վոր այդ փոփոխությունները միաժամանակ դիպում են և՛ ակտիվին և՛ պասսիվին:

բ) հաշվեկշռային փոփոխությունների այս յերկու տիպերի համար բնորոշ է նաև այն, վոր այդ փոփոխությունները յերկու դեպքում ել ունենում են կամ պլուս նշան (դրանք ակտիվա-պասսիվային փոփոխություններն են մեծացման ուղղությամբ), կամ՝ մինուս նշան (սրանք ակտիվա-պասսիվային փոփոխություններն են՝ փոքրացման ուղղությամբ): Այսպիսով ակտիվի բաղկացուցիչ մասերի մեծացումն առաջ է բերում հավասարամեծ մեծացում՝ պասսիվի բաղկացուցիչ մասերում: Ընդհակառակն, ակտիվի մասերի փոքրացումը նույնաչափ փոքրացումն է առաջացնում պասսիվի բաղկացուցիչ մասերում:

գ) հաշվեկշռային փոփոխությունների վերոհիշյալ տիպերի համար հատկանշական է նաև այն, վոր այդ փոփոխությունները փոխհատուցում են միմյանց: Այս տեղ անհրաժեշտ է նկատել հետևյալը: Մինչդեռ միայն ակտիվի կամ միայն պասսիվի փոփոխությունների դեպքում հաշվեկշռի հավաքական զուգումը մնում է անփոփոխ, ակտիվա-պասսիվային փոփոխումները մեջ մենք տեսնում ենք կամ ցուրտ դահեռ միացում, կամ զուգահեռ փոքրացում՝ ակտիվի և պասսիվի հավաքական զուգման մեջ:

Ոտար հեղինակների տերմինաբանությամբ՝ ակտիվա-պասսիվային փոփոխությունները կոչվում են

փոխհատուցման գործողութիւններ կամ կոմպենսա-  
ցիաներ:

Կասկածից դուրս է, վոր հաշվեկշռի բաղկացու-  
ցիչ մասերում կատարվող մեր քննարկած փոփոխու-  
թյունները եյապեսներկայացնուած են վոչ այլ ինչ, քան  
այն փոփոխութիւնների հաշվեկշռային արտացոլումը,  
վորոնք տնտեսական գործողութիւնների ազդեցու-  
թյան տակ և տնտեսական աշխատանքների ուրվա-  
պծած պլանի հիման վրա կատարվել են հենց իր՝ տնտե-  
սութեան կառուցվածքի և բաղկացուցիչ մասերի մեջ,  
Հենց այս իմաստով ել հաշվեկշիռն անդրադարձնում է  
ամբողջ տնտեսութեան գրութիւնը. հաշվեկշիռն ան-  
դրադարձնում է տնտեսական աշխատանքների պլանի  
կատարումը, հաշվեկշիռը դրսևորում է այդ պլանի կա-  
կատարման հետ կապված տնտեսական գործուեցու-  
թեան պրոցեսները: Անովասիկ հաշվեկշռային փո-  
փոխութիւնների այն իմաստովները, վորոնք առա-  
ջանում են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում՝ տըն-  
տեսական գործողութիւնների ազդեցութեան ներքո:

Սակայն, չի կա, ելի մոռացութեան տալ, վոր տըն-  
տեսական գործողութիւնների խմբավորումը՝ հաշվե-  
կշռի բաղկացուցիչ մասերում առաջացած փոփոխու-  
թյունների տեսակետից, զուտ ձեվական բնույթ են  
կրում: Այստեղ ծանրութեան կենտրոնը ուղղվում է  
դեպի գործողութիւնների խմբավորումը՝ հաշվեկշռի մեջ  
նրանց առաջացրած փոփոխութիւնների տեսանկյունից:  
Տնտեսական գործողութիւնների քննութեան այսպի-  
սի զուտ ձեվական բնույթը այն հետեանքն ունի, վոր  
այստեղ մշուշապատվում է տնտեսութեան մեջ կատար-  
ված գործողութիւնների տնտեսական բովանդակու-

թյունը: Հորցի այսպիսի ձևական լուսարանումն այն  
հետեանքն է տալիս, վոր այստեղ բովանդակագուրկ  
է դառնում հաշվեկշռի մեջ արտացոլած տնտեսական  
գործողութիւնների տնտեսական բնույթը: Ահա թե  
ինչն է չի կարելի մոռանալ, վոր հաշվեկշռային փոփո-  
խութիւնների մեր քննարկած տիպերը զուտ ձևա-  
կան խմբավորումն են տնտեսական գործողութիւննե-  
րի՝ հաշվեկշռի պասսիվի և ակտիվի վրա թողած նրանց  
ազդեցութեան տեսակետից:

Իրապես՝ ամեն մի տնտեսական գործողութիւն  
թափանցված է տնտեսական առաջքով, հազեցած է  
վորոշ տնտեսական բովանդակութեամբ: Պլանային-  
տնտեսական բովանդակութեան տեսակետից՝ կարելի  
է ընդհանուր գծով ուրվագծել ընթացիկ տնտեսա-  
կան գործողութիւնների հետեյալ հիմնական կատե-  
գորիաները:

Առաջին՝ այն գործողութիւնները, վորոնցով  
տնտեսութիւնը պատրաստում է իր տնտեսական գոր-  
ծուեցութեան զարգացման համար անհրաժեշտ միջոց-  
ների պաշար: Այս գործողութիւններով տնտեսու-  
թիւնը մատակարարման ֆունկցիա չէ կատարում:  
Այսպիսով տնտեսական գործողութիւնների առաջին  
կատեգորիա կարելի է համարել ստատիկարման գոր-  
ծողութիւնը:

Յերկրորդ՝ այն գործողութիւնները, վորոնք իրա-  
կանացնում են արտադրական պրոցեսը: Այս գոր-  
ծողութիւններով տնտեսութիւնը կատարում է ար-  
տադրական ֆունկցիա: Այսպիսով տնտեսական գոր-  
ծողութիւնների յերկրորդ կատեգորիա կարելի է  
համարել արտադրութեան գործողութիւնը:

Յերբորդէ՝ այն գործողութիւնները, յերբ տնտեսութիւնը պլանային-կազմակերպչական շարժման կարգով բաց թողնում իր արտադրանքը: Կատարելով արտադրանքի հետագա շարժողութեան հետ կապված այդ գործողութիւնները՝ տնտեսութիւնը իրականացնում է սպառման ֆունկցիա: Այսպիսով՝ տնտեսական գործողութիւններ յերբորդ կատեգորիա կարելի է համարել այն գործողութիւնը, վոր պայմանական կերպով կոչվում է սպառման գործողութիւն: Վերջապես, արտաքուստ մի քիչ առանձնացած գործողութիւններ յի կատեգորիա ևս. այդ այն գործողութիւններն են, վորոնց նպատակն է տնտեսութեան արտադրական հրապարակն ընդլայնել և տնտեսութիւնը բարձր տեխնիկական բազայի վրա դնել: Այլ խոսքով՝ այստեղ մենք ունենք տնտեսութեան հիմնական սիջոյների վերակառուցման վերաբերյալ գործողութիւններ:

Տնտեսական գործողութիւնների վերոհիշյալ հիմնական կատեգորիաները կապված են վորոշ ծախսերի հետ: Ակներն են, ալդպիսի ծախսեր են հանդիսանում. առաջին՝ մատակարարման ծախսերը, յերկրորդ՝ արտադրութեան ծախսերը, յերրորդ՝ սպառման ծախսերը, չորրորդ՝ վերակառուցման ծախսերը:

Ընդհանուր ձևով խմբավորված՝ այս բոլոր ծախսերը կարելի է յերկու հիմնական սլունակի բաժանել. ա) արտադրութեան ծախսեր և բ) օրգանառութեան ծախսեր, վորոնք վերափոխվում են բաշխման ծախսերի: Այստեղ ծախսերի մի մասը վերակառուցում է պատրաստի արտադրանքի մեծութեան մեջ, մյուս մասը ներկայացնում է հանուն կուտակման ֆոնդից:

Ուրեմն, բոլոր գործողութիւնները կարելի է դիտել նաև կուտակման մեծութեան վրա նրանց թողած ազդեցութեան տեսակետից: Սրա համաձայն՝ տնտեսութեան գործողութիւնները կարող են լինել յերկու տեսակի 1) գործողութիւններ, վորոնք ազդում են կուտակման վրա՝ մեծացման կամ փոքրացման ուղղութեամբ, 2) գործողութիւններ, վորոնք չեն ազդում կուտակման մեծութեան վրա: Իր հերթին՝ կուտակումների հարցը հենվում է ռաջիոնալիզացիայի, ալտադրութեան և շրջանառութեան ծախսերի իջեցման պորթլեմի վրա:

ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄԵՆԱԳԱՐԶ ՁԵՎԸ

Վերևում մենք քննարկեցինք առանձին տնտեսական գործողութիւնների անդրադարձումը հաշվեկշռի մեջ: Ընդգծելով այդ գործողութիւնների ազդեցութիւնն ալտիվի և պասիվի բաղկացուցիչ մասերի վրա, մենք, միաժամանակ, յուրաքանչյուր գործողութիւնից հետո գծում եյինք հաշվեկշռի նոր աղյուսակ: Այդ արվում էր, նախ՝ նրա համար, վոր տնտեսութեան և տնտեսական գործունեութեան՝ հաշվեկշռային արտահայտութեան վրա հիմնված հաշվառքային ամբողջ տեխնիկայի եյութիւնն ու կմախքը պատկերավորեյինք: Սակայն կամ անհրաժեշտութիւն նոր հաշվեկշռային աղյուսակ կազմելու յուրաքանչյուր գործողութիւնից հետո: Այդպիսի կարիք իրապես չկա:

Հաշվառքային տեխնիկայի եյութիւնն ու կմախքը պատկերավորելու համար կարելի է ոգտվել գրանցման ափելի պարզ ձևերով: Տնտեսական գործողութիւնների ազդեցութեան տակ կատարված հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի փոփոխութիւնների բնույթն

ու կմախքը կարելի լին ցուցադրել զբանցման ավելի պարզ և ավելի ցայտուն ձևով:

Գրանցման այդ ձևը հետևյալն է: Հաշվեկշիռ բաղկացուցիչ մասերը շարվում են մեկը մյուսի հետևից: Ըստ վորում, նախ՝ կատարվում է ակտիվի բոլոր հաշիվները թվարկումը, ապա՝ պասսիվի: Առանձին հաշիվները մեջ՝ տնտեսական գործողութունների ազդեցության տակ կատարվող բոլոր փոփոխութունները հետզհետե նշանակվում են առանձին-առանձին տողերում: Հաշիվները մեջ կատարված փոփոխութունները՝ մեծացման կամ փոքրացման ուղղութիւնք, նշանակվում են համապատասխանաբար՝ + կամ — նշաններով: Գրանցումը վերջացնելուց հետո պարզվում է մնացորդն ըստ յուրաքանչյուր հաշիվի և կազմվում է հաշվեկշիռային աղյուսակ՝ գործողութուններից հետո:

Վերը բերած տնտեսական գործողութունների հետևանքով հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերը մեջ կատարված փոփոխութունների վերոհիշյալ որինակի զբանցումները պարզեցրած ձևը կարելի լին տալ հետևյալ կերպ

**Ա կ տ ի վ**

Դրամական միջոցներ .	1.000 + 1 000 — 1.500 =	500
Արտադրութ. միջոցներ	60 000 + 4.000	= 64 000
Պատրաստ. արտադրանք	19 000 1.000	= 18 000
	<hr/>	
	80.000	82.500

**Պ ա ս ս ի վ**

Տնտես. ֆոնդ	65.000	= 65 000
Պտրանկ	12 000 — 2000 + 4000 — 1.500	= 16.500
Կրեդիտորներ	3000 — 2000	= 1000
	<hr/>	
	80.000	82.500

Այս որինակից լերևում է, վոր հաշվեկշիռային աղյուսակը կարող է կազմվել հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ կատարված բոլոր փոփոխութուններից գրանցումներից հետո միասին և վոր թե յուրաքանչյուր գործողութունից հետո: Իսկ ինչ վերաբերում է այն միջանկյալ փոփոխութուններին, վորոնք կատարվում են տնտեսական գործողութունների ազդեցությամբ, հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ, ապա նրանք նշանակվում են յուրաքանչյուր առանձին հաշիվի մեջ + կամ — նշանով:

Գրանցման այս ձևը զգալի չափով կրճատում է ընթացիկ աշխատանքը և միաժամանակ բավականաչափ ցայտուն պատկեր է տալիս հաշվեկշիռային փոփոխութունների ելության և բնույթի մասին:

**ՑՈՒՑՄ ՈՒՆՔՆԵՐ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վեցերորդ թեման նվիրված է ամենապարզ գործառնութունների վերլուծման, վորոնք առաջանում են տնտեսական գործունեյության զարգացման արդյուքում: Այդ գործառնութունները վերլուծված են հաշվեկշիռում նրանց արտադրված տեսակետից: Յեվ քանի վոր հաշվեկշիռը տնտեսության և տնտեսական գործունեյության արտահայտիչն է, ուստի, ակներև է, վոր յուրաքանչյուր տնտեսական գործառնութուն պետք է յուր արտացույցը գտնի հաշվեկշիռի մեջ, փոփոխելով կամ ակտիվը, կամ՝ պասսիվը կամ՝ թե՛ այս և թե՛ այն միասին: Այս իմաստով, հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ տեղի ունեցած փոփոխութունները պարզ հետևվանքներ են իրական տնտեսական գործառնութունների:

Գիտութեան մեջ գործադրվող՝ տնտեսության և տնտեսական գործունեյութեան հետազոտութեան հաշվեկշռալին մեթոդի բնորոշ գիծն այն է, վոր նրա միջոցով զուգահեռաբար դրսեկտրվում են տնտեսութեան և տնտեսական գործունեյութեան տարրերը՝ ակտիվալին և պասսիվալին շարքերի վերածված: Սրա շնորհիվ մենք հլապես տալիս ենք տնտեսութեան միևնույն հավաքական զանգվածի կրկնակի բնութագրերը՝ զետեղման գրծով՝ — ակտիվում, ծագման գծով՝ պասսիվում: Ակտիվի և պասսիվի հավաքական մեծութեան այս հավասարութեան մեջ է կայանում այսպես կոչված՝ ակտիվի և պասսիվի հավասարակշռականութեան սկզբունքը:

Հաշվառքի հին տեսութեյունը, հաշվեկշռի մասերի մեջ կատարվող փոփոխութեյունները քննելիս, աշխատում եր ծանրութեան կենտրոնը տեղափոխել հաշվեկշռային փոփոխութեյունների մաթեմատիկական ձևակերպման բնագավառը, հենց սրանով վործատելով հաշվեկշռի հիմքում ընկած տնտեսական գործառնութեյունների իսկական տնտեսական բովանդակութեյունը: Հաշվեկշռային ձևի և սոցիալտնտեսական բովանդակութեան այսպիսի անջատումը միմյանցից անթուլլատրելի չէ:

Հետևաբար, հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ կատարված առանձին փոփոխութեյունները պետք է ուսումնասիրվեն իրական գործառնութեյունների հիմունքների վրա՝ դրսեկտրելով նրանց տնտեսական բունութեյունը: Դրա համար լավագույն միջոցը տնտեսական միջոցների շրջանառութեան քննութեյունն է, չեղակետ ընդունելով Մարքսի հայտնի սխեման: Այստեղ անհրաժեշտ է պարզել, թե ինչպես տնտեսական միջոցները շարժման պրոցեսի առանձին աստիճանները իրենց

անդրադարձումն են գտնում հաշվեկշռի մեջ և թե ինչպես է այդ բոլորը շաստվորվում ակտիվի և պասսիվի հյուսվածքի մեջ:

Կապիտալի շրջանառութեան վերլուծման՝ Մարքսի սխեմայի մեջ անհրաժեշտ է, իհարկե, համապատասխան ճշտումներ մտցնել համաձայնեցնելով խորհրդային սոցիալիստական պլանային տնտեսութեան պայմաններին:

Այս բոլորից հետո կարելի չէ փոքրիկ որինակաների միջոցով վերլուծել տնտեսական գործառնութեյունների ազդեցութեամբ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ յեղած փոփոխութեյունները: Մասնավորապես, անհրաժեշտ է ուշադրութեյուն դարձնել հաշվեկշռարալին գործառնութեյունների (расчетные операции) և պետբանկի հետ ունեցած փոխհարաբերութեյունների վրա:

Վարժութեյան համար քննարկելի տնտեսական գործողութեյուններն ավելի լավ է անդրադարձնել հաշվեկշռի մեջ նոր հաշվեկշռային աղյուսակ կազմելով՝ լուրաքանչյուր գործառնութեյունից հետո: Վարժութեյունների այս տեսակը մեծ նշանակութեյուն ունի հաշվառքի հաշվեկշռային մեթոդի ելութեյունն ու կմախքը լուրագնելու գործում: Հետագայում կարելի չէ անցնել հաշվեկշռային փոփոխութեյունների գրանցման ավելի պարզ ձևին՝ լուրաքանչյուր հաշվում պլլուս կամ մինուս նշան դնելով:

Դրանից հետո թեմայում քննութեյան են յինթարկվում տնտեսական գործառնութեյունների ազդեցութեամբ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ կատարվող հնարավոր չորս հիմնական տիպի փոփոխութեյունները: Դրանք են՝ 1. ակտիվային փոփոխութեյուն

2. պասսիվային փոփոխութունն. 3. ակտիվա-պասիվային փոփոխութունն՝ մեծացման ուղղությամբ և 4. ակտիվա-պասիվային փոփոխութունն՝ փոքրացման ուղղությամբ: Մակայն չպետք է մոռանալ, վոր այդ բաժանումը գուտ ձևական բնույթ է կրում և չի անդրադարձնում իր մեջ տնտեսութան մեջ կատարվող պլանային—տնտեսական գործառնությունների տնտեսական ելությունը: Ուստի անհրաժեշտ է, պլան-տնտեսային բովանդակության տեսակետից, տարբերել հետևյալ գործառնությունները՝ մատակարարման արտադրական և սպառման, նույնպես և հիմնական միջոցների վերականգնման: Միաժամանակ պետք է տարբերել՝ գործառնություններ, վորոնք ազդում են կուտակման մեծության վրա և գործառնություններ, վորոնք չեն ազդում:

### ԿԱՆՏՐՈՒԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւ է կայանում տնտեսական գործունեության պրոցեսների հետազոտման հաշվեկշռային մեթոդի ելությունն ու չուրահատկությունը:
2. Ի՞նչպես է անդրադառնում հաշվեկշռի մեջ տնտեսական միջոցների շարժողության պրոցեսը՝ Մարքսի սխեմայի հիման վրա:
3. Ինչո՞ւ հաշվեկշռի մեջ ակտիվի գումարը միշտ հավասար է լինում պասսիվի գումարին:
4. Վորոնք են այն շորտ տեսակի փոփոխությունները, վորոնք կարող են լինել հաշվեկշռի մեջ՝ տնտեսական գործառնությունների ազդեցության տակ:
5. Ինչո՞ւ է հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ

կատարվող ակտիվային և պասսիվային փոփոխությունների ելությունը:

6. Ինչո՞ւ է ելությունը հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ կատարվող ակտիվա-պասսիվային փոփոխությունների մեծացման ուղղությամբ և փոքրացման ուղղությամբ:

7. Ի՞նչ հիմնական կատեգորիաների կարելի է բաժանել տնտեսական գործառնությունները՝ նրանց պլանային-տնտեսական նշանակելության տեսակետից:

8. Ի՞նչպես կարելի է քննարկել գործառնությունները՝ տնտեսական ֆոնդերի քանակի վրա նրանց ունեցած ազդեցության տեսակետից:

### ԴԵԲԵՏ ՅԵՎ ԿՐԵԴԻՏ

#### ԴԵԲԵՏԻ ՅԵՎ ԿՐԵԴԻՏԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

«Դեբետ» և «կրեդիտ» տերմինները հաշվեկշռային հաշվառքի գիտության մեջ մեծ գործածական նըշանակութուն ունեն: Կարելի է ասել, վոր հաշվառքի գործնականում ամենատարածված տերմիններն են: Այս իմաստով, նրանք չափազանց տիպիկ են հաշվառքի հաշվեկշռային մեթոդի համար: Այստեղից պարզ է, թե ինչ մեծ դերական հետաքրքրութուն է ստանում այդ տերմինների սահմանումը:

Հայտնի է, վոր ամեն մի սահմանում բավարար չափով պարզաբանում է իր նշանակութունն առհասարակ միայն այն դեպքում, չերա նա միանգամայն սպառող ճշտութուն և պարզութուն ունի: Հակառակ դեպքում, այսպիսի սահմանումը ծառայում են սահմանելի գաղափարների աղավաղմանը և մթազնմանը: Սա-

կայն պետք է բացելուց ասել, վոր «դերետ» և «կրեդիտ» տերմինների բախտը չբանեց հաշվառքի հաշվեկշռային տեսութայն մեջ: Հենց այդ դերետի և կրեդիտի սահմանների մեջ մեր գրականութայն մեջ մած խայտարակետությունն է նկատվում: Այս հանգամանքը բնականորեն մեծ խառնաշփոթությունն է առջ բերում:

Ի՞նչ են դերետը և կրեդիտը: Սրանք տեխնիկական տերմիններ են հաշվեկշռային հաշվառքի մեջ:

Ի՞նչպես եր սահմանում դերետը և կրեդիտը հաշվառքի հին տեսությունը: Փոխանակ այս տերմինների իրական և կոնկրետ բովանդակութունը դրսևորելու, հին տեսությունը գերադասում եր գնալ ասենաթույլ դիմադրութայն գծով: Նա յիշում եր այդ տերմինների բառացի նշանակութունից:

Սակայն ի՞նչ են նշանակում «դերետ» և «կրեդիտ» տերմինները բառացի իմաստով: «Դերետ» և «կրեդիտ» տերմինները լատինական ծագումն ունեն: «Դերետ» բառը ծագում է լատինական *debeo, ere* բայից *dēbet* բառը բառացի նշանակում է «պարտ ե»: «կրեդիտ» բառը ծագում է լատինական *credo, ere* բայից: Բառացի՝ *credit* բառը նշանակում է՝ «նավատում ե» կամ «ուսիր»: Հաշվառքի հին թիորիան յիշում է դերետ և կրեդիտ տերմինների բառացի նշանակութունից, ուստի կրեդիտը և դերետը նա սահմանում եր վորպես՝ «պարտ ե» և «ուսիր»: Իրա համար ել անտեսական գործողութունների վերլուծման ժամանակ նա միշտ վորոնում եր այն հաշիվը, վորը «պարտ ե» և այն հաշիվը՝ վորը «ուսիր»: Այստեղից ել՝ հին տեսութայն և հաշվառքի լեզբակացություններն այն մա-

տին, թե մի հաշիվը «պարտ ե» մյուս հաշիվին: Այստեղից ել՝ հաշիվների գրանցման հին կազմակերպացած ձևը, յերբ մի հաշիվ գրվում եր ուղղակիան հոդովով, իսկ մյուսը՝ դրական, ինչպես, որինակ, կրեդիտորների հաշիվը՝ պետրանչի հոսովին, և այլն: Այս ձևը, ի հարկե՝ պետք է մեր էել:

Ուղիղ է արդյոք հաշվառքի հին տեսութայն պաշտպանած տեսակետը: Պայհանում են արդյոք հաշվակշռում իրենց սկզբնական նշանակութունը «դերետ» և «կրեդիտ» տերմինները: Այս հարցին պետք է սպառիչ վճռականությամբ տալ բացասական պատասխան: Անհրաժեշտ է հիշել, վոր մեր դիտութայն մեջ «դերետ» և «կրեդիտ» տերմինները վերջնականապես կորցնում են իրենց բառացի նշանակութունը: Այդ տերմինների նախկին բառացի իմաստը վաղուց կորել է. վաղուց արդեն այդ տերմինները դիմակազուրկ են դառել: Հին տերմինների տակ այժմ թագնվում է մի նոր, այլ բովանդակություն, վոր անվերադառնալիորեն կտրել է իր կապը նրանց նախկին, լատինական նշանակութունից: Ծիշտ այդպիսի ել հարկավոր է վճռականորեն մերժել դերետի և կրեդիտի վուլգար սահմանումը, վորպես հաշիվի աջ և ձախ կողմեր կամ թե՛ համապատասխանարար լելք և մուտք:

Կարող է հարց ծագել՝ արժե՞ արդյոք մեր պայմաններում ոգտվել այդ հնացած տերմիններով, ավելի լավ չե՞ միանգամայն ազատվել նրանցից: Մեր դիտութայն զորգացման ամբողջ տենդենցն անվիճելի կերպով խոսում է հոգուտ այն բանի, վոր այդ տերմինները յերկարատե կյանք չունեն, վոր խորհրդային հաշվառքի զարգացման հողի վրա նրանց կյանքը կարճ է:

Սակայն դրա հետ միասին, պետք է խոստովանել վոր ավյալ ետապում, մեր ժամանակակից պայմաններում, «դերեւտ» և «կրեդիտ» տերմինները դեռևս ունեն այն քան պրակտիկ նշանակություն, վորքան դեռևս լայն չափով տարածված են հաշվառքի պրակտիկայում: Ահա թե ինչու, մի կողմ թողնելով այն՝ թե «դերեւտ» և «կրեդիտ» տերմինները կարող են առհասարակ անհաշող ճանաչվել, առանձնապես հաշվեկշռային հաշվառքի գիտությունից զարգացման այժմյան ետապում, աշխատենք բաց անել այն իրական բովանդակությունը, վոր մենք տալիս ենք ներկայումս այդ տերմիններին:

Ի՞նչ բան են դերեւտը և կրեդիտը:

Դերեւտը և կրեդիտը—այդ չերբեք էլ «պարտ ե» և «ունի» չե, և վոչ էլ «մուտք» և «չելք» և վոչ իսկ հաշվի ալ և ձախ կողմերը:

Դերեւտ և կրեդիտ սահմանումը տալիս՝ պետք է յեղնել հետևյալ յեղեք հատկանիշներին.

Առաջին հատկանիշ. Դերեւտը և կրեդիտը, ամենից առաջ, յենթադրում են հաշվեկշռի գոյությունը: Ձի կարելի խոսել դերեւտի և կրեդիտի մասին, առանց յենթադրելու, վոր վորոշ հաշվեկշռ գոյություն ունի: Այս տեսակետից, կարելի չե ասել վորտեղ չկա հաշվեկշռ, վորտեղ չկա հաշվեկշռային հաշվառք, այնտեղ խոսք չի կարող լինել դերեւտի և կրեդիտի մասին:

Սակայն ի՞նչը՝ հաշվեկշռը անտեսությունից արտահայտիչն է: Հետևաբար, վորտեղ չկա անտեսություն իր հաշվեկշռային արտացոլմար, այնտեղ էլ չի կարող լինել դերեւտ և կրեդիտ: Ինչից է այդ:

Այդ նրանից է, վոր դերեւտի և կրեդիտի գաղափարներն իսկ անխղիւրորեն կապված են անտեսու-

թյան հաշվեկշռային անդրադարձման հետ, հենց դերեւտ և կրեդիտ գաղափարները անխղիւրորեն կապված են հաշվեկշռային հաշվառքի հետ: Դերեւտ և կրեդիտը անմիջականորեն բղխում են հաշվեկշռից, վորպես արտատեսություն և անտեսական գործունեությունից արտահայտիչից: Հաշվեկշռից դուրս՝ դերեւտը և կրեդիտը կորցնում են իրենց իմաստն ու նշանակությունը: Միայն վորոշ անտեսությունից գոյություն հողի վրա, վոր իր թվական արտահայտությունն է գտել հաշվեկշռի մեջ, կարելի չէ մտածնել դերեւտի և կրեդիտի գոյություն մասին:

Այստեղից մենք գալիս ենք ամենաառաջին, բայց և ամենարնգահաւուր յեղբակացություն, այն է՝ դերեւտ և կրեդիտ գաղափարներն անքակտելիորեն կապված են անտեսությունից հետ. դերեւտ և կրեդիտ գաղափարները անմիջականորեն բղխում են անտեսությունից հաշվեկշռային հաշվառքից բղխող հասկացողություններ են:

Յերկրորդ հատկանիշ. Սակայն վերևում ասածը չեւ չի սպառում դերեւտ և կրեդիտ հասկացողությունները: Դերեւտ և կրեդիտ հասկացողությունները յենթադրում են նաև հաշվեկշռի շարժողությունից զաղափարը: Դերեւտը և կրեդիտը կարող են հաշվեկշռում տեղ ունենալ միայն այն դեպքում, յերբ այդ հաշվեկշռը չէ գտնվում հանդիստ վիճակում, այլ շարժման մեջ է. յեթե հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում գաղափարան փոփոխություններ են կատարվում:

Բայց ի՞նչը՝ հաշվեկշռը անտեսություն և անտեսական գործունեություն արտահայտիչն է: Հետևաբար, հաշվեկշռի բաղկացուցիչ տարրերի մեջ յեղած փոփոխությունները վկայում են, վոր անտեսություն կապի

և կառուցվացքի մեջ ել փոփոխություններ են տեղի ունեցել: Հաշվեկշռի մեջ կատարվող փոփոխությունները վկայում են անտեսական գործողությունների գոյութեան մասին:

Իերեւոյը և կրեդիտը կարող են մտածվել միայն այն դեպքում, թե՛ն հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում փոփոխությունների փաստ կա, վորպէս հետեւանք անտեսական գործունեւթյան զարգացման պրոցեսի մեջ կատարված անտեսական գործառնություններին:

Այս տեսակետից կարելի յե լինվին ասել՝ վորտեղ չկա անտեսութեան շարժում, վորտեղ չկան տընտեսական գործառնություններ, վորոնք ազդեն հաշվեկշռի կազմի և կառուցվացքի վրա, այնտեղ խոսք չի կարող լինել դերեւտի և կրեդիտի մասին: Ինչից ե այդ:

Այդ նըրանից ե, վոր դերեւտ և կրեդիտ հասկացողութեւթյուններն ինքնին ելապէս տեխնիքական նշանակումներ են, պայմանական անվանումներ այն ուղղութեամբ, վորոնցով կատարվում են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ այն փոփոխությունները, վորոնք անտեսական գործառնությունների հետեւանքով կատարվում են հենց իր՝ անտեսութեան բաղկացուցիչ տարրերի մեջ: Տնտեսութեան շարժողությունից դուրս, վոր իր արտացոլումն ու թվական արաահայտութեւնն ե գտնում հաշվեկշռի մեջ, դերեւտը և կրեդիտը կորցնում են իրենց իմաստն ու նշանակութեւնը: Միայն անտեսական գործառնությունների հիման վրա, վորոնք շարժում և փոփոխութեւն են առաջ բերում հաշվեկշռի մեջ, կարելի յե մտածել դերեւտի և կրեդիտի ներկայութեան մասին:

Իսկ այստեղից մենք գալիս ենք յերկրորդ յեզրակացութեան՝ այն ե՝ դերեւտ և կրեդիտ հասկացողութեւնները անմիջականորեն կապված են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի փոփոխութեւնների հետ. դերեւտ և կրեդիտ հասկացողութեւնները բղխում են անտեսական գործառնություններից. դերեւտ և կրեդիտ հասկացողութեւնները պայմանական նշանակումներ են հաշվեկշռային փոփոխութեւնների այն ուղղութեւնների, վորոնք պայմանավորված են անտեսական գործողութեւններով:

Յերբորդ հասկանիլիս: Մակայն այս ել դեռ բավական չե եղերեւտ» և «կրեդիտ» տերմինների լիակատար լուրացման համար: Անհատեւա ե պարզել՝ ինչով ե տարբերվում դերեւտային փոփոխութեւնը կրեդիտային փոփոխութեւններից:

Ի՞նչումն ե կայայանում դերեւտային և կրեդիտային փոփոխութեւնների տարբերութեւնը:

Իերեւոյը և կրեդիտը ներկայացնում են այն փոփոխութեւնները, վորոնք կապված են միմյանց հետ, սվլալ գործողութեան հիման վրա: Տնտեսական գործողութեւնների ազդեցութեամբ՝ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ կատարվող դերեւտային և կրեդիտային փոփոխութեւնների տարբերութեւնն այն ե, վոր դերեւտային փոփոխութեւնը հակադիտ ե կրեդիտային փոփոխութեան: Իերեւտի և կրեդիտի մարբերութեւնն այն ե, վոր նըրանք ներկայացնում են ըստ ելութեան յերկու, սվլալ գործողութեան միջոցով միմյանց հետ կապված և, միաժամանակ, փոխադարձաբար հակադիր ուղղութեւններ՝ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ, սվլալ գործողութեան հետեւանքով

կատարված փոփոխութիւններէ. Դերեալը և կրեղիտը յենթադրում են տնտեսական գործունեյութուն՝ զարգացման պրոցեսով, տնտեսութեան շարժմամբ պայմանավորված հաշվեկշռային փոփոխութիւններէ փոխադարձաբար հակադիր ուղղութիւններէ դուրսթյան փաստը:

Այստեղից մենք գալիս ենք յերրորդ լեզրակացութեան, այն է՝ դերեալի և կրեղիտի հասկացողութիւնները կապված են միմյանց տվյալ գործառնութեան միջոցով և միաժամանակ հակադրվում են միմյանց. դերեալ և կրեղիտ հասկացողութիւնները պայմանական տեխնիքական նշանակումներ են՝ տնտեսական գործառնութիւններէ ազդեցութեամբ՝ հաշվեկշռային փոփոխութիւններէ փոխադարձաբար միմյանց հակադիր ուղղութիւններէ:

Այսպես, ուրեմն, դերեալ և կրեղիտ հասկացողութիւնները հակադրվում են միմյանց, վորպես յերկու, միմյանց հակադիր ուղղութիւններ այն փոփոխութիւններէ, վորոնք կառարվում են հենց տնտեսութեան բաղկացուցիչ մասերէ մեջ՝ նրա գործունեյութեան զարգացման հողի վրա: Հենց այդ իմաստով է, վոր դերեալային փոփոխութիւնը հակադրվում է կրեղիտային փոփոխութեանը:

Հայտնի լի սակայն, վոր հաշվեկշիռն իր հերթին բաղկացած է յերկու մասից՝ ակտիվից և պասսիվից, վորոնք նույնպէս հակադրվում են միմյանց: Այստեղից կարելի լի գալ այն յիշրակացութեան, վոր դերեալի և կրեղիտի հակադրութիւնը անհրաժեշտ է դեռ լրացնել և ճշտել՝ ակտիվի և պասսիվի հակադրման տեսակետից: Թե ակտիվի բաղկացուցիչ մասերում,

թե պասսիվի բաղկացուցիչ մասերում կարող են լինել ինչպէս դերեալային, այնպէս էլ կրեղիտային փոփոխութիւններ: Ահա թե ինչու դերեալի և կրեղիտի վերոհիշյալ սահմանումն անհրաժեշտ է կոնկրետացնել և լրացնել, ցուցց տալով, թե տնտեսական գործողութիւններէ հետեանքով առաջացած հաշվեկշռային փոփոխութիւններէ վոր ուղղութիւնները կկոչվեն դերեալային և վորոնք՝ կրեղիտային:

Գործնականում պայմանավորվել են՝ հաշվեկշռային այն փոփոխութիւնները, վորոնք տնտեսական գործողութիւններէ հետեանքով առաջ են բերում ակտիվի բաղկացուցիչ մասերում մեծացում, անվանել դերեալի փոփոխութիւններ: Ընդհակառակն, այն հաշվեկշռային փոփոխութիւնները, վորոնք տնտեսական գործողութիւններէ ազդեցութեամբ առաջացնում են մեծացում պասսիվի բաղկացուցիչ մասերում, գործնականում անվանվում են կրեղիտային փոփոխութիւններ:

Այստեղից կարելի լի հետեցնել, վոր ակտիվի փոքրացումը, վորպէս ակտիվի մեծացման հակադրութիւն, իրենից ներկայացնում է կրեղիտային փոփոխութիւն:

Ծիշտ այդպէս, պասսիվի փոքրացումը, վորպէս հակադրութիւն պասսիվի մեծացման, ներկայացնում է դերեալային փոփոխութիւն:

Ամփոփենք առածներս: Հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում տնտեսական գործառնութիւններէ ազդեցութեամբ ակտիվի ինչ ունենում զանազան փոփոխութիւններ ակտիվի և պասսիվի մեջ:

Եթե տնտեսական գործառնութիւններէ ազդեցութեամբ փոփոխութիւն են առաջանում ակտիվի բաղ

կացուցիչ մասերում, ապա այդ տերմինաբանորեն նըշանակվում է հետևյալ կերպ. 1. ակտիվի բաղկացուցիչ մասերի ամեն մի մեծացում կոչվում է դեբեսային փոփոխություն. 2. ակտիվի բաղկացուցիչ մասերի մեջ ամեն մի փոքրացում կոչվում է կրեդիտային փոփոխություն:

Յեթե անտեսական գործառնությունների ազդեցությամբ փոփոխություն է առաջանում պասսիվի բաղկացուցիչ մասերում, ապա տերմինաբանորեն այդ նշանակվում է հետևյալ կերպ. 1. պասսիվի բաղկացուցիչ մասերի ամեն մի մեծացում կոչվում է կրեդիտային փոփոխություն. 2. պասսիվի բաղկացուցիչ մասերի ամեն մի փոքրացում անվանվում է դեբեսային փոփոխություն:

Հետևաբար, անտեսական գործառնությունների ազդեցությամբ կատարվող հաշվեկշռային բաղկացուցիչ մասերի փոփոխությունները, նրանց տերմինաբանական նշանակման տեսակետից, կարելի չէ սխեմատիկորեն ներկայացնել այսպես:

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
1. Ակտիվի մեծացում դեբես (+)		1. Պասսիվի մեծացում կրեդիտ (+)
2. Ակտիվի փոքրացում կրեդիտ (-)		2. Պասսիվի փոքրացում դեբես (-)

Այսպիսով, դեբեսը և կրեդիտը վոչ այլ ինչ են, յեթե վոչ հասարակ, պարմական, տեխնիկական նշակումներ այն ուղղությունների, վորոնցով կատարվում են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի փոփոխությունները՝ անտեսական գործունեություն զարգացման հողի վրա և անտեսության պահին համապատասխան:

**ԴԵԲԵՏԱՑՎՈՂ ՅԵՎ ԿՐԵԴԻՏԱՑՎՈՂ ՀԱՇԻՎՆԵՐ**

Հաշվեկշռի այն հաշիվները, վորոնք անտեսական գործառնությունների ազդեցության տակ դեբետային փոփոխություններ են կրում, կանվանենք դեբեսացվող հաշիվներ: Ընդհակառակն՝ հաշվեկշռի այն հաշիվները, վորոնք անտեսական գործողությունների ազդեցության տակ կրեդիտային փոփոխություններ են կրում, կանվանենք կրեդիտացվող հաշիվներ:

Բերենք տեսական քննարկի մի քանի որինակ և աշխատենք առանձին գործառնությունների մեջ վորոշել և գտնել դեբետացվող և կրեդիտացվող հաշիվները:

Որինակ 1. Ձեռք են բերված արտադրական միջոցներ (ասենք՝ մեքենաներ կամ սարք) — 25.000 ու. Պետրանիկ հետ հաշիվ տեսնելու պայմանով:

Տեսնենք թե այդ գործառնությունն ինչ փոփոխություններ է պահանջում հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ և ինչպես կարելի չէ այդ փոփոխությունները նշանակել՝ ոգտվելով «դեբես» և «կրեդիտ» պայմանական տերմիններով:

Բերած գործառնությունն ամենից առաջ պահանջում է ակտիվի մեջ արտադրական միջոցների հաշիվի մեծացումն: Իսկ մենք պայմանավորվեցինք ակտիվի մեծացումը դեբետային փոփոխություն անվանել: Հետևաբար, կարելի չէ ասել, վոր մեր քննարկած գործառնությունը դեբետային փոփոխություն է պահանջում արտադրական միջոցների հաշիվի մեջ: Կարճ՝ մենք ունենք արտադրական միջոցների դեբետ: Այս գործառնության վերաբերյալ դեբետացվող հաշիվը արտադրական միջոցների հաշիվն է կանգիտանում:

Նույն այդ գործառնությունը պահանջ է դնում մեծացնել պետքանկի կողմից մեր տնտեսությունը Ֆինանսավորելու փաստական չափը: Պասսիվի մեծացումը մենք պայմանավորվեցինք անվանել կրեդիտային փոփոխություն: Հետևաբար, այս գործառնությունը պահանջում է կրեդիտային փոփոխություն Պետքանկի հաշվում: Կարճ՝ մենք ունենք պետքանկի կրեդիտ: Այս գործառնության նկատմամբ կրեդիտացվող հաշիվ է ներկայանում Պետքանկի հաշիվը: Ոգտվելով պայմանական տեխնիքական տերմիններով՝ կարող են այս գործառնությունն ամբողջութամբ, հաշվեկշռի նկատմամբ, ձևակերպել այսպես.

Իրենտ արտադրական միջոցների  
Կրեդիտ Պետքանկի

Ակներև է, վոր տվյալ գործառնությունը, նախ՝ պահանջում է հաշվեկշռի մեջ դերետային և կրեդիտային փոփոխություն և յերկրորդ՝ այս գործառնությամբ դերետային փոփոխությունների գումարը հավասար է կրեդիտային փոփոխությունների գումարին:

Որինակ 2. Վճարում ենք բանվորներին և ծառայողներին 15.000, Պետքանկի՝ մեր տնտեսությանը կցած դրամաբեկից:

Տեսնենք՝ ինչպիսի փոփոխություններ է պահանջում այս գործառնությունը հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում, և ինչպես կարելի չէ նշանակել այդ փոփոխությունները, ոգտվելով «դերետ» և «կրեդիտ» պայմանական տերմիններով?

Այս գործառնությունը պահանջ է դնում՝ ամենից առաջ փոքրացնել պասսիվի մեջ մեր տնտեսության պարտքը բանվորներին և ծառայողներին: Պասսիվի

փոքրացումը մենք պայմանավորվեցինք անվանել դերետային փոփոխություն: Ուրեմն, կարելի չէ ասել, վոր տվյալ գործառնությունը առաջ բերեց դերետային փոփոխություն՝ բանվորների և ծառայողների հաշիվի մեջ, կարճ՝ մենք ունենք բանվորների և ծառայողների հաշիվի դերետ: Իրենտացվող հաշիվ է ներկայանում այստեղ բանվորների և ծառայողների հաշիվը:

Նույն այդ գործառնությունը պահանջ է դնում, ինչպես և անցյալ որինակում, մեծացնել Պետքանկի կողմից մեր տնտեսությունը Ֆինանսավորելու չափը: Իսկ պասսիվի մեծացումը մենք պայմանավորվեցինք կոչել կրեդիտային փոփոխություն: Հետևաբար, տվյալ գործառնությունը առաջ բերեց կրեդիտային փոփոխություն պետքանկի հաշվում: Կարճ՝ մենք ունենք՝ կրեդիտ պետքանկի: Այս գործառնության նկատմամբ կրեդիտացվող հաշիվ է ներկայացնում պետքանկի հաշիվը:

Ոգտվելով «դերետ» և «կրեդիտ» պայմանական տեխնիկական տերմիններով՝ կարող ենք այս գործառնության հաշվեկշռի նկատմամբ ամբողջութամբ ձևակերպել՝ այսպես:

Իրենտ բանվորների և ծառայողների  
Կրեդիտ Պետքանկի:

Ակներև է, վոր տվյալ գործառնությունը, նախ՝ առաջ է բերում հաշվեկշռում դերետային և կրեդիտային փոփոխություն, յերկրորդ՝ դերետային փոփոխության գումարն այս գործառնության վերաբերյալ հավասար է կրեդիտային փոփոխության գումարին:

Որինակ 3. Զեռք են բերված արտադրական մի-

Ղոցներ (ասենք՝ դանազան նյութեր) 600-ի հաշիվը տեսնվում է կանխիկ:

Տեսնենք՝ այս գործառնությունն ինչ փոփոխություններ է պահանջում հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ և ինչպես կարելի չե նշանակել այդ փոփոխությունները ոգտվելով «դեբետ» և «կրեդիտ» պայմանական տերմիններով:

Այս գործառնությունը պահանջ է դնում, նախ՝ մեծացնել ակտիվի մեջ արտադրական միջոցները: Իսկ ակտիվի մեծացումը պայմանավորվեցինք անվանել դեբետային փոփոխություն: Ուրեմն, կարելի չե ասել վոր այս գործողությունն առաջ բերեց դեբետային փոփոխություն արտադրական միջոցների հաշիվների մեջ: Կարճ, մենք ունենք՝ դեբետ արտադրական միջոցների: Այս գործողության նկատմամբ դեբետացվող հաշիվ է հանդիսանում արտադրական միջոցների հաշիվը:

Նույն այդ գործողությունը պահանջ է դնում փոքրացնել ակտիվում դրամական միջոցները: Իսկ ակտիվի փոքրացումը մենք պայմանավորվել ենք անվանել կրեդիտային փոփոխություն: Ուրեմն, այս գործողությունն առաջ բերեց կրեդիտային փոփոխություն դրամական միջոցների մեջ: Կարճ՝ մենք ունենք կրեդիտ դրամական միջոցների: Այս գործողության նկատմամբ կրեդիտացվող հաշիվ է հանդիսանում դրամական միջոցների հաշիվը:

Ոգտվելով «դեբետ» և «կրեդիտ» պայմանական տերմինների տերմիններով՝ ամբողջ գործողությունը կարող ենք ձևակերպել այսպես.

Դեբետ արտադրական միջոցների.

Կրեդիտ դրամական միջոցների:

Ակներ է, վոր տվյալ գործողությունը. նախ՝ առաջ է բերում դեբետային և կրեդիտային փոփոխություններ և, յերկրորդ՝ դեբետային փոփոխության գումարը հավասար է կրեդիտային փոփոխության գումարին:

Որինակ 4. Պետրանկ է մուծված կանխիկ՝ 1,000.

Տեսնենք, ինչ փոփոխություններ է պահանջում այս գործառնությունը հաշվեկշիռի բաղկացուցիչ մասերի մեջ և ինչպես կարելի չե նշանակել այդ փոփոխությունները, ոգտվել «դեբետ» և «կրեդիտ» պայմանական տերմիններով:

Իերված գործառնությունը պահանջ է դնում ամենից առաջ փոքրացնել ակտիվում դրամական միջոցների պաշարը: Ակտիվի փոքրացումը մենք պայմանավորվեցինք անվանել կրեդիտային փոփոխություն: Ուրեմն, կարելի չե ասել, վոր տվյալ գործողությունը առաջ բերեց կրեդիտային փոփոխություն՝ դրամական միջոցների հաշիվում: Կարճ՝ մենք ունենք կրեդիտ դրամական միջոցների: Այս գործողության մեջ կրեդիտացվող հաշիվ է հանդիսանում դրամական միջոցների հաշիվը:

Նույն այդ գործողությունը պահանջ է դնում փոքրացնել Պետրանկի կողմից մեր տնտեսության ֆինանսավորման քանակը: Պասսիվի մեջ կատարվող ամեն մի փոքրացում մենք պայմանավորվեցինք անվանել դեբետային փոփոխություն: Հետևաբար, այս գործողությունը առաջ բերեց դեբետային փոփոխություն Պետրանկի հաշիվում: Կարճ՝ մենք ունենք դեբետ ակտրանկի: Այս գործողության նկատմամբ դեբետացվող հաշիվ է հանդիսանում Պետրանկի հաշիվը:

Ոգտվելով «ղեբետ» և «կրեդիտ» պայմանական տեխնիքական տերմիններով այս գործողությունն ավարտելու ժամանակ կարող ենք ձևակերպել այսպես:

Դեբետ պետքանկի

կրեդիտ դրամական միջոցներին

Տվյալ գործողությունը նույնպես, նախ՝ դեբետային և կրեդիտային փոփոխությունն է առաջացնում հաշվեկշռի մեջ, և յերկրորդ՝ դեբետային փոփոխության գումարը հավասար է կրեդիտային փոփոխության գումարին:

Այսպես, ուրեմն, վերը բերած բոլոր օրինակներից ակնհայտ կերպով կարելի չէ չեզրակացնել, վոր «ղեբետ» և «կրեդիտ» տերմիններով ոգտվելը գերազանցորեն տեխնիքական նշանակություն ունի: «Դեբետ» և «կրեդիտ» տերմինները գուտ պայմանական նշանակումներ են այն կապի, վոր գոյություն ունի առանձին փոփոխությունների մեջ այն ուղղություններով, ինչով տեղի չեն ունենում հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի փոփոխությունները տնտեսական գործողությունների ազդեցության տակ և տնտեսական աշխատանքների ծրագրված պլանի կատարման հիման վրա:

Բերած օրինակների հիման վրա մենք կարող ենք հանել նաև հետևյալ չեզրակացությունը: Ամեն մի գործողություն հաշվեկշռի մեջ կրկնակի հետևանք է տալիս, նա առաջ է բերում դեբետային փոփոխություն և միաժամանակ՝ կրեդիտային փոփոխություն, յուրաքանչյուր գործառնության մեջ կապելով դեբետը կրեդիտի հետ, ըստ վորում յուրաքանչյուր գործառնության դեբետը հավասարամեծ է կրեդիտին:

Սակայն, կարելի չէ արդյոք, հաշվեկշռային գո-

յություն ունեցող մեթոդը պահպանելով հանդերձ, յուրաքանչյուր առանց այդ պայմանական «ղեբետ» և «կրեդիտ» տերմինների:

Անկասկած՝ կարելի չէ: Իրա համար բավական է յուրաքանչյուր առանձին դեպքում տնտեսական գործողությունների ազդեցությունը կատարված հաշվեկշռային բաղկացուցիչ մասերի բոլոր փոփոխությունները կապել և ներդաշնակել, ըստ նրանց փոխադարձ կախման հատկանշերի, համապատասխանաբար նշելով հաշվեկշռի առանձին մասերի մեջ յեղած մեծացման և փոքրացման փաստերը և չդիմելով այս կամ այն տեխնիկական տերմինի միջոցով պայմանական կերպով նշանակելու նրանց այդ փոփոխությունները և փոխադարձ կապը:

#### ԴԵԳԵՏԻ ՅԵՎ ԿՐԵԴԻՏԻ ՀԱՎԱՍՏԱՐԱՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես տեսանք, հաշվեկշռային փոփոխությունները վոչ այլ ինչ են, յեթև վոչ պարզ հետևանք տնտեսական գործունեության, հասարակ անդրադարձումն տնտեսական գործողությունների:

Խորհրդային պլանային տնտեսության պայմաններում տնտեսական գործողությունները միաժամանակ պլանային գործողություններ են: Նրանք ազդում են տնտեսության կազմի և կառուցվածքի վրա այն ուղղությամբ, ինչ վոր նախագծված է պլանով: Իսկ քանի վոր տնտեսությունը իր արտադրումն և գտնում հաշվեկշռի մեջ, ապա և մեր պլանային տնտեսության պլանային գործողություններն անդրադարձնում են հաշվեկշռի մեջ: Փոփոխելով տնտեսության կազմն ու կառուցվածքը, տնտեսական գործողությունները՝ հենց

զրանով փոփոխում են հաշվեկշռի, վորպես այդ արժեքները արտահայտելի, կազմն ու կառուցվածքը: Այդիսով՝ այս կամ այն տնտեսական գործառնությունն աղբյուրության տակ, հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում տեղի լին ունենում զանազան փոփոխություններ: Բայց այդ հաշվեկշռային փոփոխությունները հետևանք են հանդիսանում տնտեսական գործունեությունից: Նրանք հասարակ անդրադարձում են հաշվեկշռում այն փոփոխությունների, վորոնք տնտեսական գործառնությունների հետևանքով կատարվում են հենց տնտեսության բաղկացուցիչ տարրերի մեջ:

Մենք ասացինք, վոր հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում փոխադարձաբար միմյանց հետ կապված փոփոխությունները նշանակվում են «զերետ» և «կրեդիտ» պայմանական տեխնիկական տերմիններով: Իսկ քանի վոր մենք հետազոտում ենք տնտեսական գործառնություններն իրենց փոխադարձ կապակցություններ, իրենց փոխադարձ պայմանավորություններ, իրենց փոխադարձ ներդաշնակություններ, ապա ակնհայտ է, վոր տնտեսական փոփոխությունները հաշվեկշռային անդրադարձման մեջ անպայման պիտի բերեն հասցնեն զերետային և կրեդիտային փոփոխությունների: Տնտեսական յուրաքանչյուր գործառնություն, բեկվելով հաշվեկշռում, զերետային փոփոխություն է առաջ բերում և, միաժամանակ՝ նրա հետ կապված կրեդիտային փոփոխություն: Այս դեպքում զերետային փոփոխության դումարը հավասար է կրեդիտային փոփոխությունների գումարին: Այլ խոսքով՝ զերետն ու կրեդիտը յուրաքանչյուր գործառնության մեջ հավասարամեծ են:

Բայց, իհարկե, այստեղ չպետք է անջատել արժեքային, վոր զերետն ու կրեդիտը վոր այլ ինչ են, լեթե վոր մի փոփոխություն, հաշվեկշռի յուրահատուկ լեզվով այն գույքը թվում են, վորոնք տնտեսական գործողությունների հիման վրա ստեղծվում են իրականություն մեջ տնտեսության առանձին բաղկացուցիչ տարրերի միջև, միայն թե նրանք թվական արտահայտություն են գտնում հաշվեկշռի առանձին հարկերի մեջ:

Ինչու յուրաքանչյուր տնտեսական գործառնության հաշվեկշռի մեջ բեկվում է անպայման զերետային և, սրա հետ գույքը վրած՝ կրեդիտային փոփոխության ձևով: Ինչու յուրաքանչյուր գործառնություն հաշվեկշռում առաջ է բերում զերետի և կրեդիտի հավասարամեծություն: Դերետի և կրեդիտի գաղտնիքը զերետային և կրեդիտային փոփոխությունների հավասարամեծության հանելուկը պիտի վորոնել, ամենից առաջ, հենց տնտեսական գործողությունների տնտեսական կողմի ընտրող գծերի մեջ, տնտեսական միջոցների շարժողության պրոցեսի ընտրող գծերի մեջ: Ամեն մի գործառնության մեջ զերետի և կրեդիտի գոյությունը բացատրվում է ամենից առաջ նրանով, վոր զերետն ու կրեդիտը ներկայացնում են տնտեսական զարգացման պրոցեսի մեջ տեղի ունեցող նույն շարժողության անդրադարձումը հաշվեկշռի մեջ:

Դերետային և կրեդիտային փոփոխությունները հաշվեկշռի մեջ ծնունդ են տնտեսական գործողությունների նրանք պայմանավորված են տնտեսական միջոցների շրջանապտույտի պրոցեսով: Նրանք նախագծված են տնտեսական գործունեության պլանով:

Դերեալը և կրեղիտը անդրադարձնում են այն շարժողութունը, վոր իրենց շրջապատույտի պրոցեսում կատարում են տնտեսութեան առանձին բաղկացուցիչ տարրերը: Անդրադարձնելով տնտեսութեան բաղկացուցիչ տարրերի շարժողութունը, վորոնք իրենց հաշվեկշռային արտահայտութիւնն են գտնում առանձին հաշիվներէ կերպարանքով — դերեան ու կրեղիտը արձանագրում են շարժողութեան յերկու մոմենտը՝ յեւկետային մոմենտը և ավարտական մոմենտը:

Հիշենք շրջանառութեան պրոցեսը Մարքսի սխեմայի համաձայն: Դիտենք շարժման այդ պրոցեսի հաշվեկշռային արտացոլումը մեր խորհրդային սոցիալիստական տնտեսութեան կիրառմամբ: Բաց այժմ ել ոգտվե՞նք տեխնիկական պայմանական «դերեալ» և կրեղիտ» տերմիններով: Տեսնենք, թե ի՞նչպէս տնտեսական միջոցների շարժողութեան այդ պրոցեսը վոր, ներկայացնում է հիմնական սխեման, հիմնական մարշրուտը տնտեսական տարրերի շարժման, կարող է ձեւակերպել հաշվեկշռային տերմինոլոգիայի լեզվով: Ներքե բերվող հաշվավարութիւնը, կրկնում ենք, գերազանցապէս տեսական բնույթ է կրում:

Վերցնենք դարձյալ պրոցեսի առաջին աստիճանը: Այդ առաջին աստիճանը ներկայացնում է դրամի անցումը տնտեսական միջոցների և բանվորական ուժի: Տնտեսութեան մեջ մասնակցելու համար կանխատրված դրամական միջոցները կատարում են իրենց առաջին շարժումը: Նրանք փոխում են իրենց ձեւը, ընդունում են արտադրական միջոցների և բանվորական ուժի ձեւ: Նրանք հանդես են գալիս արտադրութեան ծախսերի կերպարանքով: Նրանց կլանում է արտադրա-

կան պրոցեսը: Այն մեծութիւնը, վոր սկզբնապէս կանխատրված էր դրամի կերպարանքով, այժմ փոխում է իր դրամական ձեւը և ակտիվի մեջ հանդես գալիս վորպէս արտադրութեան միջոցներ և բանվորական ուժ — անհրաժեշտ հախադրւանք՝ արտադրութեան պրոցեսին իրականացնելու համար: Դրամի փոխարեն մենք այժմ ունենք հաշվեկշռում արտադրութեան ծախսեր, վորպէս նախադուռն ապագա պատրաստի արտադրանքի:

Յեթն տնտեսական միջոց երիշարժման պրոցեսի այս առաջին աստիճանը դիտենք հաշվեկշռային բեկման տեսանկյունից, կտեսնենք, վոր փոփոխութիւնները պարափակվում են ակտիվի շրջանակներում: Կտեսնենք, վոր դրանք ակտիվային փոփոխութիւններ են: Ակտիվի դրամական միջոցները փոխարինվում են արտադրութեան միջոցներով, վորոնք կուտակվում են ակտիվում: Ինչ ի՞նչ է կատարվում այդ դեպքում ակտիվի բաղկացուցիչ մասերում:

Տեղի յե ունենում, նախ՝ դրամական միջոցների փոքրացում: Իսկ ակտիվում փոքրացումը մենք պայմանավորվեցինք անվանել կրեղիտային փոփոխութիւն: Հետևապէս, մենք ունենք կրեղիտ դրամական միջոցներ:

Տեղի յե ունենում, յերկրորդ՝ ակտիվում նստած արտադրական ծախսերի մեծացում, վոր մենք պայմանավորվել ենք անվանել դրեալային փոփոխութիւն: Հետևաբար, մենք ունենք՝ դերեալ արտադրութեան ծախսերի կամ պարզ կերպով՝ դերեալ արտադրութիւն:

Այսպիսով, հաշվեկշռային լեզվի փոխադրելով, տնտեսական միջոցների շարժման պրոցեսի առաջին աստիճանը կարելի յե ձևակերպել հետևյալ կերպ.

Իերեստ արտադրութեան

կրեդիտ դրամական միջոցներէ:

Տվյալ գործառնութեան գումարը, ինչպէս տեսնուած ենք, դիտուած է կրկնակի հատվածքով, առաջին դերեւտային հատվածքով՝ արտադրութեան հաշվի մեջ, յերկրորդ՝ կրեդիտային հատվածքով՝ դրամական միջոցներէ հաշվի մեջ:

Շարունակենք: Իիտենք տնտեսական միջոցների շարժողութեան պրոցեսի յերկրորդ ստադիան՝ նրանց հաշվեկշռային բեկման մեջ:

Պրոցեսի յերկրորդ աստիճանը ներկայացնում է պատրաստի մթերք դուրս գալն արտադրութունից: Արտադրութեան պրոցեսն ավարտվում է, հանդես է գալիս պատրաստի արտադրանքը: Միջոցների կանխարված գումարը նորից փոխում է իր ձևը. նա դեն է ձգում արտադրութեան ծախսերի տարազը և պատրաստի արտադրանքի կերպարանք ստանում: Արտադրութեան ծախսերի փոխարեն հաշվեկշռում մենք ունենք այժմ պատրաստի արտադրանք, վոր պսակում է ավարտված արտադրական պրոցեսը:

Յեթե դիտենք տնտեսական միջոցների շարժողութեան պրոցեսի յերկրորդ ստադիան հաշվեկշռային բեկման պրիզմայով, կտեսնենք, վոր այս փոփոխութունն էլ ներփակվում է միայն ակտիվի շրջանակներում: Կտեսնենք, վոր սա էլ ակտիվային փոփոխութունն է Արտադրութեան ծախսերը ակտիվում փոխարինվում են պատրաստի արտադրանքով: Իսկ ինչ է կատարվում այս դեպքում ակտիվի բաղկացուցիչ մասերում:

Տեղի չէ ունենում, առաջին՝ արտադրութեան

ծախսերի փոքրացում. արտադրութեան ծախսերը ակտիվից չջանում են և վերականգնում վորպէս պատրաստի արտադրանք: Իսկ ակտիվի մեջ փոքրացումը մենք անվանում ենք կրեդիտային փոփոխութուն: Հետևաբար, մենք ունենք կրեդիտ արտադրութեան ծախսերի կամ, ավելի պարզ՝ կրեդիտ արտադրութեան:

Տեղի չէ ունենում, յերկրորդ՝ պատրաստի արտադրանքի ավելցում, վոր մտնում է ակտիվի մեջ: Ակտիվի մեծացումը մենք անվանում ենք դերեւտային փոփոխութուն: Հետևաբար, մենք ունենք տվյալ դեպքում՝ դերեստ պատրաստի արտադրանքի:

Հաշվեկշռային լեզվով՝ տնտեսական միջոցների շարժման պրոցեսի յերկրորդ ստադիան կարելի չէ ձեւակերպել այսպէս.

Իերեստ պատրաստի արտադրանքի

կրեդիտ արտադրութեան:

Այս գործառնութեան գումարը դարձյալ քննութեան է առնվում կրկնակի հատվածքով առաջին՝ դերեւտային փոփոխութունների՝ պատրաստի արտադրանքի հաշվում, յերկրորդ՝ կրեդիտային փոփոխութունների հատվածքով՝ արտադրութեան հաշվում:

Անցնենք շարժման պրոցեսի յերկրորդ ստադիայի քննութեան՝ նրա բալանային բեկման տեսակետից:

Տնտեսական միջոցների շարժման պրոցեսի յերկրորդ ստադիան ներկայացնում է պատրաստի արտադրանքի իրացումը դրամով: Պատրաստի արտադրանքը իրացվում է և փոխվում դրամի: Միջոցների կանխարված գումարը նորից փոխում է իր ձևը, դեն է ձգում պատրաստի արտադրանքի տարազը և ընդունում իր սկզբնական կերպարանքը՝ դրամական միջոցների: Պատ-

բաստի արտադրանքի փոխարեն մենք ունենք այժմ տնտեսական միջոցների վերդարձ, դեպի իր լեյալետ:

Յեթե տնտեսական միջոցների շարժման պրոցեսի այս լեբրոր ստադիան քննենք հաշվեկշռային բեկման պրիզմայի միջով, ապա կտեսնենք, վոր այս փոփոխությունն ել պարափակվում է ակտիվի շրջանակներում: Այս ել ակտիվային փոփոխությունն է: Պատրաստի արտադրանքը ակտիվում փոխարինվում է դրամական մեջոցներով: Իսկ ինչ է կատարվում այս դեպքում ակտիվի բաղկացուցիչ մասերում:

Տեղի չե ունենում, առաջին՝ փոքրացում պատրաստի արտադրանքի, պատրաստի արտադրանքը թողնում է հաշվեկշռի սահմանները և իրացվում է դրամով: Ակտիվի մեջ կատարված փոքրացումը կրեդիտային փոփոխությունն է: Հետևաբար՝ մենք ունենք կրեդիտ պատրաստի արտադրանքի:

Յեկրորդ՝ տեղի չե ունենում դրամական միջոցների մեծացում, վոր մտնում է ակտիվի մեջ: Ակտիվի մեծացումը դեբետային փոփոխությունն է: Հետևաբար, սվլալ դեպքում մենք ունենք դեբետ դրամական միջոցների:

Հաշվեկշռային լեզվով արտահայտված՝ տնտեսական միջոցների շարժման պրոցեսի յերրորդ ստադիան կարելի չե ձևակերպել այսպես.

Իրենտ դրամական միջոցների

կրեդիտ պատրաստի արտադրանքի:

Տվյալ գործառնության գումարը սվլալ դեպքում դիտվում է կրկնակի հատումով. առաջին՝ դեբետային փոփոխության հատումով՝ դրամական միջոցների հաշվում, յերկրորդ՝ կրեդիտային փոփոխության հատումով՝ պատրաստի արտադրանքի հաշվում:

Ինքնըստինքյան հասկանալի չե, վոր այստեղ բերված բացատրության հաշվային անդրադարձման իմաստով սկզբունքային կողմը չի խախտվի. չեթե յնթադրենք վոր պրոցեսի ռոալին ստադիայում տնտեսական միջոցները կանխարվում են վոչ թե դրամական ձևով, այլ՝ արտադրության միջոցների ձևով, իսկ պրոցեսի վերջին ստադիայում դրամի փոխարեն հանդես է գալիս Պետրանկի հաշիվը: Մեր տնտեսական պրակտիկայի պայմաններում, վարկային ռեֆորմի հետ կապված, դրամական միջոցների հաշիվի փոխարեն՝ վերջին գործողությունն իր անդրադարձումը կգտնի հենց Պետրանկի հաշվում, չեթե արտադրանքի շարժումը չենթադրվում է սոցիալիստական սեկտորի սահմաններում: Այս պատճառով դրամական միջոցների հաշվում դեբետային փոփոխության փոխարեն մենք կուենաք դեբետային փոփոխություն՝ Պետրանկի հաշվում:

Յեթե այս դեպքում չեղնենք այն բանից, վոր պատրաստի արտադրանքի իրացումը ներկայացնում է հասարակական արտադրանքի՝ պլանով նախագծված շարժում խորհրդային տնտեսության հասարակականացրած սեկտորի սահմաններում, — ապա այդ դեպքում՝ պատրաստի արտադրանքի իրացման ժամանակ տեղի չի ունենա սեփականատերերի մեկը մյուսի փոխարենում այն իմաստով, ինչ վոր տեղի ուներ կապիտալիստական հասարակության տնտեսական կյանքի պայմաններում: Այժմ այդ ավելի շատ պատրաստի արդյունքի տեղափոխումն է միասնական հասարակական սեկտորի մի կիսից մյուսը: Այսպիսով, պատրաստի արտադրանքի սպառման գործողության լետում ել չեն թագնված նախկին հասարակական հարաբերու-

Թրուհները կապիտալիստական առանձին և իրավարանորեն միմիանցից անկախ ապրանքարտադրողների: Այժմ մենք ունենք հասարակական արտադրանքի պլանային շարժում՝ սոցիալիստական արտադրութայն պայմաններում:

Ճիշտ այդպես էլ, պարզ է, վոր խորհրդային սոցիալիստական տնտեսութայն պայմաններում («Մենք արդեն մուտք են գործել սոցիալիզմի դարչըջանը» — Ստալին) անհրաժեշտ է, միջոցների շրջանառութայն քննութայն ժամանակ լինել շարունակ լերկրի անասական կյանքը դիտակցորեն կարգավորող պրոլետարական պետութայն տնտեսական քաղաքականութայնից. անհրաժեշտ է հիշել նոր մոմենտների քանակական աճման մասին, վորոնք վորակապես կերպարանափոխում են մեր տնտեսութայնը:

Տնտեսական միջոցների շրջանառութայն պրոցեսը քննելով՝ մենք անխուսափելիորեն դալիս ենք այն յեղրակացութայն, վոր այդ պրոցեսը անընդհատական մի շարժում է: Մենք չենք կարող պատկերացնել տնտեսութայնն անշարժ վիճակում. ամբողջ տնտեսութայնը թափանցված ու համակված է շարժականութայնով:

Այս պատճառով, չիրը մենք տնտեսութայն դրութայնը այս կամ այն մոմենտին՝ հաշվեկշիւի մեջ ներկայացնում ենք հանգստի վիճակում, մենք ելապես վերանում ենք իրականութայնից: Մենք կարծես արհեստականորեն ընդահատում ենք տնտեսական գանդվածների շրջանառութայնը, պես թե արհեստականորեն կանգնեցնում ենք տնտեսութայն շարժումը, որն անասական գործողութայնների անընդհատ հոսանքը, տնտեսական միջոցների շարժողութայն հարատե պրոցեսը:

Այս իմաստով, հաշվեկշիւը, վարպես ժամանակի այս կամ այն մոմենտին տնտեսութայն ստատիկ դրութայն արտացոլում, խիստ պայմանական և սահմանափակ մի բան է ներկայացնում, քանի վոր տնտեսութայնը չի դանվում հանդիստ վիճակում, չի կառուցում միշտ միևնույն դիրքին. և ա անընդհատ փոփոխվում է և յուրաքանչյուր վարկյան ներկայանում է վորպես ճուշր և միաժամանակ՝ ուրիոր:

Քանի վոր տնտեսական միջոցները, իրենց շարժման պրոցեսը կատարելով, անընդհատ դեն են գցում մի ձևը և ընդունում մի ուրիշը, նրանք յուրաքանչյուր վորոշ մոմենտին գանվում են տվյալ ձևի մեջ և միևնույն ժամանակ չեն գանվում նրա մեջ: Հենց սրա մեջ է շարժողութայն հակասութայնը: Սրանից էլ բխում է տնտեսական շարժման և տնտեսութայն դրութայն այս կամ այն մոմենտին հաշվեկշիւի մեջ արտացոլելու սահմանափակութայնը և պայմանականութայնը:

«Ինքը՝ շարժումը, — գրում է Փրիդրիխ Ենգելսը, — հակասութայն է: Նույնիսկ հասարակ մեխանիկական տեղափոխութայնը կարող է կատարվել միայն այնպես, վոր մարմինը միևնույն մոմենտին գանվում է մի տեղում և նույն մոմենտին՝ մի ուրիշ տեղում, միևնույն ժամանակ՝ նույն տեղում և նույն տեղում չէ: Յեվ շարունակ լինթադրելը և միաժամանակ այդ հակասութայն լուծելը հենց ինքը շարժում է»: («Анти-Дюринг» стр. 109):

Մինչև այժմ միջոցների շրջանառութայն պրոցեսը մենք դիտում ենք միայն ակտիվ սահմաններում: Դեբետի և կրեդիտի հավասարամեծութայն սկզբունքը

մենք ըստ ելության յեզրակացրինք՝ լինելով անտես-  
աւական միջոցները շարժման պրոցեսից, վորը պայմա-  
նավորվում է ակտիվի բաղկացուցիչ մասերի փոփո-  
խութեանները: Մինչդեռ, հաշվեկշիռի մեջ ակտիվից  
քացի, կա և պասսիվ: Հաշվեկշիռում, անտեսական միջոց  
ները դետեղումից բացի, ցույց են տրվում նաև նույն  
միջոցների ծաղման աղբյուրները: Պարզ է, վոր դեբետի  
և կրեդիտի հավասարամեծութեան սկզբունքը չի կա-  
րող պարփակվել միայն ակտիվի միջոցների շրջանա-  
պտույտով, Դեբետի և կրեդիտի հշուվածքի մեջ են  
մտնում նաև այն փոփոխութեանները, վորոնք առաջ  
են գալիս անտեսական գործողութեանների ազդեցու-  
թեան տակ, պասսիվի բաղկացուցիչ մասերում, չերբ  
պասսիվի մեջ մի աղբյուրը փոխարինվում է մյուսով:  
Յեթե մենք նորից դառնանք անտեսական միջոց  
ների շրջանառութեան մեր վերլուծած սխեմային՝  
կտեսանինք, վոր անտեսական գործունեութեան լեզակե-  
տային սկզբնական մոմենտը ներկայանում է դրամա-  
կան միջոցների կանխատրման մոմենտը: Այդ մոմենտը,  
ինչպես անցյալ թեմայում ցույց տրվեց, բնորոշվում է  
ակտիվի մեջ դրամական միջոցների ներկայութեամբ,  
իսկ պասսիվի մեջ՝ պետական սկզբնական ֆոնդի ներ-  
կայութեամբ: Յեթե անտեսութեան ալգորութունը  
սկզբնական մոմենտին փոխադրենք դեբետի և կրեդի-  
տի նստանների վրա, կստանանք, մի կողմից՝ դրամա-  
կան միջոցների ավելցում ակտիվում կամ դեբետային  
փոփոխութուն, մյուս կողմից՝ սկզբնական ֆոնդի ծա-  
գումը պասսիվում, կամ կրեդիտային փոփոխութուն:  
Այսպիսով, անտեսութեան ալգորութունը կարող ենք  
ձևակերպել հետևյալով.

Դեբետ դրամական հաշիվների  
Կրեդիտ սկզբնական ֆոնդի

Այսուհետև անտեսական միջոցների շրջանապտու-  
տույտը չի սահմանափակվում միայն ակտիվի բաղկա-  
ցուցիչ մասերի փոփոխութեաններով. նա ընդգրկում  
է նաև պասսիվը:

Յեվ իսկապես: Մեր վերլուծած սխեմայում շարժ-  
ման պրոցեսը ներկայացնում է վոչ միայն ձևերի  
պարզ փոխարինում մեկը մյուսին, այլ առաջ է բերում  
նաև անտեսական միջոցների քանակական աճում: Մոր-  
հըրդային եկոնոմիկայի պայմաններում ալգաճը սոցիա-  
լիստական կուտակում է ստեղծում, վորպես միջոց-  
ներ սոցիալիզմի շրջանակի հետագա ընդարձակման:  
Պարզ է, վոր հաշվեկշիռը պետք է անդրադարձնի վոչ  
միայն ձևերի հասարակ փոխարինումը միմյանց, այլ և  
անտեսական միջոցների իրական աճը:

Մենք արդեն տեսանք, վոր կապիտալիստական  
հաշվառքը պատրաստի արտադրանքի մեծութունը  
հաշվարկում է արտադրութեան փաստական ծախսերի  
զուգորով, իսկ աճումը նա դուրս է բերում շրջանա-  
ռութեան պրոցեսից. այն է, ապրանքների իրացման  
մոմենտին: Մորհըրդային եկոնոմիկայի և սոցիալիստա-  
կան ընդարձակած վերարտադրման պայմաններում  
պլանայնորեն կարգավորված կուտակումը կարելի չի  
հաշվարկել պատրաստի արտադրանքի՝ արտադրու-  
թունից դուրս գալու մոմենտին: Տեսականապես, Հաշ-  
վառքի այսպիսի մեթոդը կարելի չի թուլաբարելի հա-  
մարել. հարցն ամբողջապես վերաբերում է նրա գոր-  
ծնական նպատակահարմարութեան:

Հաշվառանքը ալգաճեցուցութունը: Ակտիվում

կուտակման գումարի չափով մեծանում է պատրաստի արտադրանքը, այսինքն՝ դեքետային փոփոխութիւնն է կատարվում: Պասսիվում նույն գումարի չափով կարելի էլինելը ցույց տալ, որինակ, կուտակման ընդհանուր (ВОЛОВОЙ) ֆոնդը: Այդ ֆոնդը դեռ իրացված չէ, բայց արտադրութեան պրոցեսում նա արդեն ստեղծված է և էլ իր մարմնացումն է դտել պատրաստի արտադրանքի մեջ:

Մենք կուեննանք այոպիսով պասսիվի մեծացում, կամ կրեդիտային փոփոխութիւնն:

Յեթե յենթադրենք, վոր պատրաստի արտադրանքն իրացվում է, ապա այդ հանգամանքը, բացի մյուս բոլոր բաներից, կառաջացնի այն, վոր կուտակման ընդհանուր, (ВОЛОВОЙ) չէրացված ֆոնդը վորոշ մասում կդառնա կուտակման իրացված ֆոնդ:

Սակայն, մենք արդեն նշեցինք այն, վոր հաշվառքի խորհրդային պրակտիկան միջին ուրիշ կերպ է վարվում, դրսևորելով արտադրութեան նախագծած պլանի կատարումը և հնարավոր շեղումները: Բացի պլանի կատարումից ստացված հետևանքի դրսևորումից, այդ պլանանավորված է նաև միութեան և ձեռնարկութեան միջև յեղած հաշվեհարդարից, նույնպես և բյուջետային հատկացումներից:

Բայց այդ մասին կխոսենք հետո:

Հետազոտելով այդ բոլոր գործողութիւնները, մենք գալիս ենք դարձյալ այն անփոփոխ յեզրակացութեան, վոր ամեն մի տնտեսական գործողութիւնն առաջ է բերում դեքետային և կրեդիտային փոփոխութիւնն և այն էլ միևնույն մեծութեան:

Դեքետը և կրեդիտը, հաշվեհարդարի լեզվով ար-

տահայտած, տնտեսական այն առանձին տարրերի միջև յեղած զուգակցութիւնն են, վորոնք առաջ են յեկել տնտեսական գործողութիւնների հետևանքով և թելադրված են տնտեսական միջոցների պլանային շարժողութեամբ: Դեքետը և կրեդիտը անդրադարձնում են այն շարժումները, վոր կատարում են տնտեսութեան այն առանձին տարրերը, վորոնք միատեսակ թվական արտահայտութիւնն են դանում հաշվեհարդարի առանձին հաշիվների մեջ:

Բայց պետք է նկատել նույնպես, վոր «դեքետ» և «կրեդիտ» տերմինները հաշվեհարդարի հաշվառքի պրակտիկայում հաճախ ավելի լայն կիրառում են զրա նում: Դեքետի և կրեդիտի լեզվին է փոխադրվում վոչ միայն տնտեսական միջոցների իսկական շարժողութիւնը, այլև այն գրանցումները, վորանդ տնտեսական միջոցների շարժողութիւնը բացակայում է Դեքետի և կրեդիտի այսպիսի ընդարձակած կիրառումը բացատրվում է վոչ միայն նրանով, վոր տնտեսութիւնը հաշվեհարդարի մեջ բեկանվում է կրկնակի արտացոլմամբ, այն է՝ ակտիվի և պասսիվի ձևով: Այդ բացատրվում է նաև մեր ցանկութեամբ (ինչպես այդ կտեսնենք հետո)՝ դեքետի և կրեդիտի հիման վրա ապահովել գրանցումների ավտոմատիկ ինքնահսկողութիւնը: Այստեղից էլ՝ գործնականում դեքետի և կրեդիտի լայն կիրառումը զանազան, այսպես կոչված՝ «եներքին շրջանառութիւններին» հաշվառքի ժամանակ, «ուղղիչ» գրանցումներ անցկացնելիս, և այլն: Այստեղ, անկասկած կա մի բացասական կողմ, վոր կայանում է դեքետի և կրեդիտի կիրառման շրջանակը արհեստականորեն լայնացնելու մեջ:

Դեքետի և կրեդիտի հավասարամեծութեան սլեկ-

բունքը լայն կերպով հայտնի լե թեորիայում և պրակտիկայում՝ «Կրկնակի հաշվի որենք» կամ «Կրկնակիության որենք» անվան տակ շատ վաղուց լույս տեսած աշխատություններից մեկը, վոր վերլուծում է տրնտեսական հաշվառք սկզբունքները «Կրկնակի հաշվի որենքի» հիմունքներով, հրատարակվել է 1495 թվին և կոչվում է «տրակտատ հաշիվների և գրքանցումների մասին»։ — Նա պատկանում է Իտալացի հեղինակ Լուկա Պաչիոլիի գրչին։ Սակայն հաշվառքի այդ սխտեմի իսկական հեղինակներ պիտի համարել վենետիկի Լոմբարդիայի և Ճենովայի վաճառականներին։ Չբավարարվելով պարզ հաշվառքով այն հաշիվների, վորոնք վարկային հարաբերությունների զարգացման հետևանքով ծագում էյին լերրորդ անձնավորությունների հետ, նրանք սկսեցին դիմել իրենց գործառնությունների ավարտված և լրիվ հաշվառքին։ Հաշվառքն այդ իմաստով հարմարեցվեց առևտրական կապիտալի շրջանառություն անդրադարձմանը՝ հետևյալ հայտնի սխեմայով.

Գ — Ա — Գ + Գ

Այստեղից էլ ծագում է այդ հաշվառքի «լեբելյությունը»։ Հիշյալ աշխատության մեջ էյապես շարադրած էյին այն բոլոր հաշվառքային ձևերը, վորոնք այն ժամանակ տարածված էյին Իտալիայում։ Այդ առևտրի ծաղկման ժամանակն էր, առևտրական կապիտալի տիրապետության ժամանակ։

Իսկ Մարքսի սուր արտահայտությունը, «առևտրական կապիտալը, լերբ նրան է պատկանում գերագանցող տիրապետությունը, ամենուրեք կոզոսլաի մի

սխտեմ եներկայացնում» (Капитал т. III § ч. I стр. 226). «Յերկլակ» հիմունքներով հաշվառքն էլ նույն առեվտրական կապիտալի արդյունքն է, «կոզոսլուտի սխտեմի» արդյունք, հաշվային արտահայտություն իմաստով։ Պետք է վճռականորեն մերժել հին տեսարաններից շատերի պնդումը այն մասին, թե «Կրկնակի հաշվի որենքը» ինչ վոր հավիտենական և անփոփոխ «բնություն մի որենք» է հանդիսանում, վոր հատուկ է կյանքի բոլոր յերևույթներին և պրոպեաններին, «չէլ և մուտքի» մի որենք, «եներգիայի պայանություն մի որենք», վոր իր ուժը պահում է բոլոր ժամանակների համար, հասարակական կյանքի նույնական պայմանների լուրտեսակությունից անկախ։ Իրապես՝ «Կրկնակի հաշվի» հիման վրա կառուցված հաշվառքի մեթոդը պատմականորեն սահմանափակ և անցողական մի մեթոդ է։ Նա կյանքի լե կոչվել առաջին հերթին առևտրական շահերի կողմից, և ապա կիրառվել է նաև արդյունաբերական կապիտալի հաշվառքի համար։

Թորհրդային պրակտիկան ոգտագործում է հաշվեկշռային կաղապարված այդ մեթոդոլոգիան։ Բայց հաշվեկշռային հաշվառքի հին մեթոդոլոգիան տվյալ դեպքում հարմարեցվում է հասարակական տնտեսության պահանջներին և տնտեսավորություն նոր ձևերին։ Սակայն, հաշվեկշռային հաշվառքն մեթոդի սահմանափակությունը և պայմանականությունն այլևս առարկություն չի առաջ բերում։ Տնտեսական գործունեության հետագա զարգացումը խորհրդային եկոնոմիկայի պայմաններում, տնտեսական որգնիղմների աճումն ու խոշորացումը, սոցիալիստական ըսկզբունքների հաղթանակն արտադրության և բաշխման

բնագոյաբանութեամբ, — այս բոլորը մեծ կապակցութիւն ունի ևն դնում հաշվառքի կիրառութեամբ այս մեթոդը իր այժմային ամբողջականութեամբ և ամենակարողութեամբ:

Հենց այժմ ել հին մեթոդը աջ ու ձախ չի բա- վարարում այն բարդ պահանջները, վոր առաջա- դրվում են հաշվառքին, սոցիալիստական պլանային տնտեսութեան կողմից: Հաշվառքի բոլոր դեպքերում անպայմանորեն «կրկնակի հաշի» մեթոդը կիրառե- լու անհրաժեշտութունը, մինչև իսկ այնտեղ, վորտեղ այդ պայմանավորված չե տնտեսութեան գործողու- թյունների տնտեսական բնույթով, հաշվեկշռային մե- թոդին զգալի չափով զրկում և անհրաժեշտ ճշգրտու- թյունից և ստանդականութունից, դարձնում և նրան չեբրեմն մեղելալորեն ձևական, արհեստական և ծան- բաղարժ:

Հենց այժմ ել ավելի ու ավելի իշողարժար և համառոտարար հնչում են ձայներ հաշվառքի խորհր- դային շատ պրակտիկները կողմից՝ հոգուտ հաշվառքի ազատագրման՝ «կրկնակիութեան» կապանքներից: Տնտեսական գործունեութեան առանձին կողմեր, հաշ- վեկշռային հաշվառքն ամբողջութեամբ պահպանելու դեպքում, կարելի լի հաշվառել և առանց կիրառելու դե- բետն ու կրեդիտը: Տնտեսական գործունեութեան այս- պիտի կողմերից, որինակի համար, վերբերում և արտա- դրութեան պրոցեսն իր ներքին ամբողջ բազմազանու- թեամբ և ճշուղավորութեամբ, վոր չի տեղավորվում դեբետի և կրեդիտի նեղ շրջանակների մեջ: Բացի այդ, գնների հաշվեկշռային հաշվառքն ավելի ու ավելի պիտի, բեղմնավորվի նյութական — տեխնիկական ցուցանիշ- ներով, վորոնք պիտի բնույթագրեն աշխատանքը՝ նրա

զանազան հայտարարութեան: Գների հաշվարկու- մը միայնակ չի սպառում այլևս ժամանակակից այն բարդ խնդիրները, վորոնք դրվում են հաշվառքի առջև:

Այս տեսակետից շատ նշանակալից են Մարքսի հեռակալ խոսքերը, «արտադրութեան կապիտալիստա- կան յեղանակի վոչնչացումից նետո, հասարակական արտադրութեան պահպանման դեպքում, արժեքի վո- բողումը առաջվա պես շարունակում և տիրել այն ի- մաստով, վոր բանվորական ժամանակի կարգավորումը և հասարակական աշխատանքի բաշխումը արտադրու- թեան տարբեր ճշուղերի միջև, վերջապես, այս բոլորն ընդգրկող հաշվապահութունը, դառնում են ավելի կա- բերոր, քան յերբեկից» (Капитал т III ч. II, с. 317): Այս նոր խնդիրները, այն և՛ բանվորական ժամանակի կարգավորումը և հասարակական աշխատանքի բաշ- խումը արտադրութեան տարբեր ճշուղերի միջև, ան- վիճելի կերպով պահանջում են նոր, սոցիալիստական տնտեսութեան հաշվառք ստեղծել՝ այլ բովանդակու- թեամբ և այլ մեթոթգոլով: Այսպիտի հաշվառք, ակներև և, կստեղծվի հաշվեկշռային, վիճակագրական և ոպերատիվ — կալկուլացիոն հաշվառքի սինթեզի հե- անանքով: Սա գալիք սոցիալիստական պլանային հաշ- վառքն և՛ պլանային սոցիալիստական տնտեսութեան:

Վերադառնանք, սակայն, մեր հիմնական թեմային՝ Տեսնենք՝ ի՛չ կոնկրետ նշանակութուն ունեն դերե- տը և կրեդիտը հաշվեկշռի մեջ. ի՛նչ գունավորումն են ստանում նրանք ակտիվի և պասսիվի մեջ,

ԴԵՐԵՏԸ ՅԵՎ ԿՐԵԴԻՏԸ ԱԿՏԻՎՈՒՄ ՅԵՎ  
ՊԱՍՍԻՎՈՒՄ

Մենք տեսանք, վոր դերետային և կրեդիտային փոփոխություններ կարող են լինել թե ակտիվում, և թե պասսիվում: Սակայն անհրաժեշտ է նկատել, վոր ակտիվի դերետային փոփոխությունները չպետք է խառնել պասսիվի դերետային փոփոխություններին հետ: Ճիշտ այդպես էլ, ընդհակառակն, ակտիվի կրեդիտային փոփոխությունները չի կարելի խառնել պասսիվի կրեդիտային փոփոխություններին հետ: Անհրաժեշտ է ակտիվի դերետը դատել պասսիվի դերետից և ակտիվի կրեդիտը՝ պասսիվի կրեդիտից:

Ի՞նչ են ներկայացնում դերետային փոփոխություններն ակտիվում և ի՞նչ են ներկայացնում նրանք պասսիվում: Ակտիվի դերետը ներկայացնում է այնպիսի փոփոխություն հաշվեկշռում, վոր առաջանում է ակտիվի բաղկացուցիչ մասերում և այդ ակտիվի մեծացումն է առաջ բերում: Այսպիսով՝ ակտիվի դերետային փոփոխությունները ներկայացնում են. ա) ըստ տեղի՝ փոփոխություն ակտիվում. բ) ըստ նշանակության՝ մեծացում այդ ակտիվի:

Այստեղից պարզ է, վոր չի կարելի խառնել ակտիվի դերետը պասսիվի դերետին հետ: Ակտիվի և պասսիվի դերետների միջև հավասարության նշան դնել չի կարելի, վորովհետև նրանք վորակապես տարբեր են: Թեպետ՝ թե այս և թե մյուս դեպքում գործ ունենք դերետային փոփոխությունների հետ, բայց առաջին դեպքում դերետը ակտիվային ծագումն ունի, իսկ յերկրորդ դեպքում՝ պասսիվային: Պարզ է, վոր այս յերկու

դերետը վոչ մի դեպքում նույնացնել չի կարելի: Տեսնենք, թե ի՞նչ են ներկայացնում կրեդիտային փոփոխությունները՝ ակտիվում և պասսիվում:

Ակտիվի կրեդիտն այնպիսի փոփոխություն է հաշվեկշռում, վոր առաջանում է ակտիվի բաղկացուցիչ մասերում և փոքրացում առաջացնում ակտիվում: Այսպիսով, ակտիվի կրեդիտը ներկայացնում է. ա) ըստ տեղի՝ փոփոխության ակտիվի բաղկացուցիչ մասերում, բ) ըստ նշանակության՝ փոքրացում այդ ակտիվի:

Միևնույն ժամանակ պասսիվի կրեդիտային փոփոխությունն այնպիսի փոփոխություն է հաշվեկշռում, վոր ծագում է պասսիվի բաղկացուցիչ մասերում և մեծացում առաջացնում պասսիվում: Այսպիսով, պասսիվի կրեդիտը ներկայացնում է. ա) ըստ տեղի՝ փոփոխություն պասսիվի բաղկացուցիչ մասերում. բ) ըստ նշանակության՝ մեծացում այդ պասսիվի:

Պարզ է, վոր չի կարելի ակտիվի կրեդիտը խառնել պասսիվի կրեդիտին հետ: Ակտիվի և պասսիվի կրեդիտների միջև հավասարության նշան դնել չի կարելի, քանի վոր նրանք վորակապես տարբեր են: Թեպետ՝ թե մեկ և թե մյուս դեպքում մենք գործ ունենք կրեդիտային փոփոխությունների հետ, բայց առաջին դեպքում կրեդիտը ակտիվային ծագում ունի, իսկ յերկրորդ դեպքում՝ պասսիվային: Ակտիվի է, վոր այս յերկու կրեդիտները վոչ մի դեպքում նույնացնել չի կարելի:

Մենք տեսանք նույնպես, վոր հաշվեկշռում կարելի չէ տարբերել չորս հիմնական տիպի փոփոխություններ, վորոնք առաջ են գալիս տնտեսական գործողությունների ազդեցության տակ: Այդ փոփոխու-

թյուններն են. 1. ակտիվային փոփոխություն, 2. պասսիվային փոփոխություն, 3. ակտիվ—պասսիվային փոփոխություն՝ մեծացման ուղղությունը և 4. ակտիվա պասսիվայի փոփոխություն՝ փոքրացման ուղղությունը: Տեսնենք թե այս չորս տիպի փոփոխությունների մեջ ինչպես են բեկվում դերեան ու կրեղիտը և ինչ գունավորում են ստանում:

ա) Ակտիվային փոփոխություն: Ակտիվային փոփոխությունը անտեսական գործողությունների ազդեցության տակ առաջ է բերում ակտիվի մի մասում մեծացում և ակտիվի մյուս մասում՝ հավասարամեծ փոքրացում: Ակտիվի մեծացումը դերեա է, հետևաբար՝ այստեղ դերեան ակտիվային ծագում ունի: Ակտիվի փոքրացումը կրեղիտ է: Տվյալ դեպքում այդ կրեղիտն էլ ակտիվային ծագում ունի: Այսպիսով՝ ակտիվային փոփոխությունների մեջ, անտեսական գործողությունների ազդեցության տակ, ակտիվի դերեաը հավասարամեծ կրեղիտ է առաջացնում հաշվեկշռի նույն ակտիվում: Սխեմատիկորեն այդ կարելի չէ պատկերացնել հետևյալ կերպ:

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դերեա ակտիվի		
+		
կրեղիտ պասսիվի		
(—)		

Այդ փոփոխության ֆորմուլան է.

Ակտիվի դերեաը = ակտիվի կրեղիտին:

Ակնրև է, վոր դերեան ու կրեղիտը տվյալ դեպքում համանուն են. լեզվուսն էլ ակտիվային ծագում

ունեն: Սակայն, սրանով հանդերձ, նրանք տարբեր նշաններ ունեն. դերեաին այստեղ համապատասխանում է ակտիվի մեծացումը, իսկ կրեղիտին՝ ակտիվի փոքրացումը:

բ) Պասսիվային փոփոխություն: Պասսիվային փոփոխությունն առաջ է բերում՝ անտեսական գործողությունների ազդեցության տակ, մեծացումն պասսիվի մի մասում և հավասարամեծ փոքրացումն՝ մյուս մասում: Սակայն պասսիվի մեծացումը կրեղիտ է, Հեակաբար, այստեղ կրեղիտը պասսիվային ծագում ունի: Իսկ պասսիվի փոքրացումը դերեա է: Տվյալ դեպքում մեր դերեաը պասսիվային ծագում ունի: Այսպիսով՝ անտեսական գործողությունների ազդեցության տակ, պասսիվային փոփոխությունների մեջ պասսիվի դերեաը առաջ է բերում հավասարամեծ կրեղիտ՝ հաշվեկշռային նույն պասսիվի մեջ:

Սխեմատիկորեն այդ կարելի չէ ներկայացնել այսպես.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
		Դերեա պասսիվ
		(—)
		կրեղիտ պասսիվ
		(+)

Այդ փոփոխության ֆորմուլան այսպես կլինի.

Պասսիվի դերեաը = պասսիվի կրեղիտին:

Ակնրև է՝ դերեաը և կրեղիտը տվյալ դեպքում համանուն են, նրանք յերկուսն էլ պասսիվային ծագում ունեն: Բայց, դրա հետ միասին, նրանք տարբեր նշաններ ունեն. դերեաին համապատասխանում է

այստեղ պասսիվի փոքրացումը, իսկ կրեդիտին՝ պասսիվի մեծացումը:

գ) Ակտիվա—պասսիվային փոփոխություններ՝ մեծացման ուղղությամբ: Ակտիվա—պասսիվային փոփոխությունները՝ մեծացման ուղղությամբ նրանումն են կայանում. վոր տնտեսական գործողություններ, ի ազդեցության տակ ակտիվի մեծացումը հավասարամեծ մեծացում է առաջ բերում պասսիվի մի մասում: Դիտենք. վոր ակտիվի մեծացումը դերետ է: Հետևաբար՝ այստեղ դրա տնտեսական ծագում ունի իսկ պասսիվի մեծացումը կրեդիտ է: Հետևաբար՝ կրեդիտն այստեղ պասսիվային ծագում ունի: Ասպիսով՝ տնտեսական գործողությունների ազդեցության տակ կատարվող մեծացման կողմն ուղղված ակտիվա—պասսիվային փոփոխությունների մեջ ակտիվի դերետը նույն հաշվեկշիռի պասսիվի մեջ հավասարամեծ կրեդիտ է առաջ բերում: Սրանատիկորեն, այդ կարելի չէ պատկերացնել այսպես.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դերետ ակտիվ		Կրեդիտ պասսիվ
(+)		(+)

Այս փոփոխությունն ֆորմուլան այսպես է.

Դերետ ակտիվի = կրեդիտ պասսիվի:

Այնքան է դերետը և կրեդիտը տվյալ դպրում տարանուն են. դերետն ակտիվային, իսկ կրեդիտը պասսիվային ծագում ունեն Սակայն, դրա հետ միասին, նրանք ունեն միատեսակ նշաններ. դերետին համապատաս-

խանում է ակտիվի մեծացումը, իսկ կրեդիտին՝ պասսիվի մեծացումը:

դ) Ակտիվա—պասսիվային փոփոխություններ՝ փոքրացման ուղղությամբ: Ակտիվա պասսիվային փոփոխությունը փոքրացման ուղղությամբ առաջ է բերում տնտեսական գործողությունների ազդեցության տակ փոքրացում ակտիվի մի մասում և նրան հավասարամեծ փոքրացում՝ պասսիվի մի մասում: Ակտիվի փոքրացումը կրեդիտ է, հետևաբար՝ այստեղ կրեդիտս ակտիվային ծագում ունի: Իսկ պասսիվի փոքրացումը դերետ է: Տվյալ դեպքում դերետը պասսիվային ծագում ունի: Ասպիսով, տնտեսական գործողությունների ազդեցության տակ փոքրացման կողմն ուղղված ակտիվա—պասսիվային փոփոխությունների մեջ ակտիվի կրեդիտն առաջ է բերում իրեն հավասարամեծ դերետ, հենց նույն հաշվեկշիռի մեջ: Սրանատիկորեն այս կարելի չէ ներկայացնել այսպես.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Կրեդիտ ակտիվի		Դերետ պասսիվի
(-)		(-)

Այս փոփոխության ֆորմուլան այսպես է.

Դրա պասսիվի = կրեդիտ ակտիվի:

Այնքան է՝ դերետը և կրեդիտը տվյալ դեպքում տարանուն են. դերետը պասսիվային ծագում ունի, իսկ կրեդիտը՝ ակտիվային: Բայց դրա հետ միասին, նրանք ունեն միատեսակ նշաններ. դերետին այստեղ

համապատասխանում 4 պասսիվի փոքրացումը, իսկ կրեդիտին՝ ակտիվի փոքրացումը:

Ամփոփելով ասածներս՝ կարելի չե հետևյալ չեզրակացութան հանգել: Ակտիվային ղեքետը առաջացնում է միշտ՝ կամ հավասարամեծ ակտիվային կրեդիտ—ակտիվային փոփոխություն՝ կամ հավասարամեծ պասսիվային կրեդիտ—ակտիվային փոփոխություն՝ մեծացման ուղղությունը: Պասսիվային ղեքետն առաջացնում է միշտ կամ հավասարամեծ պասսիվային կրեդիտ—պասսիվային փոփոխություն, կամ հավասարամեծ ակտիվային կրեդիտ—ակտիվա-պասսիվային փոփոխություն՝ փոքրացման ուղղությամբ: Տնտեսական գործողությունների ազդեցության տակ ղեքետը միշտ էլ առաջացնում է հաշվեկշռում հավասարամեծ կրեդիտ: Այս, սակայն, ինչպես տեսանք, հիմք չէ տալիս, խառնելու և նույնացնելու ակտիվի ղեքետը պասսիվի ղեքետի հետ և ակտիվի կրեդիտը՝ պասսիվի կրեդիտի հետ: Անհրաժեշտ է կրեդիտի և ղեքետի բնույթն ու նշանակությունը պարզել ամեն անգամ, աչքի առաջ ունենալով նրանց կոնկրետ բեկումը հաշվեկշռի ակտիվում և պասսիվում:

### ՀԱՇՎԱՅԻՆ ՖՈՐՄԱԿԱՆԵՐ

Այս կամ այն գործառնություն վերաբերյալ գրանցումը՝ ղեքետային և կրեդիտային հաշիվների նշանակումով, հայտնի չե հաշվեկշռային փոփոխությունների հաշվային ֆորմուլա անունով: Կար՝ ասած՝ այդպիսի գրանցումը կոչվում է հաշվային ֆորմուլա:

Քանի վոր հաշվային ֆորմուլան պարունակում է ղեքետացվող և կրեդիտացվող հաշիվների անվանումը,

ապա, հենց դրանով իսկ, նա դրսևորում է այն փոփոխությունները, վորոնք առաջացել են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի մեջ տնտեսական գործողությունների ազդեցության ներքո:

Ուստի, հաշվային ֆորմուլայով կարելի չե պարզել այս կամ այն տնտեսական գործողության ելությունն ու բնույթը:

Բացատրենք այդ մի քանի որինակով: Դրա համար վերլուծենք մի քանի հաշվային ֆորմուլաներ: Այստեղ բերված որինակները ըստ մեծի մասն տեսական բնույթ են կրում և նպատակ ունեն պարզել ղեքետային և կրեդիտային փոփոխությունների ելությունը:

Յինթադրենք թե ունենք հետևյալ հաշվային ֆորմուլան:

Իերետ նյութերի

Կրեդիտ դրամական միջոցներին:

Ի՞նչ գործողություն կարող է համապատասխանել այս ֆորմուլային: Դրա համար, նախ՝ պետք է պարզել, թե տվյալ գործողությունը ինչպես է անդրադառնում հաշվեկշռի մեջ: Նյութերի հաշիվն ակտիվային հաշիվ է: Այդ հաշիվը, ըստ ֆորմուլայի, ղեքետային փոփոխություն է կրում: Իսկ ղեքետային փոփոխությունը նյութի հաշիվում վկայում է, վոր մեր տնտեսության մեջ նյութերի ընդհանուր գումարը մեծացել է: Սա ակտիվային ծագում ունեցող ղեքետ է:

Դրամական միջոցների հաշիվը նույնպես ակտիվային հաշիվ է հանդիսանում: Այս հաշիվը ըստ ֆորմուլայի, կրեդիտային փոփոխություն է կրում: Իսկ կրեդիտային փոփոխությունը դրամական միջոցներին

հաշվում վկայե վոր մեր տնտեսութեան մ'ջ կանխիկ դրամի քանակը փոքրանում է: Տվյալ դեպքում մենք գործ ունենք ակտիվային ծագում ունեցող կրեդիտի հետ:

Ուրեմն, տվյալ գործողութեան մեջ դերեան ու կրեդիտը համանուն են հանդիսանում. չերկուսն էլ ակտիվային ծագում ունեն: Այս ֆորմուլայի մեջ արտահայտված տնտեսական գործողութունը կարող է լինել, որինակ, այս կամ այն մանր նյութերի գնումը՝ կանխիկ հաշվով:

Վարժութեան համար վերցնենք մի ուրիշ հաշվաչին ֆորմուլա:

Իրեւտ բանվորների և ծառայողների,

Կրեդիտ Պետրանկի:

Տեսնենք, թե ինչ գործողութուն կարող է համապատասխանել այդ ֆորմուլային: Այդ պարզելու համար, նախ՝ դիտենք, ինչպես են արտացոլել այդ գործողութունը հաշվեկշիռի մեջ: Բանվորների և ծառայողների հաշիվը պասսիվ հաշիվ է նա դրստորում ետրնտեսութեան պարտքի չափը բանվորների և ծառայողների դեռ չգճարած աշխատավարձի նկատմամբ: Տվյալ ֆորմուլայի համաձայն, բանվորների և ծառայողների հաշիվը դերեւային փոփոխութունն է կրում: Իսկ դերեւային փոփոխութունն այս հաշվում վկայում է տնտեսութեան, բանվորների ու ծառայողների հանդեպ ունեցած պարտքի նվազումը: Սա պասսիվային ծագում ունեցող դերեւ է:

Մեր որինակում Պետրանկի հաշիվը նույնպես պասսիվային հաշիվ է: Նա արտահայտում է Պետրանկի կողմից մեր տնտեսութեանը բաց թողած ֆինասավոր-

ման չափը: Ըստ ֆորմուլայի Պետրանկի հաշիվը կրեդիտային փոփոխութունն է կրում: Իսկ կրեդիտային փոփոխութունը Պետրանկի հաշվում վկայում է, վոր բանկային իրնասավորման չափը՝ մեր տնտեսութեանը՝ փոքրանում է: Սա պասսիվային ծագում ունեցող կրեդիտ է:

Ուրեմն, տվյալ գործողութեան մեջ դերեւ է կրեդիտը համանուն են: Նաեւք չերկուսն էլ պասսիվային ծագում ունեն: Մեր քննարկած ֆորմուլայի մեջ արտահայտված տնտեսական գործողութունը կարող է լինել, որինակ, վորոշ գումարի վճարումն բանվորներին և ծառայողներին՝ Պետրանկի՝ մեր տնտեսութեանը կից բացած դրամարկղի միջոցով:

Շարունակենք մեր վարժութունները: Վերցնենք հետևյալ հաշվային ֆորմուլան.

Իրեւտ դրամական իջոցների

կրեդիտ Պետրանկի:

Ինչ գործողութուն կարող է համապատասխանել այս ֆորմուլային: Այս հարցին պատասխանելու համար նույնպես անհրաժեշտ է պարզել՝ ինչպես են նրա հաշվեկշռային բեկումը, Իրամական միջոցների հաշիվն ակտիվի հաշիվ է: Այդ հաշիվն ըստ մեր ֆորմուլայի, դերեւային փոփոխութունն է կրում, իսկ դերեւային փոփոխութունը դրամական միջոցների մ'ջ վկայում է դրամը ակելացւմը մեր տնտեսութեան մեջ: Սա ակտիվային ծագում ունեցող դերեւ է:

Պետրանկի հաշիվը մեր որինակում հանդիսանում է հաշիվ պասսիվային, վոր արտահայտում է մեր հաշիվները Պետրանկի հետ, ֆինասավորման վերաբերյալ ըստ ֆորմուլայի, Պետրանկի հաշիվը կրեդիտային փո-

փոփոխութիւնն և կրում: Կրեղիտաիւնն փոփոխութիւննը Պետրանկի հաշվում ցուցց և տալիս, ինչպես տեսանք, բանկի կողմից մեր տնտեսութեանը բաց թողած ֆինասավորման փաստական չափի ավելցումը: Սա պասսիվային ծագում ունեցող կրեղիտ և:

Ուրեմն, տվյալ գործողութեան մեջ դերերն ու կրեղիտը տարանունն և—դերերն ակտիվային ծագում ունի, իսկ կրեղիտը՝ պասսիվային: Հաշվային ֆորմուլան արտացոլում է ակտիվա-պասսիվային փոփոխութիւնն՝ մեծացման ուղղութեամբ: Այս ֆորմուլայով արտահայտած տնտեսական գործողութիւնը կարող է լինել, որինակ՝ դրամի ստացում Պետրանկից՝ ֆինասավորման կարգով:

Վերջապես, վերլուծենք ևս այսպիսի մի հաշվային ֆորմուլա.

Իրեւտ կրեղիտորներ

կրեղիտ դրամական միջոցներ

Շարունակինք դատել առաջվա պես և աշխատենք պարզել՝ ինչ գործողութիւնն է առաջ բերել այսպիսի հաշվային ֆորմուլան: Կրեղիտորներ հաշիվը պասսիվային հաշիվ է: Ըստ ֆորմուլայի, հաշիվը դերերային փոփոխութիւնն է կրում: Իսկ դերերային փոփոխութիւնը կրեղիտորների հաշվում ցուցց և տալիս, վոր մեր պարտքը կրեղիտորներին պակասել է: Սա պասսիվային ծագում ունեցող դերեր և:

Դրամական միջոցների հաշիվն ակտիվային հաշիվ է: Ըստ մեր ֆորմուլայի, այդ հաշիվը կրեղիտային փոփոխութիւնն է կրում. իսկ կրեղիտային փոփոխութիւնը դրամական միջոցների հաշվում վկայում է, վոր մեր տնտեսութեան մեջ կանխիկ դրամի գումարը

փոքրացել է: Պարզ և, վոր տվյալ դեպքում մենք գործ ունենք ակտիվային ծագում ունեցող կրեղիտի հետ:

Ուրեմն, այս գործողութեան մեջ դերերն և կրեղիտը տարանունն են. դերերն պասսիվային ծագում ունի, իսկ կրեղիտը՝ ակտիվային: Հաշվային ֆորմուլան արտացոլում է ակտիվա պասսիվային փոփոխութիւնն, փոքրացման ուղղութեամբ: Տվյալ ֆորմուլայի մեջ արտահայտված տնտեսական գործառնութիւնը կարող է լինել, որինակ, վորոշ կանխիկ գումարի վճարում կրեղիտորներին՝ իհաշիվ մեր պարտքի:

Վերլուծած որինակներն ավելի ևս հաստատում են այն միտքը, վոր «դերեր» և «կրեղիտ» պայմանական տերմինների ոգտագործումը գլխավորապես տեխնիկական նշանակութիւնն ունի: Այդ տերմիններով ոգտվելը հնարավորութիւնն է տալիս անդրադարձնել այն փոփոխութիւնները հաշիվկշտի բաղկացուցիչ մասերում, վորոնք առաջ են չեկել տնտեսական գործառնութիւնների ազդեցութեամբ: Սակայն, սրա հետ մրա սին հանդես են գալիս և այլ չեզրակացութիւններ,

Առաջին, «դերեր» և «կրեղիտ» տերմինների գործընական մեծ նշանակութիւնը չպետք է սքոդի այն պարզ փաստը, վոր վերջնական հաշիվով այդ տերմինները ծառայում են պայմանական ձևով նշանակելու այն փոփոխութիւնները, վորոնք առաջ են գալիս հաշիվկշտի բաղկացուցիչ մասերում, տնտեսական գործողութիւնների ազդեցութեան տակ: Պարզ լեզվով արտահայտած՝ դերերն և կրեղիտը նշանակում են այն կապը, վոր ստեղծվում է հաշիվների միջև, շնորհիվ տնտեսական գործառնութիւնների, նրանք նշանակում են՝ հաշիվկշտի հաշիվներում արտահայտված տըն

անսուխան տուանձինն բաղկացուցիչ մասերում տեղի ունեցած միացումներն ու փոքրացումները:

Յերկրորդ՝ «դերետ» և «կրեղիտ» տերմինների գործնական մեծ նշանակությունը բոլորովին իրավունք չի տալիս կուռք դարձնելու այդ տերմինները և պնդել նրանց անձեռնմխելիություն մասին: Չի կարելի աչքաթող անել, վոր «դերետ» և «կրեղիտ» պայմանական տերմինները կարող են, առանց վնասելու գիտական հետազոտությունը, միանգամայն դուրս վերտարվել հաշվեկշռային հաշվառքի գիտություն բառարանից: Ընդհանրապես՝ հիմք կա նկատելու, վոր այդ տերմինները հակում ունեն միանգամայն անհետանալու մեր գիտություն սահմաններից և փոխարինվելու ավելի հասարակ, մատչելի և պարզ բառերով, վորոնք զուրկ կլինեն հանելուկային և միստիկական գուճավորումից:

### ՅՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Յոթերորդ թեման նվիրված է հաշվառքի գործնականում ավելի տարածված «դերետ» և «կրեղիտ» տերմինների վերալուծման: Չնայած այդպիսի մեծ, գործնական նշանակության՝ դերետ և կրեղիտ տերմինները դեռ մինչև այժմ միատեսակ և հաստատուն սահմանում չոնեն: Պրակտիկները տվյալ դեպքում ներբանցում դնում են մի բովանդակություն, թեորետիկները՝ լերբեմն ուրիշ, և հետևանքում ստացվում է բավական մեծ բազմազանություն: Ի՞նչն է դերետի և կրեղիտի հին սահմանումների հիմնական սխալը: Հիմնական սխալն այն է, վոր պրակտիկներն արամալեր են դերետը և կրեղիտը սահմանել վոչ նրանց

խակական նշանակությունից յեղեկով, այլ գրքերի և հաշվի մեջ նրանց պայմանական դասավորումից յեղեկով: Այստեղից ել բղխում է դերետի և կրեղիտի այն վուրգար սահմանումը, վոր հաճախ տալիս են պրակտիկները, սահմանելով դերետն ու կրեղիտը վորպես հաշվի աջ և ձախ կողմեր: Ընդհանրապես՝ թեորետիկները հաճախ աշխատում են դերետի և կրեղիտի իրական և իսկական բովանդակության փոխարեն, տալ նրանց բառացի նշանակությունը: Այստեղից ել դերետի և կրեղիտի մյուս, վուրգար սահմանումը ներբանց բառացի նշանակության տեսակետից, այն է, «Պարտ ե» և «ունի»: Հասկանալի չէ, վոր վոչ այս և վոչ այն սահմանումը գիտական քննադատություն չեն գիմանում: Ուստի հաշվեկշռային հաշվային գիտությունը դեն է գցում այդ կաղապարող և միայն խառնաշփոթություն առաջ բերող սահմանումները:

Դորետի և կրեղիտի գաղափարները հարկավոր է սահմանել այն նշանակության տեսակետից, ինչ վոր ունեն այդ տերմինները հաշվեկշռի մեջ: Այս մտքով, դերետ և կրեղիտ ասելով պետք է հասկանալ, տնտեսական գործողությունների հիման վրա տնտեսություն կազմի մեջ կատարված և հաշվեկշռի մեջ իրենց անդրադարձումը գտած, փոխադարձաբար հակադիր ուղղություն ունեցող փոփոխությունների պայմանաշակական նշանակումները: Յուրացնելով դերետի և կրեղիտի այդ նշանակությունը, անհրաժեշտ է այնուհետև կոնկրետ կերպով ճշտել թե հաշվեկշռային վոր փոփոխություններն են դերետային կոչվում և վորոնք կրեղիտային:

Սրանից հետո արվում է հաշվեկշռային փոփո-

խուժելու ներքին հավասարամեծութեան և հակադրութեան սկզբունքը, վոր բերում է, այսպես կոչված, յուրաքանչյուր գործողութեան դերերտի և կրեղիտի հավասարամեծութեան սկզբունքին:

Այնուհետև անհրաժեշտ է կանգ առնել դերերտի և կրեղիտի հավասարամեծութեան սկզբունքի հիմնավորման վրա: Դեռ գցելով նրա զուտ ձևական հիմնավորումը, անհրաժեշտ է, այդ սկզբունքը բացատրել այն տեսակական գործողութիւնների տնտեսական բնույթի տեսակետից, վորոնք արտացոլում են յուրահատուկ հաշվեկշռային բեկումով, ակտիվի և պասսիվի պրիզմայի միջով: Միաժամանակ անհրաժեշտ է մի անգամ ել ընդգծել, վոր տնտեսութունը, վորպես մի ամբողջութուն, հաշվեկշռային հաշվարկման մեջ կիսվում է ակտիվի և պասսիվի, յերկու տարրեր հատկանիշների համաձայն: Թոսելով կրեղիտի և դերերտի մասին, հարկավոր է նույնպես ընդգծել տնտեսական պրոցեսի ձևն ու բովանդակութունը, խորհրդային եկոնոմիկայի պայմաններում:

Այս կարելի չէ քննել դերերտային և կրեղիտային փոփոխութիւնները իրենց կոնկրետ արտահայտութեան մեջ ակտիվում և պասսիվում վորից հետո դուրս բերել հաշվային ֆորմուլաների սահմանումը:

### ՄՏՈՒԳՈՂԱԿԱՆ ՀՍՐՑԵՐ

1. Ի՞նչպես եր սահմանում դերերտը և կրեղիտը հին դպրոց:

Ի՞նչպես պետք է սահմանել դերերտը և կրեղիտը:

3. Ակտիվի և պասսիվի մեջ: Վճիռ փոփոխութիւններն են կոչվում դերերտային և վճիռնք՝ կրեղիտային:

4. Վճիռ հաշիֆը և կոչվում դերերտացվող և վճիռը կրեղիտացվող:

5. Ի՞նչպես է կայանում դերերտի և կրեղիտի հավասարամեծութեան սկզբունքը:

6. Ի՞նչպես կարելի չէ հիմնավորել յուրաքանչյուր գործողութեան մեջ դերերտի և կրեղիտի հավասարամեծութեան սկզբունքը:

7. Ի՞նչպես է կայանում ակտիվի դերերտի և պասսիվի դերերտի տարբերութիւնը. նույնպես և ակտիվի կրեղիտի և պասսիվի կրեղիտի տարբերութիւնը:

8. Ի՞նչ բան է հաշվեկշռային փոփոխութիւնների հաշվային ֆորմուլան:

### ՀԱՇՎԱՌՔԱՅԻՆ ԳՐԱՔԻՎԱՅԻ ՏԱՐՐԵՐԸ

### ՀԱՇՎԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Հետազոտելով տնտեսական գործողութիւնների ազդեցութեան տակ հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում կատարվող փոփոխութիւնները՝ մենք տեսանք, վոր հաշվեկշռի յուրաքանչյուր տարրի կամ հաշվի մեծութիւնը կարող է փոփոխութիւն կրել յերկու ուղղութեամբ՝ կամ մեծացման, կամ փոքրացման: Դրա հետ միասին, այդ փոփոխութիւնները զուգորդված բնույթ են կրում, այնպես վոր մի հաշվի մեջ յեղած փոփոխութիւնը հավասար և հակադիր փոփոխութիւն է առաջացնում նույն հաշվեկշռի մյուս հաշվի մեջ: Հաշվեկշռի առանձին բաղկացուցիչ տարրերի մեջ կատարվող փոփոխութիւնները գրանցելու համար սովորա-

բար ընդունված և չուրաքանչյուր հաշվի համար ունե-  
նալ առանձին աղյուսակ, վորտեղ նշանակվում են  
ավյալ հաշվի մեծացման և փոքրացման բոլոր փաստե-  
րը: Հաշվեկշռի այս կամ այն հաշվի մեջ տնտեսական  
գործողությունների ազդեցության տակ կատարվող փո-  
փոխությունների գրանցման համար նշանակված այդպի-  
սի աղյուսակը սովորաբար հաշվային աղյուսակ և կոչվում:

Գործնականում, հաշվային աղյուսակները կամ  
այսպես կոչված՝ հաշվային աղյուսակավորման կառուց-  
ման չերկու հիմնական գրաֆիկ մեթոդ կա: Հաշվային  
աղյուսակավորման առաջին յեղանակն այն է, վոր  
հաշվային աղյուսակը կառուցվում է միակողմանի սխե-  
մայով: Յնրկուրդ չեղանակը նրանումն է կայանում,  
վոր հաշվային աղյուսակը կառուցվում է յերկկողմանի  
սխեմայով: Քննենք այս չերկու չեղանակն ել:

Յենթադրենք, թե ունենք ինչ վոր հաշիվ Ա. ասենք  
թե այդ հաշվում տնտեսական գործողությունների  
ազդեցությամբ և միևնույն հաշվեկշռի այլ հաշիվներում  
յեղած փոփոխությունների հետ կապված՝ վորոշ ժամա  
նակի ընթացքում տեղի չեն ունեցել հետևյալ փոփո-  
խությունները.

$$5.000 + 3.000 - 1.500 + 2.000 - 2.500 = 6.000$$

Առաջին յեղանակ. Հաշվային աղյուսակը կառուց-  
վում է միակողմանի սխեմայով: Տնտեսական գործո-  
ղությունների ազդեցության տակ կատարվող ավյալ  
հաշվի մեծացման և փոքրացման բոլոր փաստերը նը-  
շանակվում են աղյուսակի միևնույն կողմում՝ մեկը  
մյւսի չետևից: Յուրաքանչյուր գրանցումից հետո կա  
րելի չե հաշվի նոր մնացորդ դուրս բերել: Այս յեղա-

նակով կազմված հաշվային աղյուսակը կարելի չե ներ-  
կայացնել այսպես.

	Հ ա շ ի վ Ա
	5.000
+	3.000
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	8.000
-	1.500
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	6.500
+	2.000
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	8.500
-	2.000
	<hr style="width: 50%; margin: 0 auto;"/>
	6.000

Այսպիսով, ավյալ հաշվում բոլոր փոփոխություն-  
ները, ինչպես մեծացման ուղղությամբ, այնպես և փոք  
րացման ուղղությամբ, նշանակվում են մի շարքում:  
Յուրաքանչյուր գրանցումից հետո կա ելի չե կատա-  
րել նշանակված գումարման կամ հանման գործողու-  
թյունը նրա համար, վոր կարելի չի յի տեսնել հաշվի  
ղրությունը յուրաքանչյուր նոր մոմենտում:

Յերկուրդ յեղանակ. Շատ ավելի տարածված է և  
գործնականում ավելի չե ոգտագործվում հաշվային  
աղյուսակավորման չերկուրդ յեղանակը: Այստեղ հաշ-  
վային աղյուսակը կառուցվում է յերկկողմանի սխե-  
մայով Քանի վոր յուրաքանչյուր հաշվում չարող են  
լինել մրաչն յերկու տեսակի փոփոխություններ, այն  
ե՝ փոփոխություններ դեպի մեծացման կողմը փո-  
փոխություններ՝ դեպի փոքրացման կողմը, ապա հաշ-  
վային աղյուսակն ել ուղղաձիգ գծով բաժանվում է  
յերկու մասի: Մի մասը հատկացվում է այն գումարների

գրանցման համար, վորոնք տվյալ հաշիվ մեծացում են առաջացնում. Իրապես գումարում և հանում՝ յուրաքանչյուր գործողութիւնից հետո չի կատարվում: Նա կատարվում է պարբերաբար: Հանումն ել փոխարինվում է գումարի գրանցումով՝ հաշվային ազդուսակի հակադիր մասում: Գումարելիների և հանելիների այսպիսի պայմանական դասավորման լեզանակը գործնականում հաշտի լե հաշվային գումարում և հաշվային հանում անուան տակ:

Ինչո՞ւն է կախնում հաշվային գումարումը: Հաշվային գումարումը հաշվային աղյուսակների մեջ գումարում կատարելու այնպիսի մի պայմանական պրիոմ է, չե՞րբ գումարելիները գրվում են տվյալ հաշվային աղյուսակի միևնույն մասում: Ի՞նչ է հաշվային հանումը: Հաշվային հանումը հաշվային աղյուսակների մեջ հանման գործողութայն մի պայմանական պրիոմ է, վորտեղ հանելին գրվում է հաշվային աղյուսակի հակառակ կողմում: Ուրեմն, գումարները գումարելու համար պետք է նրանց գրել հաշվային աղյուսակի միևնույն մասում. հանելու համար հարկավոր է հանելին գետեղել հաշվային աղյուսակի հակառակ մասում: Պարբերաբար գումարում են տվյալ հաշվի բոլոր դրական և բացասական մեծութիւնները և գտնում տվյալ հաշվի վերջնական տարբերութիւնը կամ մնացորդը: Այդ տարբերութիւնը կամ մնացորդը կոչվում է սալ՛դո:

Հաշվային գումարման և հանման տեխնիկական պրիոմի տեսակետից միանգամայն նույնն է վորտեղ նշանակել հաշվի մեծացման կամ փոքրացման փաստերը: Գործնականում յերկկողմանի սխեմայով հաշվային աղյուսակավորման յերկու վարիանտ կա:

Առաջին վարիանտն այն է, վոր հաշվային աղյուսակի ձախ մասում նշանակում են տվյալ հաշվի բոլոր դրական փոփոխութիւնները, այսինքն՝ մեծացումները իսկ աջ մասում՝ բոլոր բացասական փոփոխութիւնները, այսինքն՝ փոքրացումները:

Իիցուք մենք ունենք նույն Ա հաշիվը՝ Թ՛նդ այդ հաշվում վորոշ ժամանակում տեղի ունեցած լիւնն հետեյալ փոփոխութիւնները.

$$5.000 + 3.000 - 1.500 + 2.000 - 2.500 = 6000$$

Առաջին վարիանտի համաձայն հաշվային աղյուսակ կազմելու դեպքում կունենանք՝

Հաշիվ Ա	
5.000	— 1.500
+ 3.000	— 2.500
+ 2.000	
+ 10000	— 4.000

Գումարման և հանման գործողութիւնները կատարելով տվյալ հաշվում, կգտնենք հաշվի սալ՛դոն: Այդ սալ՛դոն կազմում է՝ 6.000

Յերկրորդ վարիանտը նրանումն է կախնում, վոր հաշվային աղյուսակի աջ մասում նշանակվում են տվյալ հաշվի բոլոր դրական փոփոխութիւնները, այսինքն՝ մեծացումները, իսկ ձախ մասում՝ բոլոր բացասական փոփոխութիւնները, այսինքն՝ փոքրացումները:

Յերկրորդ վարիանտով հաշվային աղյուսակ կառուցելու դեպքում, նույն որինակի նման կստանանք:

Հաշիվ Ա	
— 1.500	5000
— 2.500	+ 3.000
	+ 2000
— 4.000	+ 10000

Գումարման և հանման գործողություն կատարող լով՝ տվյալ հաշվային աղյուսակում գտնենք սալ՝ գոն: Այդ սալ՝ գոն կլինի 6.000

Այստեղից կարելի չե՞ գալ այն չեզոքակացություն, վոր գրանցումներն եյուլթյունն ու նշանակությունը չի փոխվում, յերբ պայմանականորեն առանձին հաշիվներ տեղավոր ւմ ենք հաշվային աղյուսակի աջ կամ ձախ մասում: Յերկկողմանի սխեմայով հաշվային աղյուսակի համար հատկանշականն այն է, վոր տվյալ հաշվում մեծացման և փոքրացման փաստերը գատվեն միմյանցից: Հարց ե ծագում. այս յերկու վարիանտներից վճրը գորագասենք. ուրիշ խոսքով հաշվային աղյուսակի վճր մասում պիտի նշանակել տվյալ հաշվի մեծացումները և վճր մասում՝ փոքրացումները: Քննենք, թե այդ հարցն ինչպես ե լուծվում գործնականում:

Հաշվային աղյուսակի դեբետային յեվ կրեդիտային մասեր

Հայանի չե, վոր ամեն մի հաշիվ հաշվեկշռի բաղկացուցիչ տարրն ե միայն: Այս պա՛ ճառով, ամեն մի հաշվային աղյուսակ վոչ այլ ինչ ե, քան հաշվեկշռի աղյուսակի մի առանձին բաղկացուցիչ մասը: Հաշիվ-

ների մեջ կատարվող գրանցումները շարունակություն են այն փոփոխությունների գրանցումներին, վորոնք կատարվում են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում: Այստեղից պարզ է՝ ամեն մի հաշվային աղյուսակում գրանցումն սկսվում ե տվյալ հաշվի հաշվեկշռային գումարի նշանակումով: Առաջին գրանցումը հաշվի մեջ, գործնականում կոչվում ե հիմնազան հաշվի Հարց ե ծագում՝ հաշվային աղյուսակի վճր մասում պիտի կատարել հիմնական գրանցումը: Պրակտիկան այս հարցը լուծում ե հետևյալ ձևով:

Հաշվեկշռի աղյուսակում, վոր ուղղաձիգ գծով բաժանված ե յերկու մասի, ընդունված ե պայմանաբար ախտիվային մեծությունները նշանակել ձախից, իսկ պասիվայինները, աջից: Քանի վոր հաշվային աղյուսակները շարունակությունն են հաշվեկշռի բաղկացուցիչ մասերի փոփոխություններին գրանցման, ապա ուրեմն հիմնական գրանցումն ել հաշվային աղյուսակում արվում ե հենց այդ մասում, ինչպես հաշվեկշռի աղյուսակում: Ուրիշ խոսքով, ակտիվային հաշվային աղյուսակներում հիմնական գրանցումը կատարվում ե ձախ մասում, իսկ պասիվային հաշվային աղյուսակներում՝ աջ մասում:

Այստեղից ել՝ առաջին յեզրակացությունը. ա) այն հաշվային աղյուսակներում, վորոնք նշանակված են ակտիվի հաշվառելի համար, առաջին գրանցումը կատարվում ե ձախ մասում. բ) այ՝ հաշվային աղյուսակներում, վոր նք նշանակված են պասիվի հաշվառելի համար. ընդհանրապես, առաջին գրանցումը կատարվում ե աջ մասում:

Իհարկե՝ կարելի յեր և այլ կերպ վարվել: Բայց.

մենք այնուհետև կպահպանենք պրակտիկայում ընդունված գրաֆիկային տրաֆորետ:

Ասենք թե մենք ունենք ինչ վոր տնտեսութեան հետևալ հաշվեկշիռը գործողութունների սկզբին.

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Դրամարկղ . . . 1.000	տնտես. ֆոնդ 4.000	
պատրաստի արտադրանք . . . . . 5.000	Պետքանկ . . . 2.000	
		6.000
		6.000

Անցկացնենք տվյալ հաշվեկշիռի գումարները առանձին հաշվային աղյուսակների մեջ: Հիմնական գըրանցում ակտիվի հաշվային աղյուսակներում կանենք ձախ մասում, իսկ պասսիվի հաշվային աղյուսակներում՝ աջ մասում: Գործողութունների սկզբին ակտիվային և պասսիվային սալիդոները հաշվային աղյուսակների մեջ անցկացնելուց հետո, կունենանք՝

Դրամարկղ	տնտեսական ֆոնդ
Մ. 1000	Մ 4.000
Պատրաստի արտադրանք	
Մ. 5.000	Պետքանկ
	Մ. 2 000

Այսպես, ակտիվի սալիդոն մենք գրեցինք հաշվային աղյուսակների ձախ մասում, իսկ պասսիվի սալի

դոն՝ աջ մասում: Ս տառը, հաշվային աղյուսակներում նշանակում է Սալիդո: Մենք տեսնում ենք, վոր ամբողջ հաշվեկշիռը մեզ ներկայանում է տարբարած ված վիճակում, ակտիվը ու պասսիվը նշանակված են այժմ առանձին հաշվային աղյուսակներում: Ակներև է վոր հաշվային աղյուսակները ներկայացնում են վոչ այլ ինչ, քան հաշվեկշիռային աղյուսակի վերածումը իր առանձին բաղկացուցիչ տարրերի կամ հաշվային աղյուսակների, ըստ վորում ակտիվի սկզբնական գումարները հաշվային աղյուսակներում գետեղվում են ձախ կողմից, իսկ պասսիվի սկզբնական գումարները՝ աջ կողմից:

Յեթե շարունակենք ոգտվել հաշվային գումարման և հանման պրիոմներով՝ կստանանք հետևյալը. ակտիվի հաշվային աղյուսակներում հաշվեկշիռային սալիդոն նշանակվում է ձախից: Հետևաբար՝ ակտիվային հաշիվներում բոլոր մեծացումներն ել պետք է նշանակվեն հաշվային աղյուսակների նույն ձախակողմյան մասում: Ընդհակառակն, բոլոր փոքրացումները պիտի նշանակվել հակառակ, այսինքն՝ աջ մասում: Այսպիսով, ակտիվի բոլոր հաշվային աղյուսակներում բոլոր մեծացումները նշանակվում են ձախ կողմում (Գումարելիներ), իսկ փոքրացումները՝ աջ կողմում (հանելիներ):

Ընդհակառակն, պասսիվի հաշվային աղյուսակներում հակառակ պրիոմն է պահպանվում: Քանի վոր պասսիվային հաշվային աղյուսակներում հաշվեկշիռային սալիդոն նշանակվում է աջից, ապա և բոլոր մեծացումները պիտի նշանակվեն աղյուսակի նույն աջ կողմը, իսկ փոքրացումները՝ հակառակ, այսինքն՝ ձախ կողմը:

Այսպիսով, պատսիվի հաշվային աղյուսակներում աջ կողմում նշանակվում են ավյալ հաշվի բոլոր մեծացումները (գումարելիները), իսկ ձախում՝ բոլոր փոքրացումները (հանելիները):

Այստեղից ել՝ լերկրորդ յեղբակացությունը. ա) ակտիվի հաշվառքի համար նշանակված հաշվային աղյուսակներում՝ ձախ կողմում նշանակվում են ավյալ հաշվի բոլոր մեծացումները, իսկ աջ կողմում՝ բոլոր փոքրացումները, բ) պատսիվի հաշվառքի համար նշանակված հաշվային աղյուսակներում, ընդհակառակն, բոլոր մեծացումները գրվում են աջից, իսկ փոքրացումները՝ ձախից:

Այսպես ե պրակտիկայում ընդունված գրաֆիկական տրաֆարետը:

Այժմ կարելի յե միացնել յերկու յեղոակացությունները: Կստանանք. 1. առաջին կամ հրմնական գրանցումը յուր քանչյուր հաշվային աղյուսակում անց ե կացվում հենց այն կողմում, վոր կողմում այդ հաշվային գումարը նշանակված ե հաշվեկշռի միջ: 2. հրմնական գրանցման մեծացումները նշանակվում են հենց նույն կողմում, իսկ փ քրացումները՝ հաշվային աղյուսակի հակառակ կողմում:

Պայմանավորվենք այսպես. հաշվային աղյուսակի այն մասը, վորտեղ նշանակվում են դերետային փոփոխությունները, անվանենք դիբետային մաս, իսկ այն մասը, վորտեղ նշանակվում են կրեդիտային փոփոխությունները, անվանենք կրեդիտային մաս: Այժմ հարց ե ծագում. հաշվային աղյուսակի վոր մասն ե հանդիսանում դերետային ե վորը՝ կրեդիտային:

Մենք տեսանք, վ:ր այն հաշվային աղյուսակ-

ներում, վորոնք նշանակված են ակտիվի հաշվառքի համար, պայմանակալահորեն ընդունած գրաֆիկային մեթոդով կառուցելու հետևանքով, բոլոր մեծացումները նշանակվում են ձախից, իսկ փոքրացումները՝ աջից:

Հի. ենք, թե ինչ են ներկայացնում ակտիվի մեծացումները: Ինչպես գիտենք, նրանք դերետային փոփոխություններ են իսկ ինչ են ներկայացնում ակտիվի փոքրացումները: Ինչպես գիտենք, նրանք կրեդիտային փոփոխություններ են: Սրանից կարելի յե յեղբակացնել այն, վոր ակտիվի հաշվային աղյուսակներում մենք ստանում ենք հետևյալ տեղադրումը. ձախ կողմը ներկայացնում ե հաշվի դերետային մասը, իսկ աջ կողմը՝ կրեդիտային մասը:

Ընդհակառակն, պատսիվի հաշվառքի համար նշանակված հաշվային աղյուսակներում հակառակ պրիտումն ե պահպանվում: Այստեղ բոլոր մեծացումները նշակվում են աջից, իսկ փոքրացումները՝ ձախից: Սակայն հիշենք, թե ինչ են ներկայացնում պատսիվի բաղկացուիչ մասերի մեծացումները: Նրանք, ինչպես վերևում վորոշեցինք, կրեդիտային փոփոխություններ են: Ուրեմն, պատսիվի հաշվային աղյուսակներում բոլոր կրեդիտային փոփոխությունները կենտրոնանում են աջ կողմում: Պատսիվի փոքրացումը դերետային փոփոխություն ե: Ուրեմն, պատսիվի հաշվային աղյուսակներում բոլոր դերետային փոփոխությունները կենտրոնանում են ձախ կողմում: Այստեղից կարելի յե յեղբակացնել, վոր պատսիվի հաշվային աղյուսակներում, պայմանական գրաֆիկ մեթոդի կառուցման շնորհիվ սենք ստանում ենք հետևյալ տեղադրումը. ձախ կողմը. ներկայումս ե հաշվի դերետային մասը, իսկ աջ կողմը՝ կրեդիտային մասը:

Այսպիսով, ակտիվի և պասսիվի հաշվային աղ-  
յուսակներում գրանցումները պայմանական տեղադր-  
ման հետևանքով, հավասարապես պահպանվում են  
միատեսակ դրուժյուն: Ակտիվային և պասսիվային հաշ-  
վային աղյուսակների ձախ կողմը հատկացվում են  
դեբետային գրանցումների համար: Սա հաշվի դիբե-  
տային մասն է: Ակտիվի և պասսիվի հաշվային աղյու-  
սակների աջ կողմը հատկացվում են կրեդիտային փո-  
փոխությունների գրանցման համար: Սա հաշվի կրե-  
դիտային մասն է: Այսպիսով, տարբերությունը հան-  
գում է միայն նրան, վոր դեբետն ու կրեդիտը, ան-  
կախ հաշվային աղյուսակներում իրենց գրաված տե-  
ղից, ելապես պահպանում են միմյանց վերաբերմամբ  
տրամագծորեն հակառակ նշանակությունը:

Հաշվեկշռի աղյուսակի և հաշվային աղյուսակնե-  
րի միջև գրաֆիկ հարակցությունը կարելի չի ներկա-  
յացնել հետևյալ ձևով.

Ա.ԿՏԻՎ	ՀԱՇՎԵԿՇԻՌ	ՊԱՍՍԻՎ
Միջոցների գետեղու- մը գործառնության սկզբին		Միջոցների ծագումը գործառնության սկզբին:

ԴԵԲԵՏ	Ա.ԿՏԻՎԱՅԻՆ ՀԱՇՎՎՆԵՐ	ԿՐԵԴԻՏ
ա. Ակտիվային հիմնա- կան գումարը բ. Հիմնական գումար ը մեծացումը		ա. Հիմնական գումար ը փոքրացումը.

ա. Հիմնական գումար ը փոքրացումը	ա. Պասսիվային հիմ- նական գումարը բ. Հիմնական գումարը մեծացումը
Ա.ԿՏԻՎ	ՀԱՇՎԵԿՇԻՌ
Միջոցների գետեղու- մը գործառնություն- ներից հետո	նույն միջոցների ծագման աղբյուրները

Հետևաբար՝ տեխնիկապես բանը հանդում է հե-  
տևյալին. Գործառնությունների սկզբին ներկայացվում  
են հաշվեկշռի աղյուսակը՝ ակտիվի և պասսիվի մեծու-  
թյունների թվարկմամբ: Այնուհետև ակտիվի և պաս-  
սիվի բոլոր գումարները անց են կացվում առանձին  
հաշվային աղյուսակների մեջ, վորտեղ նշանակվում  
են ավել հաշիվների մեջ միմյանց հետ փոխադար-  
ձաբար կապված բոլոր այն փոփոխությունները — մե-  
ծացումներն ու փոքրացումները — վորոնք կատարվում  
են տնտեսական գործառնությունների աղբյուրությամբ՝  
տնտեսական աշխատանքների նախագծված պլանը  
կատարելու հիման վրա: Այնուհետև հանվում են յու-  
րաքանչուր հաշի սայլոն և կազմվում են հաշվեկշռի  
նոր աղյուսակ: Այդ աղյուսակն արտահայտում է որո-  
տեսության դրությունը գործառնություններից հետո.  
Նա ծառայում է վորպես վերստուգում՝ տնտեսական  
պլանի կատարման համար:

ԳՐԱՆՑՈՒՄԸ ՀԱՇՎԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՄԵՋ

Հաշվային գրանցումների տեխնիկան ընդհանուր

և սխեմատիկ ձևով պարզելու համար մի փոքրիկ թվական սրիհակ բերենք:

Ասենք՝ թե ունենք ինչ վոր տնտեսության հետևյալ հաշվեկշիռը.

ԱԿՏԻՎ	ՀԱՇՎԵԿՇԻՐ	ՊԱՊՄԻՎ
Արտադրակ. սարքավորում 30.000	Տնտեսական ֆոնդ. 35.000	
Նյութեր . . . . . 8.000	Պետրանկ . . . . . 9 000	
Պատրաստի արտադրանք . 5.000	Բանվոր. ծառայող. 1.000	
Դրամարկղ . . . . . 2.000		45.000
		45.000

Նախ՝ հաշվեկշռի բոլոր տարրերի ակտիվային և պասսիվային սալ՝ դոսերը անցկացնենք առանձին հաշվային աղյուսակները. Դրանից հետո կնշանակենք այդ հաշվային աղյուսակներում հաշվեկշռի բաղկացուցիչ մասերում կատարվող այն փոփոխությունները, վորոնք պայմանավորված են տնտեսական գործառնություններով: Յենթադրենք թե տնտեսության մեջ վորոշ ժամանակի ընթացքում տեղի չեն ունեցել հետևյալ գործառնությունները (որինակները և հաշվավարումներն առավելապես տեսական բնույթ են կրում):

Գործազուրյուն 1. Կանխիկ տրված և աշխատակրցին առհաշիվ՝ նյութեղեններ մթերելու համար—1500.

Այս գործողության հետևանքով կանխիկ դրամը տնտեսության մեջ պակսում և Իսկ ակտիվի փոքրացումը կրեդիտային փոփոխություն և. ուստի 1,500 ու. գումարը կանցկացնենք աղյուսակի կրեդիտային այն մասում, վորը հատկացված և դրամարկղի հաշվին:

Նույն այդ գործողությունն առաջ և բերում

տնտեսության համար իրավունքներ՝ հաշվետվության լենթակա անձանց նկատմամբ: Այդ իրավունքների հաշվառման համար անհրաժեշտ և բաց անել հատուկ ակտիվային հաշիվ՝ հաշվետու անձանց հաշիվ անվան տակ: Բանի վոր ակտիվի մեծացումը դեբետային փոփոխություն և հանդեսանում, ապա ուրեմն, 1 500 ու. գումարը կանցկացնենք հաշվետու անձանց հաշվի դեբետային մասում:

Ուրեմն, տվյալ գործողություն գումարը գրվում և հաշվետու անձանց հաշվի ձախ կողմում և դրամարկղի հաշվի աջ կողմում:

Գործողություն 2. Ստացված և Պետրանկից՝ կանխիկ՝ 2000.

Այս գործողությունը, նախ՝ առաջացնում և մեծացում կանխիկ դրամի: Ակտիվի մեծացումը դեբետային փոփոխություն և 2000-ը նշանակում ենք դրամարկղի հաշվի հաշվառքի հախար հատկացված աղյուսակի դեբետային մասում:

Նույն այս գործողությունն առաջացնում և նաև մեծացում Պետական բանկի կողմից մեր տնտեսությունը մեր տնտեսության պարտքը Պետականին կադ և ում եր 9000 ալթմ այդ պարտքն աճում և 21 00-ով: Պասսիվի մեծացումը կրեդիտային փոփոխություն և. ուստի 2000-ը կգրենք Պետականի հաշվին հատկացված հաշվային աղյուսակի կրեդիտային մասում: Այսպիսով տվյալ գործողություն գումարը գրվում և դրամարկղի հաշվի ձախ կողմում և Պետականի հաշվի աջ կողմում և:

Գործողություն 3. Իրացված և պատրաստի արտադրանք՝ 3000 ու. իր գնահատություն համաձայն:

Գնորդի հետ տեսնված և անկանխիկ հաշվառք՝ Պետ-  
բանկի միջոցով:

Այս գործողութիւնը փոքրացնում է պատրաստի  
արտադրանքի պաշարը մեր տնտեսութեան մեջ: Ակտիվի  
փոքրացումը կրեդիտային փոփոխութիւնն է, ուս-  
տի 3000-ը կանցկազնէնք պատրաստի արտադրանքին՝  
պաշարի շարժողութեան հաշվառքին հատկացված ա-  
ղյուսակի կրեդիտային մասում:

Այս գործառնութեան վերաբերյալ հաշվեհարդարը  
գնորդի հետ կատարվում է Պետբանկի միջոցով՝ ան-  
կանխիկ ձևով: Այդ պատճառով գործողութեան հե-  
տևանքը լինում է՝ Պետբանկի կողմից մեր տնտեսու-  
թիւնը ֆինանսավորելու չափի պակասումը: Պասսիվի  
փոքրացումը դեբետային փոփոխութիւնն է, ուստի  
3000-ը կարենք Պետբանկի հաշիվներին հաշվառքին  
հատկացված հաշվային աղյուսակի ձախ մասում:

Այսպիսով, տվյալ գործողութեան գումարը գրվում  
է՝ Պետբանկի հաշիվի ձախ կողմում և պատրաստի ար-  
տադրանքի հաշիվի աջ կողմում:

Գործողութիւն 4. Հաշվետվութեան լինթակա անձը  
մթերել է նյութեր՝ 1400 ու: Նյութերը մուծված են  
տնտեսութեան պահեստը:

Այս գործողութիւնը առաջ է բերում նյութերի  
պաշարի մեծացում տնտեսութեան պահեստներում:  
Ակտիվի մեծացումը դեբետային փոփոխութիւնն է,  
ուստի 1.400 ը կարենք նյութերի պաշարի հաշվառքին,  
հատկացված հաշվային աղյուսակի դեբետային մա-  
սում:

Նույն գործողութիւնը փոքրացնում է տնտե-  
սութեան իրավունքները հաշվետվութեան լինթակա

անձանց վերաբերմամբ: Ակտիվի փոքրացումը կրեդի-  
տային փոփոխութիւնն է, ուստի 1.400 ը կարենք  
հաշվետվութեան լինթակա անձանց հաշիվներին հատ-  
կացված աղյուսակի կրեդիտային մասում:

Ուրեմն, տվյալ գործողութեան գումարը գրվում  
է նյութերի հաշիվի ձախ կողմում և հաշվետվութեան  
լինթակա անձանց հաշիվի աջ կողմում:

Գործողութիւն 5. Վճարված է բանվորներին և  
ծառայողներին ի հաշիվ աշխատավարձի՝ 1000 ու կան-  
խիկ:

Այս գործողութիւնը փոքրացնում է կանխիկ  
գրամի քանակը մեր տնտեսութեան մեջ: Ակտիվի  
փոքրացումը կրեդիտային փոփոխութիւնն է, ուստի  
1000 ը կարենք գրամական գումարներին շարժման  
հաշվառքին հատկացված աղյուսակի կրեդիտային  
մասում:

Միաժամանակ, նույն գործողութիւնը փոքրաց-  
նում է տնտեսութեան պարտքը՝ բանվորներին և ծա-  
ռայողներին: Աշխատավարձը վճարելով, տնտեսու-  
թիւնը հանպցնում է իր պարտքը բանվորներին և  
ծառայողներին: Պասսիվի փոքրացումը դեբետային  
փոփոխութիւնն է, ուստի 1000 ու կարենք բանվորների  
և ծառայողների աշխատավարձի հաշիվին հատկացված  
աղյուսակի դեբետային մասում:

Ուրեմն՝ այս գործողութեան գումարը գրվում է  
բանվորների և ծառայողների հաշիվի ձախ կողմում և  
գրամարկդի հաշիվի աջ կողմում:

Գործողութիւն 6. Նյութերի մի մասը, համաձայն  
իրենց գնահատման՝ 500 ուսուրու, իրացնում ենք:  
Գնորդի հետ հաշիվ է տեսնվում Պետբանկի միջոցով՝  
անկանխիկ ձևով:

Այս գործողութիւնով փոքրանում է մեր տնտեսութեան մեջ չեզոք նյութերի պաշարը: Ակտիվի փոքրացումը կրեդիտային փոփոխութիւնն է. ուստի 500ռ. գումարը կգրենք նյութերի պաշարի շարժման հաշվառքին հատկացված հաշվային աղյուսակի կրեդետային մասում:

Միաժամանակ՝ նույն գործողութիւնը փոփոխութիւնն է առաջ բերում մեր և Պետրանկի միջև յեղած հաշիվների մեջ: Քանի վոր գնորդի հետ հաշիվ ենք տեսնում Պետրանկի միջոցով, ապա, պարզ է, վոր Պետրանկի կողմից մեր տնտեսութիւնը ֆինանսավորելու փաստական չափը ավյալ գործողութեամբ փոքրանում է: Պասսիվի փոքրացումը դերետային փոփոխութիւնն է. ուստի 500 ռ. գումարը կանցկանցնենք Պետրանկի կողմից մեր տնտեսութիւնը ֆինանսավորելու հաշվառքին նվիրված հաշվային աղյուսակի դերետային մասում:

Այսպիսով, ավյալ գործողութեան գումարը գրվում է Պետրանկի հաշիվի ձախ կողմում և նյութերի հաշիվի աջ կողմում:

Կործողութիւն 7. Հաշվետվութեան լինթակա անձը վերադարձնում է չծախսված գումարների մնացորդ 100 ուրբիին Պետրանկի:

Այս գործողութիւնն ամենից առաջ անդրադառնում է մեր և հաշվետվութեան յերթակա անձանց փոխադրած հաշիվների վրա: Տնտեսութեան իրավունքները հաշվետվութեան լինթակա անձանց նկատմամբ փոքրանում են: Ակտիվի փոքրացումը կրեդիտային փոփոխութիւնն է. ուստի 100 ռ. գումարը կմտցնենք հաշվետվութեան յերթակա անձանց հատկացված հաշվային աղյուսակի կրեդիտային մասում:

Միաժամանակ, այս գործողութիւնը փոփոխութիւնն է առաջացնում Պետրանկի հաշիվների մեջ. Քանի վոր հաշվետու անձը չծախսված գումարների մնացորդը Պետրանկի է մտցնում, ապա ուրեմն դրանով փոքրանում է Պետրանկի կողմից մեր տնտեսութիւնը ֆինանսավորելու փաստական չափը. իսկ պասսիվի փոքրացումը, ինչպես հայտնի յե՛ դերետային փոփոխութիւնն է: Ուստի 100 ռ. գումարը կգրենք Պետրանկի հաշիվներին հատկացված հաշվային աղյուսակի դերետային մասում:

Այսպիսով, ավյալ գործողութեան գումարը գրվում է՝ Պետրանկի հաշիվի ձախ կողմում և հաշվետու անձանց հաշիվի աջ կողմում:

Այս բոլոր վերլուծած գրանցումներն առանձին հաշվային աղյուսակներում հետևյալ կերպով կարտացոլեն.

1. ԱԿՏԻՎԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

Հաշիվ արտադրական սարքավորման	
+	-
Սալ'դո . . . . . 30.000	
	30 000
Սալ'դո . . . . . 30.000	
Հաշիվ	Գյուրերի
+	-
Սալ'դո . . . . . 8.000	№ 6 . . . . . 500
№ 4 . . . . . 1.400	
	500
9.400	
Սալ'դո . . . . . 8.000	

Հաժիվ պատրաստի արժանագրի

+		—	
Սալ'դո . . . . .	5,000	№ 3 . . . . .	3,000
	<u>5,000</u>		<u>3,000</u>
Սալ'դո . . . . .	2,000		

Հաժիվ դրամարկի

+		—	
Սալ'դո . . . . .	2,000	№ 1 . . . . .	1,500
№ 2 . . . . .	<u>2,000</u>	№ 5 . . . . .	<u>1,000</u>
	4,000		2,500
Սալ'դո . . . . .	1,500		

Հաժիվ հաժիվիսու անձանց

+		—	
№ 1 . . . . .	1,500	№ 4— . . . . .	1,400
	<u>1,500</u>	№ 7— . . . . .	<u>100</u>
			1,500
Սալ'դո— . . . . .	0		

2. ՊԱՍՍԻՎԱՅԻՆ ՀԱՇՎՎՆԵՐ

Հաժիվ անհատական Ֆոնդի

—		+	
		Սալ'դո . . . . .	35,000
			<u>35,000</u>
Սալ'դո . . . . .	35,000		

Հաժիվ Պետրանկի

—		+	
№ 9— . . . . .	3,000	Սալ'դո . . . . .	9,000
№ 6— . . . . .	500	№ 2— . . . . .	<u>2,000</u>
№ 1— . . . . .	<u>100</u>		11,000
	3,600		
Սալ'դո . . . . .	7,400		

Հաժիվ բանվորների յեվ ծառայողների

—		+	
№ 5 . . . . .	1,000	Սալ'դո . . . . .	1,000
	<u>1,000</u>		<u>1,000</u>
Սալ'դո . . . . .	0		

Ինչպես տեսնում ենք, տեխնիկական տեսակետից լերկհողմանի սխեմայի սկզբունքով կառուցված հաշվալին աղյուսակներով ուղղվելը վորոշ հարմարություններ ունի: Այս աղյուսակներում, շնորհիվ նրանց գրաֆիկ կառուցման, գրանցումները դատում են տվյալ հաշվի մեծացման փաստը նույն հաշվի փոքրացման փաստից: Միաժամանակ, այս բոլորը նպաստում է վորոշ չափով ցայտուն կերպով լերկան բարելու հաշիվների սալ'դոն և դերետի ու կրեդիտի ընթացքը:

Յեթե բոլոր հաշվալին աղյուսակներում դերետային և կրեդիտային փոփոխությունների գումարներ տանք, ապա դժվար չի լինի յուրաքանչյուր հաշիվ վերջնական սալ'դոն ստանալը: Դրանից հետո հնարավոր է դառնում ներ բալանսային աղյուսակ կազմել:

Թվելով ակտիվի և պասսիվի բաղկացուցչւն տարրերը վերուձած ըստ գործողութիւններից հետո:

Մեր բերած որինակում, գործողութիւնների վերջին կունենանք հետևյալ հաշվեկշռային աղյուսակը:

Ակտիվ	Հաշվեկշիռ	Պասսիվ
Կատարած սարքավորումը	30.000	Տնտես. ֆոնդ 35.000
Նյութեր . . . . .	8.900	Պետքանկ . . . . . 7.400
Պատրաստի արտադրանք	2.000	
Դրամարկղ . . . . .	1.500	
	<u>42.000</u>	<u>42.000</u>

Սակայն հաշվեկշիռը գործողութիւնների վերջին կարող է և ուրիշ ձև ընդունել: Գործողութիւններից հետո հաշվեկշիռը կարելի չե կառուցել համեմատական սխեմայով, այն է՝ ակտիվի և պասսիվի բաղկացուցիչ տարրերը համեմատելով, գործողութիւնների սկզբին և վերջ, ն: Այս դեպքում հաշվեկշիռի աղյուսակը կպարունակի վոչ թե մեկ, այլ յերկու դրամական սյունակներ: Առաջին դրամական սյունակը հատկացվում է ակտիվի և պասսիվի գումարներին՝ գործողութիւնների սկզբին, իսկ յերկրորդը՝ ակտիվի և պասսիվի գումարներին՝ գործողութիւնների վեջին: Կիրառելով այս մեր որինակի նկատմամբ՝ համեմատական հաշվեկշիռը կարող ենք ներկայացնել հետևյալ ձևով:

Ակտիվ

	I	II
Արտադրական սարքավորում . . .	30.000	30.000
Նյութեր . . . . .	3.000	8.900
Պատրաստի արտադրանք . . .	5.000	2.000
Դրամարկղ . . . . .	2.000	1.500
	<u>45.000</u>	<u>42.000</u>

Պասսիվ

	I	II
Տնտեսակ սն ֆոնդ . . . . .	35.000	35.000
Պետքանկ . . . . .	9.000	7.400
Բանվորներ և ծառայողներ . . .	1.000	—
	<u>45.000</u>	<u>42.400</u>

Այսպիսի հաշվեկշռային աղյուսակը, նախորդ աղյուսակի համեմատութամբ, այն առավելությւնն ունի, վոր հնարավորութիւն է տալիս համեմատելու տնտեսութեան զրութիւնը ժամանակի յերկու մասնատում, այն է՝ գործողութիւնների սկզբին և վերջին: Հաշվեկշռային աղյուսակ կարելի չե կազմել և այլ ձևով, այդ դեպքում, բացի սկզբնական և վեջնական գումարներից, ըստ առանձին հաշիվների հաշվեկշռային ա-

դյուսակի մեջ մտնում են միաժամանակ զերեւային ու կրեդիտային փոփոխություններն առանձին հաշիվներէ: Հաշվեկշռի աղյուսակը, այսպիսի կառուցման զեպքում, պարունակում է հետևյալ տարրերը. ա) յուրաքանչյուր հաշվի սկզբնական գումարը, բ) մեծացման և և փոքրացման գումարները, ըստ յուրաքանչյուր հաշվի գ) յուրաքանչյուր հաշվի սալ'դոն, գործողությունից հետո:

Կիրառելով այս վերևում բերած մեր որինակի նկատմամբ՝ այդպիսի հաշվեկշռային աղյուսակը, վոր տալիս է վոչ միայն սկզբնական և վերջնական սալ'դոն, ըստ յուրաքանչյուր հաշվի, այլև տեղեկանքներ՝ գումարների շարժման մասին, ըստ յուրաքանչյուր հաշվի, — կարելի յե պատկերացնել այս ձևով.

Ակտիվ

	Սկզբնական սալ'դոն	Փոփոխություններ		Վերջնական սալ'դոն
		Մեծացումներ (դերեւ)	Փոքրացումներ (կրեդիտ)	
Կատարվ. սարքավ.	30.000	—	—	30 000
Նյութեր	8.000	1.400	500	8.900
Պատրաստ. արտադ.	5.000	—	3.000	2 000
Դրամարկդ	2.000	2.000	2.500	1.500
Հաշվետու. անձինք	—	1.500	1.500	—
	45.000	+4.900	-7.500	42.400

Պասսիվ

	Սկզբնական սալ'դոն	Փոփոխություններ		Վերջնական սալ'դոն
		փոքրացում (դերեւ)	մեծացում (կրեդիտ)	
Տնտեսական ֆոնդ	35.000	—	—	35.000
Պետրանկ	9 000	3.600	2.000	7.400
Բանվորն. և ծառ.	1.000	1.000	—	—
	45 000	-4.600	+2.000	42.400

Հաշվեկշռային աղյուսակի այս ձևը. ինչպես տեսնում ենք, ավելի տեսանելի յե: Նա պարունակում է վոչ միայն սկզբնական և վերջնական սալ'դոնների համեմատական գումարներն ըստ բոլոր հաշիվների, այլև դերեւային և կրեդիտային այն փոփոխությունների մեծութունը, վորոնք տնտեսական գործողությունների ազդեցությամբ կատարվել են յուրաքանչյուր հաշվի մեջ Սրա շնորհիվ, սա զգալի չափով ավելի նյութեր է տալիս տնտեսության շրջանառությունը և դրությունը բնութագրելու համար:

ԴԻԳՐԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԸ

Տնտեսական գործառնությունների՝ հաշվեկշռի հիման վրա կատարվող հաշվառքի ղեկավարող սկզբունքը, ինչպես հայտնի յե, հաստատում է դերեւային և կրեդիտային փոփոխությունների հավասարմեծությունը: Այդ սկզբունքի շնորհիվ ամեն մի տնտեսական գործառնություն հաշվեկշռի մեջ բեկվում է այնպես,

վոր արջալ հաշվեկշռի մի հաշվում դերետային փոփոխությունը միաժամանակ առաջացնում է հավասարամեծ կրեդիտային փոփոխություն նույն հաշվեկշռի մի ուրիշ հաշվում Յեթե այս սկզբունքը գուգակցե՞ք չերկկողմանի սխեմայով հաշվային աղյուսակների այն կառուցման հետ, վորով մենք ղեկավարվում էյինք որինակային գործառնությունների գրանցման ժամանակ, ապա կարող ենք գալ նետևյալ չեզրակացութայն:

Յուրաքանչյուր տնտեսական գործառնություն հաշվեկշռի մեջ առաջ է բերում դերետային և կրեդիտային փոփոխություններ և այն ել՝ հավասարամեծ փոփոխություններ: Քանի վոր հաշվային աղյուսակներում դերետային փոփոխություններն անց են կացվում դերետային մասում, իսկ կրեդիտայինները՝ կրեդիտային մասում, ապա ակներև է, վոր յուրաքանչյուր գործառնության գումարը կրկնվում է չերկուանգամ: Սրանում է կայանում, այսպես կոչված՝ դիրաֆիկ գրանցումների մեթոդը: Եւ որհիվ հաշվային աղյուսակների պայմանական կառուցման՝ ստացվում է դիրաֆիկ, այսինքն՝ չերկու անգամ կրկնվող՝ գրանցում:

Դիրաֆիկ գրանցումների տեխնիկական մեթոդի շնորհիվ յուրաքանչյուր գործառնության գումարը գրվում է յեկու անգամ: 1. հաշվեկշռի մի հաշվի դերետային մասում 2. նույն հաշվեկշռի այլ հաշվի կրեդիտային մասում:

Դիրաֆիկ գրանցումների տեխնիկական պրիոմն ըստ եյության վոչ այլ ինչ է, յեթե վոչ հասարակ հետևանք դերետային ու կրեդիտային այն հաշվեկշռային փոփոխությունների հավասարամեծության, վորոնք

կատարվում են տնտեսական գործառնությունն երի աղբեցության տակ: Ինքը՝ դիրաֆիցումը, այսինքն՝ յուրաքանչյուր գործառնություն գումարի չերկու անգամ կրկնելը, տեխնիկական պայմանավորված են ներանով, վոր մոնք ընդ ընդում օնք չերկկողմանի սխեմայով հաշվային աղյուսակներ կառուցելու տրաֆիքտը՝ ղատելով դերետային և կրեդիտային մասերը յուրաքանչյուր աղյուսակում: Բացատ ենք այս դրությունը բակապես՝ ակտիվի և պասիվի սալ՝ գոն գործառնության սկզբին, ընդ ընված կանոնի համաձայն, գրանցվում է համապատասխանաբար առանձին հաշվային աղյուսակների դերետային և կրեդիտային մասերում: Սրա հետևանքով, գործառնությունների հենց սկզբից արդեն մենք ունենում ենք հավային աղյուսակներում դերետային և կրեդիտային գումարների հավասարամեծություն:

Տնտեսական ամեն մի գործառնություն հաշվեկշռում անպայմանորեն առաջացնում է դերետային և կրեդիտային հավասարամեծ փոփոխություն: Սրա հետևանքով, յուրաքանչյուր գործառնության գումար անպատճառ պետք է գրանցվի մի հաշվային աղյուսակի դերետային մասում և մյուս հաշվային աղյուսակի կրեդիտային մասում: Հետևաբար, յուրաքանչյուր գործառնություն առաջ է բերում դերետի և կրեդիտի հավասարում: Իրար հաջորդող և անընդմիջվող հավասարումների մի շարք, վորոնք հաշեկ ու բաղկացուցիչ տարրերի մեջ տնտեսական գործողությունների առաջացրած փոփոխություններն են ձևակերպում, անհրաժեշտություն են առաջացնում նորից գրանցելու յուրաքանչյուրի գումարը համապատասխանաբար առ-

անձին հաշվալին աղյուսակներէ դերետալին և կրեդիտալին մասերում:

Իրտենք թե ի՛նչպիսի անդրադարձումն կունենան տնտեսական գործառնությունների ազդեցության տակ կատարվող հաշիկրոային փոփոխությունների հիմնական տիպեր, ակտիվի և պասսիվի առանձին հաշվալին աղյուսակներէ գրանցումների տեսակետից:

Իրցուք՝ մենք ունենք ակտիվային փոփոխություն: Ընչպես հայտնի լի, ակտիվային փոփոխությունն առաջ և բերում մեծացում ակտիվի մի մասում և նույն չափով փոքրացում՝ ակտիվի մի այլ մասում: Բայց ակտիվի մեծացումը նշանակվում և հաշվալին աղյուսակի ձախ մասում, իսկ փոքրացումը՝ հաշվալին աղյուսակի աջ մասում:

Պարզ ե, վոր այդ գործառնության անդրադարձմամբ առանձին հաշվալին աղյուսակներում կատանանք հետևյալ գրանցումը:

Ակտիվային	հաշիվներ
Դ ե բ ե տ	Կ ր ե դ ի տ
Մեծացում	Փոքրացում
1	1

Իրտենք այժմ պասսիվային գործառնության հաշվալին անդրադարձումը:

Հայտնի լի, վոր պասսիվային փոփոխությունը առաջ և բերում մեծացում պասսիվի մի մասում և փոքրացում՝ մյուս մասում: Բայց պասսիվի մեծացումը գրվում և հաշվալին աղյուսակի աջ մասում, ի կ նույն պասսիվի փոքրացումը՝ համապատասխան հաշվալին աղյուսակի ձախ մասում:

Պարզ ե, վոր այստեղ ել հաշվալին աղյուսակներում գործառնության անդրադարձման ժամանակ կատացվի հետևյալ դիգրաֆիկ գրանցումը:

Պասսիվ	հաշիվներ
Դ ե բ ե տ	Կ ր ե դ ի տ
Փոքրացում	Մեծացում
2	2

Անցնենք այն հարցին, թե հաշվալին աղյուսակների գրանցումների տեսակետից ի՛նչպես և անդրադառնում ակտիվա-պասսիվային փոփոխությունը՝ մեծացման ուղղությամբ:

Ակտիվա-պասսիվային փոփոխությունը մեծացման ուղղությամբ նրանում և կայանում, վոր սա, տնտեսական գործառնությունների հիման վրա, ակտիվի մի հաշվում մեծացում և առաջացնում և, միաժամանակ, հավասարամեծ մեծացում առաջացնում պասսիվի հաշիվներից մեկում: Բայց ակտիվի մեծացումը գրվում և հաշվալին աղյուսակի ձախ մասում, իսկ պասսիվի մեծացումը

մը համապատասխան հաշվային աղյուսակի աջ մասում:

Ակներև ե, վոր այստեղ ել, մեր քննարկած գործառնությունը անդրադարձնելով կստանանք հետևյալ զիգրաֆիկան գրանցումը.

Ակտիվային հաշիվներ		Պասսիվային հաշիվներ	
Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
Մեծացում	Փոքրացում	Փոքրացում	Մեծացում
3			3

Վերջապես, քննենք հաշվեկշռային փոփոխության չորրորդ տիպը, այն է՝ ակտիվ-պասսիվային փոփոխությունը՝ փոքրացման ուղղությամբ: Ինչպես ե անդրադառնում ալ փոփոխությունը գործառնությունների գումարները առանձին հաշվային աղյուսակներում գրանցելիս:

Ինչպես հայտնի լե, փոքրացման ուղղությամբ ակտիվ-պասսիվային փոփոխությունները փոքրացումն են առաջ բերում ակտիվի հաշիվներից մեկում ե միաժամանակ փոքրացումն են առաջացնում պասսիվի հաշիվներից մեկում: Բայց, ակտիվի փոքրացումը, ընդունված զրաֆիկային տրաֆարետի համաձայն, գրվում ե հաշվային աղյուսակի աջ կողմում, իսկ պասսիվային փոքրացումը՝ համապատասխան հաշվային աղյուսակի ձախ կողմում:

Ուստի, այստեղ ել, գործառնությունը հաշվային աղյուսակներում անդրադարձնելիս, պահանջվում ե զիգրաֆիկ գրանցման տեխնիկական մեթոդը:

Ակտիվային հաշիվներ		Պասսիվային հաշիվներ	
Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
Մեծացում	Փոքրացում	Փոքրացում	Մեծացում
	4	4	

Հետևաբար, բոլոր դեպքերում ել լիովին ե անփոփոխ պահանջվում ե զիգրաֆիկ գրանցումների տեխնիկական մեթոդը, վոր ներկայացնում ե յուրաքանչյուր գործառնության մեջ հաշվեկշռային փոփոխությունների դեբետի ե կրեդիտի հավասարամեծության սկզբունքի յուրատեսակ զրաֆիկ արտահայտությունը:

Վերնում քննած զիգրաֆիկ գրանցումների ուղղակիները կարելի լե մի ընդհանրացրած սխեմայով արտահայտել այսպես.

Ակտիվային հաշիվներ		Պասսիվային հաշիվներ	
Դեբետ	Կրեդիտ	Դեբետ	Կրեդիտ
Մեծացում	Փոքրացում	Փոքրացում	Մեծացում
1	1	2	2
3			3
	4	4	

Այս բոլոր դատողութիւններէից հետո գալիս ենք այն յեզրակացութեան, վոր հաշվեկշռի դերետային և կրեդիտային փոփոխութիւններէ հաժասարամեծութեան սկզբունքը, լերկկողմանի սխեմայով հաշվային աղյուսակավորման դեպքում, բերում է ղիզրաֆիկ գրանցումներէ տեխնիկական մեթոդին:

Անհրաժեշտ է, սակայն, նկատել, վոր դերետի և կրեդիտի հավասարամեծութեան սկզբունքը չի պահանջում միշտ և պարտավորապէս «կրկնակի» գրանցումներէ մեթոդ: Այդ սկզբունքը կարող է և ալլ գրաֆիկ արտահայտութեան գտնել, ինչպէս ալլ հետագայում կտեսնենք, այսպէս կոչված՝ շախմատային ձևի որինսկի վրա:

**ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԻԿ ԿԱՆՏՐՈՂ**

Մեր դիտած ղիզրաֆիկ գրանցումներէ մեթոդը հաշվառքի պրակտիկայում մեծ նշանակութիւն ունի: Դիզրաֆիկ գրանցումներէ շնորհիվ, մենք հնարավորութիւն ունենք ավտոմատիկ կերպով վերահսկել, թե վորքան ուղիղ են անցկացված գործողութիւններէ գումարներն առանձին հաշիվներում:

Յե՛վ, իսկապէս՝ յուրաքանչյուր գործառնութեան գումարը պետք է անպայման գրվի մի հաշվային աղյուսակի դերետային մասում և, համապատասխան ուրիշ հաշվային աղյուսակի՝ կրեդիտային մասում: Սրա հետևանքով, մենք ամեն րոպե այնպիսի դրութիւն ենք տեսնում, վոր բոլոր հաշվային աղյուսակներէ դերետային մասերում անցկացրած գումարների ընդհանուր գումարը պիտի հավասար լինի բոլոր հաշվային աղյուսակներէ կրեդիտային մասերում անցկացրած

գումարների ընդհանուր գումարին: Ուրիշ խոսքով՝ դերետային գումարների ընդհանուր հանրագումարը հավասար է կրեդիտային գումարների ընդհանուր գումարին. վորովհետև ալլ ընդհանուր գումարները հավասար գումարելիներից են կազմված: Դերետային և կրեդիտային ընդհանուր գումարների հավասարութեան անհրաժեշտութիւնը հենց զենք է ծառայում վերահսկման և ավտոմատիկ ստուգման՝ թե գրանցումները վորքան ուղիղ են կատարված:

Այս նպատակով կարելի յի սգովել հատուկ կանտրոլային տեղեկագրով, վորք պարունակում է հաշիվեկշռի բոլոր հաշիվների կրեդիտային և դերետային գումարների ընդհանուր գումարը: Բերենք կանտրոլային այսպիսի մի տեղեկագիր՝ կերպով մեր վերը վերլուծած որինսկի նկատմամբ:

	Դերետ	Կրեդիտ
Արտադրական սարքավորում . . . . .	30.000	—
Նյութեր . . . . .	9.000	500
Պատրաստի արտադրանք . . . . .	5.000	3.000
Հաշվետու անձինք . . . . .	1.500	1.000
Դրամաբկղ . . . . .	4.000	2.500
Տնտեսական ֆոնդ . . . . .	—	35.000
Պետրանկ . . . . .	3.600	11.000
Բանվորներ և ծառայողներ . . . . .	1.000	1.000
	<hr/> 54.000	<hr/> 54.000

Գումարներն առանձին հաշիվներում ուղիղ անցկացնելու ցուցանիշը հաշիվների տվյալ հավաքական ամբողջութեան դերետային և կրեդիտային գումարների հավասարութիւնն է: Սակայն պետք է ընդգծել, վոր

այդ հավասարությունն ուղիղ լինելու միայն ձեական ցուցանիչ է: Այդ հավասարությունը չի դրսևվորում այն սխալները, վորոնք առաջանում են այն դեպքում յերբ դերետային և կրեդիտային մասերում համապատասխանաբար թեպետև գրանցվում են, բայց վոչ պատշաճ հաշիվներում: Այդ կարգի սխալները գտնելու և ուղղելու յեղանակների մասին խոսք կուենանք հետագայում:

Գրանցումների ավտոմատիկ վերահսկողութունը վոր րդիվում և դերաֆացման տեխնիկական մեթոդից, ավելի հեռուն և տարածվում: Կարելի յե չսահմանափակվել դերետային և կրեդիտային գումարների իտոգների կանարոլային տեղեկագիր կազմելով: Կանտրոլի համար կարելի յե դիմել և առանձին հաշիվների դերետային և կրեդիտային մնացորդների կամ սալ՝ դոնների իտոգներ կազմելուն: Տեսնենք՝ ինչ յեթաբաժանումներ են թույլ տալիս հաշվեկշիռի հաշիվները՝ իրենց սալ՝ դոնների տեսակետից:

Սալ՝ դոնների տեսակետից բոլոր հաշիվները կարելի յե բաժանել յերեք խմբի: 1) հաշիվներ, վորոնք դերետային սալ՝ դո ունեն: 2) հաշիվներ վորոնք ունեն կրեդիտային սալ՝ դո, և 3) հաշիվներ, վորոնք վոչ մի սալ՝ դո չունեն:

Դերետային սալ՝ դո ստացվում և այն դեպքում, յերբ տվյալ հաշվում դերետի իտոգը գերազանցում և կրեդիտի իտոգը: Այսպիսով, դերետի սալ՝ դոն ներկայացնում և դերատային իտոգի գերակշռութունը՝ կրեդիտային իտոգի նկատմամբ, վորը, վորպես կանոն, հատկանշական և ակտիվային հաշիվների համար:

Կրեդիտային սալ՝ դո ստացվում և այն դեպքում յերբ տվյալ հաշվում կրեդիտի իտոգը գերազանցում և

դերետի իտոգը: Այսպիսով, կրեդիտի սալ՝ դոն ներկայացնում և կրեդիտային իտոգի հաշվարկած գերակշռութունը դերետայինի նկատմամբ, վորը, վորպես կանոն, հատկանշական և պասսիվային հաշիվների համար:

Վերջապես, դերոյի հավասար սալ՝ դոն ստացվում և այն դեպքում, յերբ տվյալ հաշվի դերետի իտոգը թվապես հավասար և նույն այդ հաշվի կրեդիտի իտոգին: Այսպիսով, դերոյին հավասար սալ՝ դոն ցույց և տալիս, վոր տվյալ հաշվում դերետային և կրեդիտային գումարները հավասարակշռվում են: Զերո սալ՝ դո կարող և լինել թե ակտիվային հաշիվներում, թե պասսիվային:

Գտնենք դերետի սալ՝ դոն և կրեդիտի սալ՝ դոն մեր որինակի բոլոր հաշիվներում: Կատանանք հետևյալը:

	Դերետի սալ՝ դոն	Կրեդիտի սալ՝ դոն
Արտադրական սարքավորում . . . . .	30.000	—
Նյութեր . . . . .	8.900	—
Պատրաստի արտադրանք . . . . .	2.000	—
Հաշվետու անձինք . . . . .	—	—
Դրամարկդ . . . . .	1.500	—
Տնտեսական ֆոնդ . . . . .	—	35.000
Պետրանկ . . . . .	—	7.400
Բանվորներ և ծառայողներ . . . . .	—	—
	<hr/> 42.400	<hr/> 42.400

Ինչ յեզրակացության կարող ենք գալ, դիտելով հաշիվների տվյալ հավաքական ամբողջության դերե-

տի սալ'դոնների և կրեդիտի սալ'դոնների խոողը: Մենք տեսնում ենք, վոյր տվյալ դեպքում ստացվում է հավասար խոողների մի նոր զույգ. տվյալ հաշիվների դեբեթի հավաքական սալ'դոն հավասարանեծ է նույն հաշիվների կրեդիտի հավաքական սալ'դոնին: Ինչո՞վ է բացատրվում այդ հավասարությունը: Ինչո՞ւ հաշիվների ընդհանուր հավաքականության մեջ դեբեթի սալ'դոն հավասար է կրեդիտի սալ'դոնին:

**ԴԵԲԵՏԱՅԻՆ ՅԵՎ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՍԱԼ'ԴՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ**

Տվյալ հաշիվների հավաքական ամբողջության դեբետային և կրեդիտային սալ'դոնների հավասարանեծությունը հիմնավորելու համար կարելի է ոգտվել հետևյալ չրկու ձևական ապացույցներով.

Առաջին ապացույց. Տեսնենք, թե սովորաբար ինչպես ենք վորոշում այս կամ այն հաշիվի սալ'դոն: Այս կամ այն հաշիվի սալ'դոն վորոշելիս, մենք հանում ենք փոքր գումարը տվյալ հաշիվի թե դեբետային և թե կրեդիտային խողից: Դրանելով լուրաքանչյուր հաշիվի սալ'դոն, մենք, ելասպես, թե դեբեթից և թե կրեդիտից հանում ենք միևնույն գումարը: Բացատրենք այդ այն հաշիվների վրա, վորոնք վերլուծեցինք վերևում:

Վերցնենք արտադրական սարքավորման հաշիվը: Այս հաշիվի դեբետային խողը կազմում է՝ 30.000 կրեդիտայինը՝ 0. սալ'դոն վորոշելու համար դեբեթից և կրեդիտից ել հանում ենք 0.

Արտադրական սարքավորում . . . . .	30.000	0
	— 0 — 0	
	30.000	0

Ստանում ենք դեբետային սալ'դոն—30.000. Անցնենք այժմ նյութերի հաշիվի քննութայն: Այս հաշիվի դեբետային խողը 9.400 է. կրեդիտայինը՝ 500. սալ'դոն վորոշելու համար թե դեբեթից և թե կրեդիտից հանում ենք—500.

Նյութեր . . . . .	9.400	500
	— 500	— 500
	8.900	0

Ստացվում է դեբետային սալ'դոն—8 900. Հետևյալ հաշիվը պատրաստի արտադրանքի հաշիվն է: Այս հաշիվի դեբետային խողը 5000 է. կրեդիտայինը՝ 3.000.

Հանենք փոքր գումարը, այն է՝ 3000-ը թե դեբեթից և թե կրեդիտից:

Պատրաստի արտադրանք . . . . .	5.000	3.000
	— 3.000	— 3.000
	2.000	0

Ստանում ենք դեբետային սալ'դոն—2000. Հաշվետու անձանց հաշվում դեբետային խողը հավասար է 1.500-ի, կրեդիտայինը՝ նույնպես 1.500-ի: Սալ'դոն վորոշելու համար հանենք թե դեբեթից և թե կրեդիտից 1.500-ը.

Հաշվետու անձինք . . . . .	1.500	1.500
	— 1.500	— 1.500
	0	0

Ստանում ենք սալ'դոն—0: Դրամարկի հաշվում ունենք հետևյալ խողները. դեբետային՝ 4.000, կրեդիտային՝ 2.500. Սալ'դոն վորոշելու համար լերկու մասերից ել հանենք 2.500.

Իրամարկդ . . . . .	4.000	2.500
	-2.500	-2.500
	<u>1.500</u>	<u>0</u>

Դերետային սալ'դո ունենք՝ 1.500.

Անցնենք այժմ պաստիվային հաշիվների սալ'դոն գտնելուն: Վերցնենք տնտեսական Փոնդի հաշիվը: Այդ հաշիվի կր'դիտային խտոզը կազմում է 35.000: Դերետում ունենք՝ 0.

Տնտեսական Փոնդ . . . . .	0	35.000
	-0	-0
	<u>0</u>	<u>35.000</u>

Ունենք կրեդիտային սալ'դո՝ 35.000.

Պետքանկի հաշիվը տալիս է հետևյալ խտոզները. դերետային՝ 3.600, կրեդիտային՝ 11.000. չերկու խտոզներից էլ հասնենք 3.600.

Պետքանկ . . . . .	3.600	11.000
	-3.600	-3.600
	<u>0</u>	<u>7.400</u>

Ունենք կրեդիտային սալ'դո—7.400.

Վերջապես, ջննենք բանվորների և ծառայողների հաշիվը: Այս հաշիվի դերետային խտոզն է՝ 1.000, կրեդիտայինը՝ նույնպես 1.000. հասնենք դերետից էլ, կրեդիտից էլ 1000 ը.

Բանվորներ և ծառայողներ . .	1.000	1.000
	-1.000	-1.000
	<u>0</u>	<u>0</u>

Այսպիսով, լուրաքանչյուր հաշիվի սալ'դոն գտնելիս՝ ամեն անգամ դերետի խտոզից և կրեդիտի խտոզից հանում ելինք միևնույն մեծությունը: Ընդհա-

նուր ամբողջությամբ բոլոր հաշիվների դերետային և կրեդիտային խտոզ՝ երկու, սալ'դոն վորոշելիս, հանեցինք՝  
 $0 + 500 + 3.000 + 1.500 + 2.500 + 0 + 3600 + 1.000 =$   
 $= 12.100$

Բայց, տվյալ հաշիվների դերետների ընդհանուր հավաքական գումարը հավասար է նույն այդ հաշիվների կրեդիտների հավաքական գումարին: Այդ գումարը կանտրոլային տեղեկագրի համաձայն հազասար է 54.500: Յեթե հավասար խտոզներից հանենք հավասար գումարներ, կստանանք հավասար մնացորդներ.

Դերետ	Կրեդիտ
<u>54.500</u>	<u>54.500</u>
-12.100	-12.100
<u>42.400</u>	<u>42.400</u>

Այսպես, ուրեմն, յեթե տվյալ հաշիվների հավաքական դերետը հավասար ամեծ է տվյալ հաշիվների հավաքական կրեդիտին, ապա նույն հավաքական հաշիվների դերետի ընդհանուր սալ'դոն հավասար ամեծ է կրեդիտի ընդհանուր սալ'դոյին:

Յեղբորդ ապացույց: Հաշիվների ընդհանուր հավաքական ամբողջության դերետային և կրեդիտային հավասար ամեծությունը հիմնավորելու համար բերում են նաև հետևյալ ապացույցը: Ասենք թե, առանձին հաշիվների դերետի և կր'դիտի գումարները տառական արտահայտությամբ հետևյալ մեծություններն ունենա:

առաջին հաշիվ . . . . .	$d^1$	$k^1$
յերկրորդ հաշիվ . . . . .	$d^2$	$k^2$
չերրորդ հաշիվ . . . . .	$d^3$	$k^3$
չորրորդ հաշիվ . . . . .	$d^4$	$k^4$
ո յերբորդ հաշիվ . . . . .	$dn$	$kn$

Ակնհայտ է, վոր առանձին հաշիվներում կալող են լինել՝ կամ դերետային սալ՝դո, կամ կրեղիտային, կամ գերո սալ՝դո:

Կարելի չէ արդյոք յենթադրել, վոր մեր հաշվեկոթի բոլոր հաշիվներում ստացվեն դերետային սալ՝դոներ: Հասկանալի չէ, վոր այդ լինել չի կարող: Բոլոր հաշիվներում դերետային սալ՝դոյի գոյութունը յենթադրելու փաստն ինքնին կբերեր այն յեզրակացութան, վոր տվյալ հաշիվների դերետաների հավաքական ամբողջութունն ավելի մեծ է նույն հաշիվների կրեղիտաների հավաքական ամբողջութունից, վոր, իհարկե, լինել չի կարող:

Ճիշտ այդպես էլ պետք է մերժել այն յենթադրութունը, թե բոլոր հաշիվներում, առանց բացառութան, կարող է ստացվել կրեղիտային սալ՝դո: Այդ պիտի յենթադրութունը կբերեր այն յեզրակացութան վոր տվյալ հաշիվների դերետաների հավաքական ամբողջութունը փոքր է նույն հաշիվների կրեղիտաների հավաքական ամբողջութունից, վորը նույնպես անհնարին է:

Կարելի չէ գուցե, վերջապես, յենթադրել, վոր յուրաքանչյուր առանձին հաշվում դերետի գումարը հավասար լինի կրեղիտի գումարին, այսինքն՝ վոր բոլոր հաշիվներն էլ հավասարակշռված են: Այսպիսի յենթադրութունը տեսականապես չի հակասում հիմնական դրութունը, այսինքն՝ վոր բոլոր տվյալ հաշիվներում հավաքական դերետը հավասարամեծ է հավաքական կրեղիտին: Սակայն փաստորեն այդպիսի բան չի կարող տեղի ունենալ կենդանի և գործող տնտեսութան մեջ, քանի վոր այդ կվկայեր տնտեսութան

լուծարքի և նրա գործառնությունների դատարեցման մասին:

Միակ ուղիղ յեզրակացութունը, վոր կարելի չէ անել, քննութան յենթարկելով առանձին հաշիվների իտոգները, այն է, վոր բոլոր հաշիվները կաբող են բաժանվել յերեք դրուպալի, այն է 1. հաշիվներ՝ դերետային սալ՝դոյով, 2. հաշիվներ կրեղիտային սալ՝դոյով և 3. հաշիվներ գերո սալ՝դոյով:

Դերետի գումարը և կրեղիտի գումարը դերետային սալ՝դո ունեցող հաշիվներում նշանակելով համապատասխանաբար՝

$T_1$  և  $Y_1$  տառերով կունենանք՝

$$T_1 > Y_1$$

Դերետի և կրեղիտի գումարները կրեղիտային սալ՝դո ունեցող հաշիվներում նշանակենք համապատասխանաբար  $T_2$  և  $Y_2$  տառերով: Կունենանք՝

$$T_2 < Y_2$$

Վերջապես, գերո սալ՝դո ունեցող հաշիվներում դերետի և կրեղիտի գումարները նշանակենք  $T_3$  և  $Y_3$  տառերով, կունենանք,

$$T_3 = Y_3$$

Ասածների հիման վրա կարելի չէ դալ հետևյալ յեզրակացութան: Դերետները ընդհանուր գումարն այժմ հավասար կլինի՝

$$T_1 + T_2 + T_3$$

Ճիշտ այդպես էլ բոլոր հաշիվների կրեղիտաների գումարը կկազմի՝

$$Y_1 + Y_2 + Y_3$$

Սակայն հայտնի չէ, վոր տվյալ հաշիվները հա-  
վաքական ամբողջութեան դրեքտները ընդհանուր գու-  
մարը հավասար ե նույն հաշիվների հավաքականու-  
թեան կ'երկրտների ընդհանուր գումարին: Այստեղից  
հետևում է՝

$$T_1 + T_2 + T_3 = Y_1 + Y_2 + Y_3$$

Ըստ պայմանի,  $T_3 = Y_3$  Հետևապես, հանումից  
հետո, կունենանք՝

$$T_1 + T_2 = Y_1 + Y_2$$

Փոխադրելով  $Y_1$  — հավասարութեան ձախ կողմը  
իսկ  $T_2$  ը հավասարութեան աջ կողմը՝ կգտնենք՝

$$T_1 - Y_1 = Y_2 - T_2$$

Ըստ պայմանի  $T_1$  ը մեծ է  $Y_1$ -ից: Հետևաբար,  
 $T_1 - Y_1$  տարբերութիւնը տալիս է դրեքտային սալ'դո:  
Ճիշտ այդպես ել  $T_2$  ը վոքըր է  $Y_2$  ից: Հետևաբար,  
 $Y_2 - T_2$  տարբերութիւնը տալիս է կրեքիտային սալ'դո:  
Այստեղից՝

Դրեքտի սալ'դոն = կրեքիտի սալ'դոյին:

Այսպես, ուրեմն յեթե տվյալ հաշիվների հավա-  
քական դրեքտը հավասարամեծ է նույն հաշիվների  
հավաքական կրեքիտին, ապա դրեքտի ընդհանուր սալ'  
դոն հավասարամեծ է նույն հաշիվների հավաքական  
ամբողջութեան կրեքիտի սալ'դոյին:

Շրջանառութիւնների յեղ սալ'դոների տեղեկագիր.

Պարբերաբար, սովորաբար վոչ պակաս քան ամիսը  
մեկ անգամ, հաշվային գրանցումների հիման վրա,  
կազմվում է շրջանառութիւնների և սալ'դոների տե-  
ղեկագիրը: Այդ տեղեկագիրը պարունակում է, ամենից

առաջ, մնացորդը բոլոր ակտիվ և պասսիվ ախ հաշիվ-  
ները: Վորոնք կային տվյալ ժամանակամիջոցի սկզբին:  
Ապա տեղեկագիրը պարունակում է տվյալ ժամանա-  
կամիջոցում բոլոր առանձին հաշիվները մեջ տեղի ու-  
նեցած կրեքիտային և դրեքտային փոփոխութիւնն-  
ները: Վերջապես, տեղեկագրում տրվում է բոլոր հա-  
շիվների վերջնական սալ'դոն՝ առ սկիզբն հետևյալ ժա-  
մանակամիջոցի: Այսպիսով, շրջանառութիւնների  
և սալ'դոների տեղեկագիրը պարունակում են հետևյալ  
յերեք գույգ հավասար խոոգները:

1. Բոլոր հաշիվների դրեքտի սալ'դոն և կրեքիտի  
սալ'դոն, առ սկիզբն գործառնութիւնների:

2. Բոլոր հաշիվների դրեքտի և կրեքիտի շրջա-  
նառութիւնները տվյալ ժամանակամիջոցում:

Բոլոր հաշիվների դրեքտի և կրեքիտի սալ'դոները  
առ սկիզբն նոր ժամանակամիջոցի:

Վերևում վերլուծած թվական որինակի վերաբեր-  
մամբ՝ շրջանառութիւնների և սալ'դոների կոնտրոլային  
տեղեկագիրը կարող է ներկայացվել հետևյալ ձևով:  
(Տես հաջորդ յերեսի աղյուսակը):

Ֆնենք այժմ, թե ի՞նչ գործնական նշանակու-  
թիւն ունի շրջանառութիւնների և սալ'դոների տե-  
ղեկագիրը, Ի՞նչուեմն է այդ նշանակութիւնը:

Ամենից առաջ, շրջանառութիւնների և սալ'դո-  
ների տեղեկագիրը հնարավորութիւն է տալիս տես-  
նելու առանձին հաշիվների վիճակը տվյալ ժամանա-  
կամիջոցի սկիզբին և վերջին: Դրա շնորհիվ՝ հնարավոր  
է լինում համեմատել տնտեսութեան սկզբնական և վերջ-  
նական դրոթիւնը և բաղդատել այդ դրոթիւնը  
գծած պլանի հետ:

Շրջանառութիւնների տեղեկագիր յեվ սալ'դո

№	Հաշիվների անուններ	սկզբնական սալ'դո		շրջանառութ. ժամանակում		վերջնական սալ'դո	
		դեբետ	կրեդիտ	դեբետ	կրեդիտ	դեբետ	կրեդիտ
1.	արտադր. սարքավորում . . . . .	30.000	—	—	—	30.000	—
2.	նյութեր . . . . .	8.000	—	1.400	500	8.900	—
3.	պատրաստի արտադրանք . . . . .	5.000	—	—	3.000	2.000	—
4.	հաշվետու անձինք	—	—	1.500	1.500	—	—
5.	զրամարկի . . . . .	2.000	—	2.000	2.500	1.500	—
6.	տնտեսական ֆոնդ	—	35.000	—	—	—	35.000
7.	Պեռանկ . . . . .	—	9.000	3.600	2.000	—	7.400
8.	բանվորներ և ծառայողներ . . . . .	—	1.000	1.000	—	—	—
		45.000	45.000	9.500	9.500	42.400	42.400

Այս շրջանառությունների և սալ'դոների տեղեկագիրը հնարավորություն է տալիս դիտելու տվյալ ժամանակամիջոցում յուրաքանչյուր հաշվի համաձայն շրջանառությունները՝ գումարային արտահայտությամբ: Դրա շնորհիվ կարելի լինի բաղդատության դեմ այս ժամանակամիջոցի շրջանառությունների գումարները՝ այլ ժամանակամիջոցների շրջանառությունների գումարների հետ, ինչպես նաև նախագծված տնտեսական պլանի հետ:

Վերջապես, շրջանառությունների և սալ'դոների տեղեկագիրն ափսիս մեծ տեխնիկական նշանակություն ունի այն տեսակետից, վոր նա վորոշ չափով ծառայում է գործառնությունների գումարի գրանցման ճշտություն թվաբանական ստուգմանը: Ինչպես տեսանք, գրանցման ճշտության ձևական հատկանիշ է ծառայում բոլոր հաշիվների հավաքական ամբողջության դեբետային և կրեդիտային գումարների հավասարությունը: Իհարկե՝ այս դեպքում ել հնարավոր են սխալ գրանցումներ, բայց վոչհամապատասխան հաշիվների:

Նկատենք նաև, վոր սալ'դոյի իտոգը և շրջանառության իտոգը ելապես տարբերվում են միմյանցից: Յեվ իսկապես: Սալ'դոյի իտոգները, առ սկզբին և առ վերջն գործառնությունների ցույց են տալիս հաշվեկշռի առանձին հաշիվների մնացորդները: Հետևաբար, նրանք անդրադարձնում են դրամական հաշվարկմամբ տնտեսական դանդաղների և նրանց աղբյուրների վորոշ գումարը:

Ընդհակառակն, դեբետային և կրեդիտային գումարների իտոգներն, ընդհանուր հավաքականությամբ տնտեսական վորոշ դանդաղներ չեն արտահայտում: Նրանք ներկայացնում են ակտիվային և պասսիվային հաշիվների, միասին վերցրած, գումարային խմբական իտոգը: Նրանք ցույց են տալիս ակտիվային և պասսիվային, միասին վերցրած, հաշիվների շրջանառությունների ընդհանուր մեծությունը:

ԳՐԱՆՑՄԱՆ ԱՂՅՈՒՍԱՆԱՅԻՆ ՍԵՆՄԱՆ

Պրակտիկայում, զլխավորապես փոքր տնտեսություններում հաշվառք տանելու պայմաններում, մեծ

չափով տարածված է գրանցման աղյուսակային սխեման: Ինչհետև և կայանում այդ սխեման:

Գրանցման աղյուսակային սխեման նրանում և կայանում, վոր ակտիվի և պասսիվի հաշվառքին հատկացված բոլոր հաշվային աղյուսակները շարադասվում են իրար կողքի՝ մի ծավալուն թերթի վրա: Յուրաքանչյուր հաշվային աղյուսակի համար հատկացվում է առանձին սյունակ, վոր իր հերթին բաժանված է լեզու մասի, մի մասը հատկացվում է դեբետային փոփոխությունների գրանցման համար, իսկ մյուս մասը՝ ակտիվ հաշվի կրեդիտային փոփոխությունների գրանցման համար: Դրա հետևանքով, լրակատար հնարավորություն կա չափազանց հեշտութամբ ըմբռնելու գործառնությունների առանձին գումարների դասավորությունը, ըստ հաշվային աղյուսակների: Քանի վոր սյունակների թվի շատությունը դեպքում անհնարին չի գործառնությունների գումարների գրանցումը մի սյունակի փոխարեն մյուս սյունակում, կամ վորոշ գումարների բաց թողնելը, ուստի ստուգման համար մտցվում է մի լրացուցիչ սյունակ վորտեղ նշանակվում է լրացման գործառնության գումարը՝ ժամանակագրական կարգով վարժություն համար ոգտվենք վերը բերած թը վական որոնակով:

Գործառնության բերած գումարները բոլոր հաշիվն՝ բում գրանցելուց հետո, գրանցման աղյուսակային սխեման կարելի չէ ներկայացնել հետևյալ ձևով:  
(Տես հաջորդ յերեսի աղյուսակը):

Աղյուսակային գրանցման կազմության ելու թյունն ու տեխնիկան բացատրելուց հետո, քննենք այժմ, թե ինչհետև և կայանում գրանցման այդ սխեմայի առավելությունները:

Գրանցման աղյուսակային սխեմայի որինակ

№	մ-րտե-ում -տղոկ չոմ-ի -աղյուսակ	արտ-սոր բախրում	սյու-թեր	պարտա-սարտադր.	ղրամար-կշի	հաշվետու-անձինք	Պետրանկ	բան-գր-և-ծառ.		տնտեսա-կ-ֆունդ
								+	-	
Ս-լ-գ-ր	45,000	30000								35000
1	1,500		8000	5000	2000		9,000		1000	
2	2,000				2000	1,500				
3	3,000						2,000			
4	1,400			3000				3,000		
5	1,000								1000	
6	500									500
7	100						100			100
	54,500	30000	9400	5000	4000	1500	11000	3,600	1000	35000

տղց-դեմս  
ողղ մղ.սղ  
-աղյուսակ

Գրանցման աղյուսակային սխեմայի առավելու-  
թյունն ամենից առաջ նրա պարզութիան մեջ է: Աղ-  
յուսակային սխեման իր կառուցմամբ չափազանց պարզ  
է: Սրանից ել առաջանում է նրա հարմար տեսանե-  
լիութունը: Հաշվային բոլոր աղյուսակներն այստեղ  
դասավորված են թիկնույն թերթի վրա: Դրա շնորհիվ  
հնարավոր է լինում միանգամից ընդգրկել բոլոր փո-  
ժառնությունները, վորոք իրենց հերթին բախված են  
ըստ վորոշ կլասիֆիկացիոն հատկանիշների, այսինքն՝  
անց են կացված առանձին հաշիվներում՝ դերետային  
և կրեդիտային սյունակներում:

Գրանցման աղյուսակային սխեմայի առավելու-  
թյունը նաև այն է, վոր նա տնտեսում է ժամանակն  
ու աշխատանքը: Միայն այն հանգամանքը, վոր հաշ-  
վային բոլոր աղյուսակները դասավորված են թերթի  
մի ծավալուն յերեսում և մեկը մյուսի կողքին՝ ազա-  
տում է հաճախ առանձին հաշիվները վորոնելու. քրթ-  
տնաջան աշխատանքից վորոնք հաճախ միմյանցից  
հեռու լին ընկած լինում: Գրանցումն ել ավելի հեշ-  
տանում է և ավելի ցիչ ժամանակ ու աշխատանք է  
խլում:

Վերջապես, գրանցման աղյուսակային սխեման  
այն հարմարությունն էլ ունի, վոր հեշտացնում է ա-  
ռանձին հաշիվները դերետային և կրեդիտային սյու-  
նյակներում ճիշտ անցկացնելու վրա հակելը և ստու-  
գելը: Բավական է հաշվել առանձին հաշիվների դեր-  
տային և կրեդիտային գումարների խոզաները և մենք  
կունենանք կոնտրոլային, շրջանառության տեղեկա-  
զիր: Դերետային և կրեդիտային գումարների խոզ-  
աները պետք է հավասար լինեն միմյանց: Բացի այդ,

նրանցից յուրաքանչյուրն, առանձին վերցրած, պետք  
է համատեղվի գործառնությունների կանտրոլային  
գումարների խոզի հետ:

Այժմ տեսնենք՝ ինչ պակասություններ ունի զը-  
րանցման աղյուսակային սխեման:

Գրանցման աղյուսակային սխեմայի պակասու-  
թյունների շարքը պետք է դասել ամենից առաջ հա-  
շիվների թվի ստիպողական սահմանափակումը: Քանի  
վոր բոլոր հաշիվները զետեղվում են մի թերթի վրա  
մեկը մյուսի կողքին, ապա, բնական է, վոր նրանց  
թիվը անխուսափելիորեն պիտի սահմանափակվի:  
Գործնականում գրանցման աղյուսակային սխեմայով  
սպասվում են գլխավորապես այն տնտեսություններում,  
վորոնց հաշիվներ թիվը 15—20-ից չի անցնում և վոր-  
տեղ հենց իրենք՝ հաշիվները իրենց բնույթով վորոշ  
չափով միատեսակ են:

Մասնից հետևում է գրանցման աղյուսակային  
սխեմայի մյուս անհարմարությունը: Յեթե բոլոր հաշ-  
վային աղյուսակները մի ծավալուն յերեսի վրա տե-  
ղավորելը վորոշ դեպքերում աղյուսակային գրանցման  
առավելությունն է հանդիսանում, ապա մեծ թվով հա-  
շիվներ սանելու անհրաժեշտության դեպքում, այդ ա-  
ռավելությունն իր հակապատկերին է փոխվում:

Շատ թվով հաշիվներ ունենալու դեպքում գոր-  
ծառնությունների գումարների մի սյունակի փոխարին  
մյուսում գրանցելու հավանականությունը շատանում  
է: Հաշվային սյունակների շատության շնորհիվ նը-  
րանք խառնվում են աշխատողի աչքերի առջև: Կարիք  
չկա ավելացնելու, վոր այս դեպքում, բացի այդ կարիք  
է զգացվում թղթի ավելի շատ ծախքեր ունենալու, վոր

նույնպես անհարմար ե դարձնում աղյուսակային սխեմայով ոգտվելը: Ուստի, այսպիսի դեպքերում չի հանձնարարվում գրանցման աղյուսակային սխեմայով օգտվելը:

Գրանցման աղյուսակային սխեման գործնականում ավելի հայտնի յե ամերիկական ձև կամ «ամերիկական» անունով: Ամերիկական ձև անունը կարող ե յենթադրել տալ թե այդ ձևը ամերիկացիների ըստեղծագործությունն արդյունք ե: Իրապես, գրանցման այսպես կոչված, ամերիկական ձևն իր տեսաբանական հիմնավորումն ստացել ե մոտ կես դար առաջ Ֆրանսիայում, վորտեղ նա առաջին անգամ կիրառվեց, իսկ հետո անցավ Գերմանիա: Դրանից հետո արդեն տեղափոխվեց Ամերիկա ե արագ կերպով տարածվեց այնտեղ, առանձնապես՝ Հյուսիսային Ամերիկայում:

Ներկայումս ամերիկական ձևի շատ փոփոխականներ կան: Այդ փոփոխականների (վարիանտ) հիմնական կոչումն ե, հարմարեցնել ամերիկական ձևը պրակտիկ գործածությունը, յեթե մեծ թվով հաշիվների հետ գործունենք: Քննենք այդ փոփոխականներից մի քանիսը:

Հիմնական թերթին կպցնում են լրացուցիչ կիսաթերթեր, վորոնց վրա դասավորվում են առանձին հաշիվները: Յերբեմն մի հաշվային սղունակը հատկացվում ե յերկու հաշիվ այս դեպքում գրանցումները տարբերվում են նրանցով, վոր տարբեր գույնի թանաքներով են կատարվում:

Կա նաև այսպիսի փոփոխակ: Մի բնյատրի փոխարեն գրանցումների համար պահվում ե յերկու բնյատր: Առաջին բնյատրը հատկացվում ե դերետային գրանցումներին, ուստի պարունակում ե միայն գերե-

տային մասի բոլոր հաշիվները: Յերկրորդ բնյատրը հատկացվում ե կրեդիտային գրանցումներին, ուստի պարունակում ե միայն կրեդիտային մասի բոլոր հաշիվները:

Այսպիսով՝ գրանցման աղյուսակային սխեման կարծես մասնատվում ե: Դերետային գրանցումներն ընկնում են թերթի մի կողմում, իսկ կրեդիտայինը՝ մյուս:

Սակայն այս բոլոր վարիանտները առանձին մեծ եֆեկտ չեն տալիս ե չեն փոփոխում մեր յեզրակացությունն այն մասին, վոր ամերիկական ձևը հաջողությամբ կիրառվում ե միայն այն տնտեսություններում, վորոնք աննշան թվով հաշիվներ ունեն ե գործառնությունները տիպերն ել համեմատաբար ավելի միորինակ են:

### ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ութերորդ թեման, հիմնականում նվիրված ե հաշվառքային գրաֆիկայի տարրերին: Ուստի, այստեղ տրվում են հնացած շատ գրաֆիկական տրաֆարետներ, վորոնք սակայն անհրաժեշտ են ժամանակակից հաշվառքի հենց տեխնիկայի հիմնական մոմենտները յուրացնելու համար: Նախ՝ առաջադրվում ե ծանոթանալ վերկողմանի սխեմայով հաշվային աղյուսակների պատկերավորման, ավանդական, գործնականում ընգունված ձևին: Առանձին գործառնությունների գումարները հաշվային աղյուսակների առանձին հաշիվների մօջ գետեղելու տեխնիկան լավագույն կերպով յուրացնելու համար հանձնարարվում ե սկզբնական շրջանում համապատասխանաբար պլյուս կամ մինուս նը-

շաներ զնել աղյուսակների առանձին կողմերում: Պարզելու ժամանակ, թե հաշվալին աղյուսակների վճիռ կողմը, պայմանական գրանցումների հիման վրա դերետային և հանդիսանում և վճիռ կողմը՝ կրեդիտային: Առանձնապես անհրաժեշտ և ուսանողին նախադգուշացնել, վճիռ նա դեբետը և կրեդիտը մեխանիկորեն չպատկերացնի, վճիռն հաշվալին աղյուսակների համապատասխանորեն ձախ և աջ կողմեր: Դեբետի և կրեդիտի այդպիսի հասարակ, վուզար բացատրությունը, վճիռ, ամոթով պիտի ասենք, խիստ տարածված և հաշվառքի պրակտիկներից շատերի մեջ և պաշտամունք դառնա՞ծ, հաշվառքի հին թեորեատիկների համար, արմատապես սխալ բացատրություն և: Մենք արդեն տեսանք, վճիռ դեբետն ու կրեդիտը հաշվալին աղյուսակի կողմեր չեն, այլ պայմանական նշանակությունների, վճիռն քանտեսական գործառնությունների ազդեցություն տակ առաջ են գալիս հաշվեկշռի առանձին մասերում: Հաշվալին աղյուսակավորման պայմանական գրաֆիկ պրիտի հետևանքով միայն դեբետային փոփոխությունները կենտրոնանում են ձախ կողմում, իսկ կրեդիտայինը՝ աջում: Այս հանգամանքը միանգամայն առիթ չի տալիս հաշվեկշռի դեբետային և կրեդիտային փոփոխությունները նույնացնելու՝ հաշվալին աղյուսակների ձախ և աջ կողմերի հետ: Դեբետ և կրեդիտ հասկացությունները չեն պայմանավորված հաշվալին աղյուսակների առանձին կողմերով և գոյություն ունեն նրանցից անկախ: Այսպիսով, գործառնությունների գումարների դասավորման արտաքին ձևը չի կարելի խառնել տնտեսական գործառնությունների առաջ բերած՝ հաշվեկշռային փոփոխությունների ներքին բովանդականություն և բնույթի հետ:

Դրանից հետո թեմայում պարզաբանվում և դրա գրաֆիկ դրանցումների տեխնիկական մեթոդի ելույթունը և ընդձվում նրա պայմանականությունը: Այդ մեթոդի հիման վրա բացատրվում և գրանցումների ավտոմատիկ կանտրոլը: Այնուհետև վերլուծվում և շրջանառությունների և սալդոների տեղեկագրերը և հիմնավորվում դեբետի և կրեդիտի իտոգները, ինչպես և հաշիվների ընդհանուր հավաքականություն մեջ՝ դեբետի սալդոների և կրեդիտի սալդոների հավասարությունը: Թեման վերջանում և գործնականում ամերիկական ձևի անվան տակ հայտնի՝ գրանցման աղյուսակային սխեմայի առավելությունների և պակասությունների վերալուծությունը:

#### ԿԱՆՏՐՈԼԱՑԻՆ ՀԱՐՑԵՐ

1. Ինչձևն և կաշանում հաշվալին աղյուսակներում գումարման և հանման տեխնիկական պրիտը:
2. Ինչպիսի չե ակտիվի և պասսիվի հաշվառքին հատկացված հաշվալին աղյուսակների կառուցվածքը
3. Հաշվալին աղյուսակների վճիռ կողմը, գումարների պայմանական զետեղման հետևանքով, հաշվի դեբետային մասն և հանդիսանում և վճիռ կողմը՝ կրեդիտային:
4. Ինչձևն և դրա գրաֆիկ գրանցումների մեթոդի ելույթունը
5. Ինչի՞ վրա չե հիմնված հաշիվների ընդհանուր հավաքական ամբողջություն մեջ դեբետի և կրեդիտի իտոգների հավասարությունը:

320

6. Ի՞նչ խմբերի լին լաժանվում հաշվեկշռի հաշիվները՝ իրենց սալճոնների տեսակետից:

7. Ի՞նչպես է շրջանառությունների և սալճոնների կոնարոլային տեղեկագրի կառուցվածքը:

8. Վորժնք են ամերիկական ձևի առավելություններն ու պակասությունները:



24.541